

ՄԵԾԱՅԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԵՎ ՈՐՈՊԱՅՈՒՄ, ԳՅՈՒՄԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԵՎ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Տարածաշրջանային Ամփոփ Զեկույց

Հելեն Քյոխ

Չեղինակը պատասխանատու է սույն հրապարակման մեջ գետեղված փաստերի ընտրության և ներկայացման, ինչպես նաև արտահայտված կարծիքների համար, որոնք չեն հանդիսանում ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպության (ՄԱԿԳՄԿ, այսուհետ՝ UNESCO) և ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտի (ՑՈՒԻ) տեսակետներ և չեն ներկայացնում Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները:

Սույն զեկույցում ներկայացված նյութերը և կիրառված անվանումները չեն արտահայտում ՅՈՒՆԵՍԿՈ-ի կամ ՑՈՒՆԵՍԿՈ-ի ՑՈՒԻ կարծիքը կապված որևէ երկրի կամ տարածքի իրավական կարգավիճակի, կամ դրանց իշխանությունների կամ որևէ երկրի կամ տարածքի սահմանների սահմանագծման հետ:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտ, 2009թ.

Գեմանիա, Չամբուրգ 20148

Ֆելդբրունենշթրասսե 58

ISBN 978-92-820011650-2

2007թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ի անդամ բոլոր երկրներին խնդրեցին զեկույցներ կազմել իրենց երկրներում մեծահասակների ուսումնառության և կրթության վիճակի և 1997թ. ի վեր մինչև Մեծահասակների Կրթության Հինգերորդ Միջազգային Համաժողովը (այսուհետ՝ ԿՈՆՖԻՆՏԵԱ V) տեղ գտած նշանակալի զարգացումների վերաբերյալ՝ ի նախապատրաստումն Մեծահասակների Կրթության Վեցերորդ Միջազգային Համաժողովի (ԿՈՆՖԻՆՏԵԱ VI): Կազմվեցին Ազգային Ձեկույցների կազմման մի շարք Ուղեցույցեր, որոնցում առաջադրված էին հարցեր, որոնք պետք է օժանդակեին զեկույցների կազմմանը, դրանք լրացվեցին և ներկայացվեցին ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտ:

Ազգային զեկույցները կարելի է ձեռք բերել Ինստիտուտի վեբ կայքից՝

<http://www.unesco.org/uil/en/nesico/confintea/confinteacountries.htm>

Հելեն Քյոխի կողմից, ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտի համար կազմված սույն զեկույցում փորձ է արվում ամփոփ և արդար կերպով շարադրել Անդամ երկրների զեկույցները, նպատակահարմարության դեպքում, օգտագործելով նաև այլ աղբյուրներ, զեկույցներ և հետազոտական փաստաթղթեր:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտ, 2009թ.

Գեմանիա, Համբուրգ20148

Ֆելդբրունենշթրասսե 58

Հեռ: +49(0) 40 44 80 41-0

Նաքս: + 49(0) 40 410 77 23

uil@unesco.org

www.unesco.org/ui

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	7
Բովանդակություն և ոլորտ	7
Աղբյուրներ և սահմանափակումներ.....	11
Քաղաքականությունը և Ղեկավարման Համատեքստը/Միջավայրը.....	12
Գերպետական ազդեցությունները տարածաշրջանում քաղաքական ուղղությունների ձևավորման գործընթացների վրա	14
Ազգային քաղաքականության մշակում	17
Մեծահասակների Կրթության և Ուսումնառության (ՄՀԿՈՒ) կառավարում.....	21
Օրենսդրական դաշտ	30
ՄՀԿՈՒ Ֆինանսավորում.....	31
ՄՀԿՈՒ ներդրումները տարածաշրջանում	34
ՄՀԿՈՒ ոլորտում ներդրումների խթանում.....	42
Մասնակցություն Մեծահասակների Կրթությանը և Ուսումնառությանը	45
Տարածաշրջանում մեծահասակների կրթական նվաճումները.....	45
Մասնակցությունը ՄՀԿՈՒ-ում	48
ՄՀԿՈՒ առաջնային թիրախ խմբեր	50
ՄՀԿՈՒ մասնակցության խոչընդոտների հաղթահարում.....	53
Մեծահասակների Կրթության և Ուսումնառության Տրամադրում.....	58
Ի՞նչ է մեծահասակների ուսումնառությունը.....	61
«Երկրորդ հնարավորություն ընձեռող» ՄՀԿՈՒ.....	62
Ստորին և վերին միջնակարգ կրթությանը համարժեք որակավորումներ	63
Տառաճանաչության ուսուցանում	65
Մասնագիտական ՄՀԿՈՒ	72
Հանրամատչելի/լիբերալ ՄՀԿՈՒ	76
Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ-ներ).....	80
Կրթության իրականացում միգրանտների համար	81
Մեծահասակների բարձրագույն կրթություն.....	83
Մեծահասակների Կրթության և Ուսուցման ճանաչում.....	85
Որակավորումների Եվրոպական Շրջանակ.....	86

Որակավորումների ազգային համակարգեր.....	87
Ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության վավերացում.....	89
Մեծահասակների կրթության և ուսումնառության Որակը	95
Որակի ապահովման մեխանիզմներ.....	98
Աշխատակիցների որակավորումներ և հմտություններ.....	102
Մեծահասակների կրթության և ուսումնառության ոլորտի հետազոտություններ	109
Մեծահասակների կարողություններ	110
Եզրակացություն	113
Հանձնարարականներ	122
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	126
Հավելված 1.	127
Հավելված 2.	128
Հավելված 3.	129
Հավելված 4.	137
Մատենագրություն	144

Ներածություն

Բովանդակություն և ոլորտ

Սույն տարածաշրջանային զեկույցում ներկայացված են մեծահասակների կրթության և ուսումնառության ոլորտի զարգացումները Եվրոպայի, Հարավային Ամերիկայի և Իսրայելի ՅՈՒՆԵՍԿՈ-ի տարածաշրջանում (Հավելված 1): Ձեկույցը կազմվել է Անդամ պետությունների զեկույցների (Հավելված 2) հիման վրա: Այն հանդիսանում է Մեծահասակների Ուսումնառության և Կրթության (ՄՀԿՈՒ) Համընդհանուր Ձեկույցի մի մաս, որտեղ ներկայացված է 2009թ. ԿՈՆՖԻՆՏԵԱ VI-ը (Հավելված 3-ում բերված են Անդամ պետությունների ակնկալիքները ԿՈՆՖԻՆՏԵԱ VI-ից):

ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի *Համբուրգի Հռչակագրում* մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը սահմանված է հետևյալ կերպ.

Մեծահասակների կրթությունն նշանակում է ֆորմալ կամ այլ տիպի ուսումնառության շարունակական գործընթացների ամբողջություն, որի միջոցով տվյալ հասարակության կողմից մեծահասակ համարվող մարդիկ զարգացնում են իրենց կարողությունները, հարստացնում են իրենց գիտելիքները, կատարելագործում են իրենց տեխնիկական կամ մասնագիտական որակավորումները, կամ փոխում են մասնագիտական ուղղվածությունը՝ իրենց սեփական կամ տվյալ հասարակության կարիքներին համապատասխան: Մեծահասակների կրթությունն իր մեջ ներառում է ֆորմալ կրթությունը, շարունակական կրթությունը, ոչ ֆորմալ ուսումնառությունը և ինֆորմալ, կամայական բնույթի ուսումնառությունը, որը մատչելի է բազմամշակույթ ուսումնառու հասարակություններում, որտեղ ընդունված են տեսության և գործնականի վրա հիմնված մոտեցումները (ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կրթության ինստիտուտ 1997 ա):

ՄՀԿՈՒ-ն տարաբնույթ է: Այն իր մեջ ներառում է մեծահասակների կրթության և ուսումնառության լայն շրջանակ, որին բնորոշ են տարբեր համընդհանուր կառույցներ, գերակայություններ, նպատակներ, կրթություն իրականացնող

հաստատություններ, ուսումնառության բովանդակության բազմազանություն, տարբեր կազմակերպական ձևեր, տևողություն և ուսումնառության արդյունքներ:

Ազգային զեկույցների և, հետևաբար, նաև սույն զեկույցի առանցքը ՄՅԿՈՒ-ն է՝ որպես ֆորմալ և ոչ ֆորմալ համատեքստում ուսումնառության և դասավանդման կազմակերպված գործընթաց: Չնայած զեկույցում արծարծված են ՄՅԿՈՒ-ի տարբեր կատեգորիաներ, սակայն իրականում, մեծահասակների ուսումնառության տիպերը մասամբ համընկնում են և հաճախ հստակ տարբերակված չեն: Սովորելու ընթացքում մեծահասակները չեն հետևում հստակ սահմանված վարչական կամ այլ կարգերի: Նրանց նպատակները միշտ չէ, որ համընկնում են ֆինանսավորող կամ կրթություն իրականացնող կազմակերպության նպատակներին: Հաճախ մեծահասակներն իրենց ուսումնառության արդյունքում ձեռք են բերում չնախատեսված կամ անսպասելի արդյունքներ կամ կիրառում: Ավելին, աստիճանաբար ձևավորվող գիտելիքի հասարակությանը բնորոշ կարևոր առանձնահատկությունը անհատների և ձեռնարկությունների կողմից, համայնքներում և տարածաշրջաններում իրականացվող ուսումնառության բոլոր բաղադրիչների փոխկապակցվածությունն է:

Ընդունելով այն փաստը, որ միևնույն տարածաշրջանի կրթության և ուսուցման համակարգերը հիմնված են տարբեր ավանդույթների վրա՝ սույն զեկույցում ՄՅԿՈՒ ոլորտի տարբեր եզրերին բնորոշ առանձնահատկություններն ու միտումները ներկայացված են ընդհանուր գույներով, այսինքն՝ նկարագրվում են ՄՅԿՈՒ ոլորտի քաղաքականությունը, կառավարումն ու օրենսդրությունը, ֆինանսավորումը, մասնակցությունը, ՄՅԿՈՒ-ի հասանելիության շրջանակը, ուսումնառության հնարավոր տարբերակները, ուսումնառության արդյունքներն ու դրանց ճանաչումը, որակը և ՄՅԿՈՒ-ի վերաբերյալ հետազոտությունները: Այս մոտեցման կիրառումը չի նշանակում, որ չեն ընդունվում տարածաշրջանի երկրների ներսում կամ նրանց միջև գոյություն ունեցող ներկա, ինչպես նաև պատմականորեն ձևավորված քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրականության երբեմն խորը տարբերությունները, որոնք բոլոր երկրներում իրենց ազդեցությունն են թողնում ՄՅԿՈՒ-ի վրա: Իսկապես, որևէ տարածաշրջանի ՄՅԿՈՒ ոլորտի մասին պատկերացում կազմելու համար չափազանց կարևոր է մտապահել, որ քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համատեքստերը տարբեր են:

Տարածաշրջանում ՄՅԿՈՒ ոլորտն ընդգրկում է տարբեր համատեքստեր, և, հետևաբար, ՄՅԿՈՒ-ի նկատմամբ սահմանված պահանջները բավականին տարբեր են: Առավել զարգացած արդյունաբերություն ունեցող երկրները նշում են, որ գլոբալ արտադրության և հաղորդակցության, կազմակերպչական նոր գործելակերպերի, տեխնոլոգիական առաջընթացի, ոլորտային փոփոխությունների, բնակչության տարիքային աճի, աշխատանքի և անհրաժեշտ հմտությունների պակասի և անհամապատասխանության, ինչպես նաև միլիոնավոր աշխատողների անբավարար հմտությունների պայմաններում անհրաժեշտ է բարձրացնել արտադրողականությունն ու մրցունակությունը, սոցիալական ապահովագրության անառողջ համակարգերի և սոցիալական մասնատվածության, ցածր և բարձր վաստակ ունեցողների միջև աճող տարբերությունների, ներգաղթի աճի պայմաններում անհրաժեշտ է պահպանել սոցիալական համախմբվածությունն ու ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև ապահովել բնական պաշարների կայուն զարգացում և պահպանում: Անցումային փուլում գտնվող և զարգացող երկրները ընդգծում են քաղաքական և քաղաքացիական վերջին գծությունները, որոնք որոշ վայրերում անկայուն վիճակ են ստեղծում, բևեռացված հասարակությունների, քանդված ենթակառուցվածքների և աղքատության առկայությունը, ժողովրդավարական գործելակերպեր և կառույցներ ստեղծելու դժվարությունները, ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտ ստեղծելու անհրաժեշտությունը, շուկայական տնտեսության անցնելու դժվարությունները, մասնավոր հատվածը հզորացնելու և առավել բարձր մակարդակի մակրոտնտեսական կայունության ու կայուն զարգացման հասնելու անհրաժեշտությունը, չձևավորված աշխատաշուկայի առկայությունը, գործազրկության/երկարատև գործազրկության բարձր մակարդակը և աշխատուժի կրթության ու հմտությունների ցածր մակարդակը, որակյալ աշխատուժի արտահոսքը, բնակչության ծերանալու փաստը և սոցիալական ու առողջապահական արդյունավետ համակարգեր ստեղծելու անհրաժեշտությունը:

Սակայն տարածաշրջանի բոլոր երկրներին բնորոշ է համընդհանրացման (գլոբալիզացիա) ենթարկված տնտեսությունների, կապի համակարգերի և մարդկային ու մշակութային հեռանկարների արագ փոփոխության ընդհանուր միջազգային համատեքստը, որտեղ առանցքային ռեսուրսը գիտելիքն է և հնուտ

աշխատուժի ու ակտիվ քաղաքացու կարիքը հանգեցնում է բոլոր մակարդակներում կրթության նկատմամբ պահանջարկի աճի:

Գերպետական կառույցը՝ Եվրոպական Միությունը (ԵՄ), առանցքային դեր է կատարում ՅՈՒՆԵՍԿՈ-ի տարածաշրջանի շատ երկրներում ՄՀԿՈւ ոլորտի զարգացման գործում՝ Լիսաբոնի օրակարգում ամրագրված ցկյանս ուսումնառության քաղաքականությունների, նպատակների և ուղղությունների միջոցով, որոնք ամփոփվել են «2010թ. Կրթություն և ուսուցում» ծրագրում: Եվրոպական Միությունը կազմված է 27 Անդամ պետությունից: **Իսլանդիան և Նորվեգիան** սերտորեն աշխատում են ԵՄ-ի հետ «2010թ.Կրթություն և ուսուցում» և «Միության ցկյանս ուսումնառություն» ծրագրերի շրջանակում: **Շվեյցարիան** մասնակցում է ԵՄ Բոլոնիայի (բարձրագույն կրթություն) և Կոպենհագենի (մասնագիտական կրթություն և ուսուցում) գործընթացներին և «Ցկյանս ուսումնառության» ծրագրին: Յոթ պետություններ (**Թուրքիա և Հարավ-արևելյան Եվրոպայի երկրներ**) Եվրոպական Միության անդամակցության թեկնածու են և քայլեր են ձեռնարկում իրենց քաղաքականություններն ու գործելակերպը ԵՄ-ի քաղաքականություններին ու գործելակերպերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ձեկույցում «ԵՄ-27+» տերմինը օգտագործվում է ցույց տալու ԵՄ-ի՝ 27 գումարած բոլոր մյուս երկրները, կամ դրանցից մի քանիսը (կախված համատեքստից)՝ **Իսլանդիա, Նորվեգիա, Թուրքիա, Խորվաթիա և Մոնտենեգրո**: Վերջին երեք երկրներն արդեն ստացել են ԵՄ անդամակցության թեկնածուի պաշտոնական կարգավիճակ: **Իսրայելն** ու **Վրաստանը և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) հինգ** երկրներ մասնակցում են Միության «Եվրոպական հարևանության քաղաքականությանը», որն աջակցում է մարդկային ռեսուրսների զարգացմանը: **Ռուսաստանի Դաշնությունը** հատուկ Ռազմավարական գործընկերություն է հաստատել Միության Մարդկային Ռեսուրսների Վարչության հետ: Եվրոպական ընդլայնման քաղաքականությունների շրջանակներում, ԵՄ գործակալություններից մեկը՝ Եվրոպական Կրթական Հիմնադրամն (ԵԿՀ) անցումային փուլում գտնվող երկրներին աջակցություն է տրամադրում իրենց մարդկային ռեսուրսները զարգացնելու գործում՝ բարգավաճելու, կայուն զարգացում ապահովելու և հասարակության ներգրավումը խրախուսելու նպատակով: Այսպիսով, այնպիսի

մեխանիզմներ, ինչպիսիք են՝ Անդամակցության նախնական համաձայնագրեր և Եվրոպական Հարևանության Ծրագիր, հանդիսանում են ԵՄ-ի կողմից խրախուսվող ցկյանս ուսումնառության քաղաքականության և գործելակերպերի անցնելու երթուղիներ:

Աղբյուրներ և սահմանափակումներ

Սույն զեկույցի համար սկզբնաղբյուր են հանդիսացել տարածաշրջանի 38 երկրների ազգային զեկույցները, որոնց կցվել են այլ աղբյուրներից ստացված լրացուցիչ նյութեր:

Ազգային զեկույցներում տեղ գտած որոշակի թերություններ ազդել են այս զեկույցի վրա: Առաջին՝ ազգային զեկույցներում հիմնականում ներկայացված է ՄՅԿՈՒ վիճակը տվյալ երկրում 2008թ. դրությամբ, և ներկայացված չեն տվյալ ոլորտի՝ 1997թ. ի վեր տեղ գտած զարգացումները: Երկրորդ՝ որոշ երկրների համար մեծ խնդիր է ՄՅԿՈՒ ոլորտի տերմինաբանությունն ու գործունեության դաշտը: Երրորդ՝ որոշ երկրներում, պատմական, քաղաքական և կրթական, ինչպես նաև սահմանափակ ռեսուրսների պատճառով, պետության կողմից ֆինանսավորվող ՄՅԿՈՒ-ն իրականացվում է բավականին ցածր մակարդակով. հիմնականում ուշադրություն է դարձվում նախնական մասնագիտական ուսուցմանն (ԵՄՈՒ) ու դպրոցից ժամանակից շուտ հեռացած երիտասարդների համար «երկրորդ հնարավորության» ապահովմանը: Չորրորդ՝ մի շարք զեկույցներ սահմանափակ կամ ընդհանրապես ոչ մի տեղեկատվություն չեն պարունակում ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի վերաբերյալ, ինչի պատճառ կարող է լինել տեղեկատվության ոչ համակարգված հավաքագրումը կամ/և ոչ ֆորմալ կրթության (պետականորեն կամ այլ աղբյուրներից ֆինանսավորվող) իրականացման չափազանց ցածր մակարդակը: Ավելին, սպասարկման ոլորտը շատ վատ է ներկայացված և որևէ հղում՝ ինֆորմալ ուսումնառությանը չկա: Ի վերջո, տարբեր պարամետրերը և ՄՅԿՈՒ բաղադրիչների վերաբերյալ տարբեր մեկնաբանությունները խնդիրներ են առաջ բերում վիճակագրության առումով: Այսպիսով, սույն զեկույցը հիմնված է միջազգայնորեն համաձայնեցված վիճակագրական տվյալների վրա՝ տարածաշրջանում ՄՅԿՈՒ ծավալն ու բաշխվածությունը նկարագրելու համար:

Քաղաքականությունը և Ղեկավարման Համատեքստը/Միջավայրը

2-րդ թեմայի շրջանակներում. Մեծահասակների ուսումնառության պայմանների և որակի բարելավում.

ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի պատվիրակները պարտավորվում են ճանաչել մեծահասակների ուսումնառությունը խթանելու գործում պետության և սոցիալական գործընկերների նոր դերը,

երաշխավորելով բոլոր գործընկերների կողմից՝ համապատասխան կանոնադրական շրջանակների ստեղծման գործում իրենց փոխադարձ պատասխանատվության ճանաչումը՝ ապահովել մատչելիություն և անկողմնակալություն, ստեղծել մոնիթորինգի և համակարգման մեխանիզմներ և մասնագիտական օգնություն տրամադրել քաղաքականություն մշակողներին, հետազոտողներին և ուսումնառուներին՝ ռեսուրսները միմյանց փոխանցելու միջոցով:

(Ապագայի օրակարգ, Պարբ. 23 (ա), էջ 15

ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կրթության ինստիտուտ (1997թ))

11 տարի անց վիճելի է, թե որքանով են իրականացվել ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի ստանձնած պարտավորությունները: 2002թ. Սոֆիայի Հռչակագրում նշված է, որ «(տարածաշրջանի) շատ երկրներ չունեն Մեծահասակների կրթության առաջախաղացման համար անհրաժեշտ քաղաքականություններ, շրջանակներ և կառույցներ: Այդ պահանջներն են՝ նոր օրենսդրական դաշտ, բավարար ֆինանսական աջակցություն, համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ, արդյունավետ վարչական համակարգ, որակի շրջանակներ և պայմաններ, որոնք անհրաժեշտ են արդյունավետ գործընկերության ու շահերի պաշտպանության աջակցության համար» (Մեդել-Անոնովո, 2003): 2006թ. Եվրոպական Հանձնաժողովը հայտարարեց, որ ԵՄ-ում «մեծահասակների ուսումնառությունը ոչ միշտ է արժանի ճանաչում գտել տեսանելիության, քաղաքականության գերակայությունների սահմանման և ռեսուրսների առումով» (Եվրոպական Հանձնաժողով, 2006 ա): Նույն տարում 34 երկրների գործատուներ ներկայացնող ԲԻՉՆԵՍԵՎՐՈՊԱՆ կոչ արեց

միացյալ մոտեցում կիրառել Ցկյանս ուսումնառության նկատմամբ, մշակել կարողությունների զարգացմանն ուղղված քաղաքականություններ, որոնք կհանգեցնեն ներդրումների աճի, կարևորել հատուկ հմտությունները և/կամ խմբերին ու կիրառել գործընկերային մոտեցումներ, ինչպես նաև ապահովել տեղեկատվության մատչելիություն և ուղղորդում (Հիգամ, 2006): 2007թ. Հանձնաժողովը վերահռչակեց, որ ցկյանս ուսումնառությունը «կարիք ունի առավել մեծ ճանաչման՝ տեսանելիության, քաղաքականության գերակայությունների սահմանման և ռեսուրսների առումով» (Եվրոպական Հանձնաժողով, 2007ա):

2008թ. սկզբին Եվրոպական Հանձնաժողովի՝ «2010թ. Կրթություն և ուսուցում » ծրագրի առաջընթացի զեկույցում նշված է, որ ԵՄ-ում ցկյանս ուսումնառության ռազմավարություններում առկա են կապակցվածության, համակարգման և լիարժեքության զգալի անհամապատասխանություններ: Ձեկույցում Մասնագիտական կրթությունն ու ուսուցումը և Մեծահասակների ուսումնառությունը ներակայցված են միևնույն Բաժնում: Ձեկույցում նշվում է, որ Մեծահասակների ուսումնառությունը և Մասնագիտական կրթությունը և ուսուցումը հստակ տարանջատված չեն մի շարք երկրների զեկույցներում, որոնց վրա հիմնված է տվյալ զեկույցը (Եվրոպական Հանձնաժողով 2007բ):

ԵՄ-ում ՄՀԿՈւ մարտահրավերները բազմապատկվում են **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում**, որտեղ ցկյանս ուսումնառության մեծահասակների փուլը, քաղաքականապես վերահսկվող, վերևից ներքև սկզբունքով իրականացվող ՄՀԿՈւ համակարգի փլուզումից հետո առաջին անգամ կրկին հայտնվեց քաղաքական հարցերի օրակարգում, մասնագիտական ուսուցման տեսքով՝ գործազրկության բարձր մակարդակը և տնտեսական գործունեության ցածր մակարդակը հաղթահարելու նպատակով: Առաջնային է թերությունների վերացումը հետևյալ ոլորտներում՝ ՄՀԿՈւ կարգավիճակ, քաղաքականություն, օրենսդրություն, սոցիալական գործընկերություն և քաղաքացիական հասարակության ներգրավում, ռեսուրսներ, մասնագիտական կրթություն և ուսուցում և համապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին, որակավորումների թափանցիկություն, աշխատակիցների հմտություններ, քաղաքական ուշադրություն ՄՀԿՈւ-ի նկատմամբ՝ սոցիալական և մշակութային նպատակների իրականացման համար,

ազգաբնակչության շրջանում »սովորելու մշակույթի« ձևավորում: **Իսայելի** զեկույցում նշված է, որ անհրաժեշտ է խրախուսել տառաճանաչություն սովորելու համապատասխան ձևեր, նպաստել մարդկային կապիտալի զարգացմանն ու ընդլայնել միջմշակութային համերաշխությունը: **ԱՄՆ**-ն կարևորում է մեծահասակների հիմնական/տարրական կրթության (ՄՅԿ) և մեծահասակների հանրակրթության (ՄՅ) ոլորտում ներդրումների ծավալների աճը:

Գերպետական ազդեցությունները տարածաշրջանում քաղաքական ուղղությունների ձևավորման գործընթացների վրա

Բոլոր ԵՄ-27+ երկրների զեկույցներում որպես համընդհանուր նպատակ նշված են Լիսաբոնի Օրակարգի երկու փոխկապակցված նպատակները՝ դարձնել Եվրոպան «աշխարհի ամենամրցունակ և ամենադինամիկ, գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը, որին հասու է կայուն տնտեսական աճի, ավելի շատ և ավելի որակյալ աշխատատեղերի, ինչպես նաև ավելի մեծ սոցիալական համախմբվածության ապահովումը»: «Լիսաբոնը» կողմնացույց, ուղղություն և նպատակակետ է, իսկ ցկյանս ուսումնառությունը գործնականում այն լծասարքն է, որը տանում է դեպի գիտելիքի տնտեսություն և գիտելիքի հասարակություն: Ի սկզբանե ակնկալվում է, որ ՄՅԿՈւ-ն ուղղված է լինելու ձեռնարկությունների ներսում կամ դրանցից դուրս կարողությունների զարգացմանն ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորումների ձևավորմանը, որպես կայուն տնտեսական աճի ապահովման նպատակով մարդկային ռեսուրսների զարգացման մաս: Նաև ակնկալվում է, որ ՄՅԿՈւ-ն կնպաստի ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների պահպանմանը և հասարակության ու անհատի զարգացմանը: Նկատելի է, որ ազգային զեկույցներում սահմանափակ ուշադրություն է դարձվել այն հանգամանքներին, որ այդ երկու նպատակների միջև որոշակի հակասություն/լարվածություն կա: Ի դեպ, ազգային զեկույցներում արտահայտված չեն նաև (մեծահասակների) ուսումնառությանը (որը ի տարբերություն (մեծահասակների) կրթության իրականացվել է մասնավոր հատվածի կողմից) վերաբերող պետական քաղաքականության մշակմանը բնորոշ հնարավոր լարվածությունը: ԵՄ մեծահասակների ուսումնառության իրականացման

գործողությունների պլանում (Եվրոպական Հանձնաժողով 2007ա) սահմանված են ՄՀԿՈւ հինգ կոնկրետ գերակա նպատակներ, որոնք են՝

- հաղթահարել աշխատուժի պակասը՝ հմտությունների մակարդակի և բավականաչափ հմտությունների չտիրապետող աշխատողների որակավորումների բարձրացման միջոցով
- երկրորդ հնարավորություն տալ այն անձանց, ովքեր չափահասության փուլ են մտել չունենալով որևէ որակավորում
- նվազեցնել աղքատությունը և տարբեր խմբերի սոցիալական բևեռացումը
- բարձրացնել միգրանտների ինտեգրման մակարդակը հասարակության մեջ և աշխատաշուկայում
- (մասնավորապես տարիքով աշխատողների) մասնակցություն ցկյանս ուսումնառությանը:

Բազմաթիվ զեկույցներում նշված է ազգային քաղաքականության մշակման վրա Տնտեսական Համագործակցության և Ջարգացման Կազմակերպության (OECD) ազդեցությունը՝ IALS-ի և ALL studies-ի (OECD և Վիճակագրություն Կանադա 2000, 2005) և առաջիկա PIAAC-ի ուսումնասիրության միջոցով (OECD 2008) և ՅՈՒՆԵՍԿՈ-ի ինստիտուտների, մասնավորապես Ցկյանս ուսումնառության ինստիտուտի միջոցով: Այնուամենայնիվ, տարածաշրջանի շատ երկրների համար հիմնական գերպետական ազդեցություն ունի Եվրոպական Միությունը: Որպես կանոն ԵՄ-27 երկրներից յուրաքանչյուրն ինքն է որոշում իր երկրի կրթության ազգային քաղաքականությունը, սակայն միասին նրանք սահմանում են ընդհանուր նպատակներ և միմյանց հետ կիսում են ԵՄ լավագույն փորձը: Կրթության և ուսուցման ոլորտի Լիսաբոնի Օրակարգն իրականացվում է «2010թ. Կրթություն և ուսուցում» ծրագրի (2002) միջոցով, որը ներգրավում է քաղաքականություն մշակողներին, սոցիալական գործընկերներին և Եվրոպական մակարդակի կազմակերպություններին: Ծրագիրն իր մեջ ներառում է կրթության և ուսուցման բոլոր մակարդակները և ցկյանս ուսումնառության շրջանակին պատկանող ուսումնառության բոլոր եղանակները: Եվրոպական Հանձնաժողովը նպաստում է ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմանը և ապահովում է կրթության և ուսուցման հենամիջներ (կամավոր), որոնք, գործնականում, հանդիսանում են քաղաքական

պարտավորություններ: Իրականում, 2002թ. ի վեր Եվրոպական Հանձնաժողովը հաջորդաբար լույս է ընծայել հեռանիշներ, տեղեկագիր-ուղեցույցեր, շրջանակային սկզբունքներ, իրականացրել է տեղեկատվության փոխանակում, կազմել է եզրակացություններ, երաշխավորություններ/առաջարկներ ու հետազոտություններ՝ փորձելով Անդամ երկրներում խրախուսել, առաջ տանել, համոզելով առաջ մղել կրթության և ուսուցման համակարգը դեպի Լիսաբոնի նպատակների իրականացում: Ուշագրավ է այն, որ մինչև վերջերս ՄՀԿՈւ-ն «2010թ. Կրթություն և ուսուցում» ծրագրի աշխատանքներում ամուր դիրքեր չունեի: Այս համատեքստում Եվրոպական Հանձնաժողովը 2006թ. փորձել է ուղիներ գտնել մեծահասակների ուսումնառության խթանման համար. հատուկ Հաղորդագրությունում (Եվրոպական Հանձնաժողով 2006ա), ընդգծված է, որ մեծահասակների ուսումնառությունը կարևոր նշանակություն ունի մեծահասակների զբաղվածության և աշխատաշուկայում նրանց շարժունակության ապահովման, նրանց կողմից առանցքային կարողությունների ձեռքբերման գործում՝ միևնույն ժամանակ նպաստելով սոցիալապես համասեռ աշխատաշուկայի և հասարակության կայացմանը:

Հաղորդագրությունը կարևորում է մեծահասակների ուսումնառության ոլորտում մասնակցության աճը, որակի մշակույթ ձևավորելու անհրաժեշտությունը, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացում իրականացնող համակարգերի նշանակությունը և մեծահասակների ուսումնառության տվյալների որակն ու համատեղելիությունը/զուգադրելիությունը կատարելագործելու անհրաժեշտությունը: Հաղորդագրությունում որոշարկված են երկու կոնկրետ թիրախ խմբեր՝ ծերացող բնակչությունն ու միգրանտները: Հանապատասխան Գործողությունների Պլանում (Եվրոպական Հանձնաժողով 2007ա) կարևորվել է Հանձնաժողովի գործողությունների դերը՝ Անդամ երկրների կողմից Հաղորդագրության իրականացմանն աջակցելու գործում: 2008թ. մայիսին Եվրոպական Խորհուրդը (Եվրոպական Միության Խորհուրդ 2008) մակագրեց Հաղորդագրությունն և Գործողությունների Պլանը և Անդամ երկրներից պահանջեց իրականացնել հիմնական կետերը: ԵՄ Ցկյանս ուսումնառության 2007-2013թթ. ծրագիրը նշանակալի քաղաքական աջակցություն է տրամադրում ցկյանս ուսումնառության քաղաքականությունների իրականացմանը, իսկ Գրունդվիգի և Լեոնարդո Դա Վինչիի ոլորտային ծրագրերը համապատասխանաբար հասցեագրված են ընդհանրապես

Մեծահասակների ուսումնառության և Մասնագիտական կրթության և ուսումնառության (ներառյալ ՇՄՈւ) ոլորտի մարտահրավերներին: Ի լրումն, պետք է նշել, որ կրթությունն ու ուսուցումը, այդ թվում՝ ՄՅԿՈւ-ն, հանդիսանում են ԵՄ այլ քաղաքականությունների առանցքային ուղղություններ, որոնք վերաբերվում են զբաղվածությանը, տեղեկատվական հասարակության, ակտիվ քաղաքացիական մասնակցությանը, շրջակա միջավայրի խնդիրներին, սպառողների հարցերին և սոցիալական քաղաքականությանը: Մասնավորապես, Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը (ԵՄՀ) հանդիսանում է ԵՄ-ում մեծահասակների ՆՄԿՈՒ-ի և ՇՄՈՒ-ի հիմնական ֆինանսավորողը: Որպես ԵՄ արտաքին աջակցության ծրագրերի մաս, ԵԿՀ-ն աշխատում է գործընկեր երկրների հետ՝ կիրառելու մարդկային ռեսուրսների զարգացման ռազմավարություններ սոցիալ-տնտեսական զարգացման համար: ԵԿՀ-ի քաղաքականության ուսումնառության մոտեցումը հնարավորություն է տալիս **Վրաստանին և Հարավ-արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ-ի երկրներին** մասնակցել միջպետական և միջտարածաշրջանային ուսումնառության գործընթացներին (Եվրոպական Կրթական Հիմնադրամ 2008ա): Մեկնաբաններից մեկն այն կարծիքին է, որ ԵՄ-ն զգալի քայլեր է կատարել դեպի այդ տարածքի պետությունների կառավարությունների կողմից՝ ՄՅԿՈւ ոլորտի նկատմամբ պատասխանատվության ստանձնման երաշխավորումը (Սամլիվսկի 2004):

Ազգային քաղաքականության մշակում

ՄՅԿՈւ-ի վերաբերյալ ցկյանս ուսումնառության մոտեցման ընդունումը կարևոր նշանակություն ունի ազգային քաղաքականության մշակման համար: Պետական քաղաքականության շրջանակում պետք է մշակվեն օրենսդրական, կառավարման, ֆինանսական, ինստիտուցիոնալ, ուսումնական, տեղեկատվական, կանոնակարգող և որակավորումների շրջանակներ՝ շահագրգռելու մեծահասակներին ներգրավվել համակարգված ուսումնառության գործընթացում (Ջոնս 2005): Բացի դրանից ՄՅԿՈւ-ի առաջընթացի համար անհրաժեշտ են «գրավ» քաղաքականություններ՝ կապված այնպիսի ոլորտների հետ, ինչպիսիք են զբաղվածությունը, սոցիալական ապահովությունը, գյուղական վայրերի զարգացումը և աղքատության հաղթահարումը, ինչպես նաև տարբեր նախարարություններում և կառույցներում քաղաքականության ազդեցության մոնիթորինգ և գնահատում: Հռետորական

առունով ազգային զեկույցները շատ նման են իրար: Ակնհայտ է, որ ցկյանս ուսումնառության գաղափարը շատ երկրներում հանդես է գալիս որպես կրթության և ուսուցման ոլորտի տեսլական. այն նաև հանդիսանում է գաղափարական շրջանակ՝ քաղաքականության մշակման և ուղղորդող սկզբունք՝ ուսումնառության բոլոր համատեքստերում, այդ թվում՝ ՄՅԿՈՒ-ում, կրթության իրականացման և մասնակցության համար: Այնուամենայնիվ, հռետորությունից դուրս, ՄՅԿՈՒ իրականությունը տարբեր երկրներում տարբեր է՝ կախված վերջին պատմական զարգացումներից, սոցիալ-տնտեսական միջավայրից, տվյալ երկրի կրթության և ուսուցման համակարգից և ավանդույթներից, ինչպես նաև ՄՅԿՈՒ ոլորտի քաղաքականության, ղեկավարման և ՄՅԿՈՒ իրականացման մակարդակից: ՄՅԿՈՒ քաղաքականության առանցքային հարցը հետևյալն է՝ այն ի սկզբանե տնտեսական, սոցիալական, մշակութային քաղաքականությունն է, թե՞ այս բոլորի համակցումը: Շատ երկրներում, քաղաքականության սահմանումները ՄՅԿՈՒ –ի նկատմամբ որդեգրում են ամբողջական մոտեցում՝ կարևորելով թե տնտեսական և թե ոչ տնտեսական արդյունքները: Համենայն դեպս, երբ գործը հասնում է իրականացմանը, անկհայտ լարվածություն կա մարդկային ռեսուրսների զարգացման միջոցով արտադրողականության և մրցակցության շեշտադրման և մարդկային պոտենցիալի զարգացման միջոցով անհատների սոցիալական ներգրավման և հասարակությունների սոցիալական համախմբման շեշտադրման միջև: Քաղաքականության իրականացման ընթացքում առաջնությունը տրվում է տնտեսական օրակարգին՝ ավելի մեծ պետական աջակցություն տրամադրելով մասնագիտական ուղղվածություն ունեցող մեծահասակների կրթության, քան մեծահասակների լիբերալ/հանրամատչելի ուսումնառությանը:

Փաստորեն, շատ երկրներում ՄՅԿՈՒ քաղաքականություններն անբաժան են աշխատաշուկայի քաղաքականություններից, իսկ անհատի զարգացումը առաջնային նշանակություն ունի: Ավելի քիչ թվով երկրներ իրենց զեկույցներում նկարագրել են միայն շարունակական մասնագիտական կրթությունը և ուսուցումը: Սա ավելի շատ բնորոշ է վերջերս ԵՄ-ին անդամակցած երկրներին և Հարավ-արևմտյան Եվրոպայի ու ԱՊՀ-ի երկրներին: Այս երկրներին բնորոշ է նաև ֆորմալ կրթություն և ուսուցում իրականացնող հաստատություններում իրականացվող ՄՅԿՈՒ-ի և աշխատավայրերում հմտությունների զարգացման անհավասարակշիռ

վիճակը, քանի որ ավանդույթներն ու կառույցները սահմանափակում են սոցիալական գործընկերների միջամտությունը, իսկ գործատուներն ի վիճակի չեն կամ չեն ցանկանում լուծել աշխատավայրերում ուսումնառության հարցը:

Առ այսօր ԵՄ-27+ երկրներից միայն 17-են որդեգրել/ընդունել ցկյանս ուսումնառության որոշակի ընդհանուր ռազմավարություն, որը վերաբերում է կրթության և ուսուցման տարբեր ոլորտների: Ռազմավարության այս սահմանումներում սահմանված են քաղաքականության գերակա ուղղությունները և գործողությունների պլաններն ու կոնկրետ ծրագրերը, որոնք հնարավորություն կտան հասնել ավելի մեծ արդյունավետության և արդյունքների բարելավված քանակի ու որակի:

Ցկյանս ուսումնառությունն արդեն իրականություն է դառնում **Դանիայում, Իսլանդիայում, Նորվեգիայում, Շվեդիայում և Միացյալ Թագավորությունում**: Այդուհանդերձ, 2007թ. ութ երկրներ դեռ մշակում էին ընդհանուր ռազմավարական սահմանումներ, իսկ յոթ երկրներ շարունակում են հետամուտ լինել ցկյանս ուսումնառության քաղաքականությունների՝ առանց ցկյանս ուսումնառության որևէ հանընդհանուր ռազմավարության (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): **Կիպրոսն ու Ռումինիան**, որոնք դեռ իրենց հանընդհանուր ռազմավարությունների մշակման փուլում են, նշում են, որ բավականին դժվար է ազգային մակարդակով քննարկում ծավալել և արձագանքել տարբեր շահագրգիռ խմբերի տեսանկյուններից: **Ռումինիայի** զեկույցում նաև նշված է, որ մասնագիտական ուսուցումից բացի, ՄՀԿՈՒ մյուս բաղադրիչները «ենթակա չեն համախմբված/փոխկապակցած ռազմավարությունների, քաղաքականությունների կամ հատուկ կանոնակարգերի»: Ընդհանուր առմամբ ԵՄ-27+ երկրների մեծ մասում հիմնական մարտահրավերը քաղաքականության իրականացումն է: **Շվեյցարիայում** պետության ուշադրությունը միշտ էլ ուղղված է եղել մեծահասակների մասնագիտական կրթությանն ու ուսումնառությանը, և ներկա պահին այնտեղ ազգային մակարդակով քննարկվում է ՄՀԿՈՒ սահմանումը:

Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում համարվում է, որ ՄՀԿՈՒ-ն առաջին հերթին էվոլյուցիոն դեր ունի «շարժիչն աշխատեցնելու» և/կամ տնտեսական աճին և աղքատության հաղթահարմանը նպաստելու գործում: Ավելի քիչ է շեշտադրվում ՄՀԿՈՒ-ի դերը քաղաքացիական ինտեգրման և սոցիալական

համախմբվածության հասնելու և ժողովրդավարական արժեքներն ու ինստիտուտներն առաջ տանելու գործում: **Իսրայելում** համարվում է, որ ՄՅԿՈՒ-ն առանցքային ներդրում ունի ներգաղթողների ինտեգրման, սոցիալական աճի և մրցունակության գործում: **ԱՄՆ**-ում գտնում են, որ ՄՅԿՈՒ-ն նպաստում է տնտեսական աճին՝ բարձրացնելով մեծահասակների գրագիտության մակարդակը, աջակցելով ներգաղթողների կողմից անգլերեն լեզվի ուսանմանը և ներդրում ունենալով աշխատուժի հմտությունների կատարելագործման մեջ: **Հարավ-արևելյան Եվրոպայի** առանձին երկրներում, **ԱՊՅ**-ում և **Վրաստանում** տեսանելի են ՄՅԿՈՒ ոլորտի քաղաքականություններ մշակելիս համակարգված մոտեցման նախնական փուլերը:

Հարավ-արևելյան Եվրոպայում իրականացվող այնպիսի ծրագրեր, ինչպիսին է օրինակ **ԴիՎիՎԻ** Ինթերնեշնալի կողմից իրականացվող «Ցկյանս ուսումնառության քարոզչության» ծրագիրը, փորձում են քաղաքականություն մշակողների և մյուս շահագրգիռ կողմերի ուշադրությունը կենտրոնացնել քաղաքականության համալիր շրջանակ ունենալու անհրաժեշտության վրա, որը կհամախմբի մի շարք տնտեսական, աշխատանքային, կրթական և սոցիալական քաղաքականություններ, ինչպես նաև փորձ են անում ցույց տալ հմտությունների և, հետևաբար, մեծահասակների կրթության ոլորտում ներդրումների ռազմավարական նշանակությունը (Դիմիտրովա 2007): Այդուհանդերձ, այդ տարածքում Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի բարեփոխումների մեծ մասը հիմնականում միտված են նախնական ուսուցմանն, իսկ ՇՄՈՒ-ի ծավալը սահմանափակ է: Նախկին **Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիան** մշակել է Մեծահասակների կրթության Պլան և խթանում է կրթական ցածր մակարդակ ունեցող ազգային խմբերից անհատների մասնակցությունը: **Սերբիան** մշակել է Մեծահասակների կրթության զարգացման ռազմավարություն, Մասնագիտական կրթության զարգացման ռազմավարություն (2006թ.), գործողությունների պլաններ և ակտիվ աշխատաշուկայի քաղաքականություններ: 2006թ. **ԱՊՅ** երկրների Միջխորհրդարանական ժողովն ընդունեց մեծահասակների կրթության մասին մոդելային օրենսդրություն: Ընդունվեց նաև *Մեծահասակների կրթության Ջարգացման Հայեցակարգ* և կազմվեց **ԱՊՅ** անդամ պետություններում Հայեցակարգի իրականացման գործողությունների պլան:

Ուկրաինան ձգտում է ԵԿԶ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերն ընդգրկել համալիր քաղաքականության ուսումնառության գործընթացում: **Մոլդավիան** հայտնում է, որ 2003թ. երկրում ընդունվել է «Մարդկային ռեսուրսների կողմնորոշման, ուսուցման և մասնագիտական կրթության հայեցակարգ» և Աշխատանքային Օրենսգիրք, որտեղ սահմանված են գործատուների՝ աշխատողների ուսուցման հետ կապված պարտականությունները: **Վրաստանում**, որտեղ ցկյանս ուսումնառության ռազմավարության մշակման աշխատանքները սկսվել են 2008թ., ՄՅԿՈւ-ն իրականում սահմանափակ գործնական արտահայտություն է ստացել՝ չհաշված գործազուրկների համար իրականացվող մի քանի ծրագրերը: Սակայն Կրթության նախարարությունն ընդունում է, որ անհրաժեշտ է թիրախ դարձնել «ռիսկային գոտում» գտնվող խմբերին: **Ռուսաստանում** 2006-2010թթ. Կրթության զարգացման դաշնային թիրախ ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որը սահմանում է շարունակական կրթության գաղափարը և նրա առանձին տարրերը, այդ թվում՝ մեծահասակների կրթությունը:

Մեծահասակների Կրթության և Ուսումնառության (ՄՅԿՈւ) կառավարում

Կառույց (օրինակ՝ կառավարություն կամ կրթություն իրականացնող հաստատություն), որը կազմավորվում է որոշումներ կայացնելու և դրանք իրականացնելու նպատակով: Կառավարման հիմնական ուղղություններն են՝ տեղեկատվություն, խորհրդատվություն, մասնակցություն, գործընթացներ, հավասարություն, իրավունքներ և բարեփոխումներ:

Ճիշտ կառավարմանը բնորոշ են հստակ հաղորդակցությունը, թափանցիկ խորհրդատվական գործընթացները, տարաբնույթ մասնակցությունը, մասնակցության հավասարությունը, որոշումների կայացման թափանցիկ գործընթացը, բավարար ռեսուրսների և կարողությունների առկայությունը և հաշվետվողականությունը: Այս չափանիշները կիրառելով պարզ է դառնում, որ ՄՅԿՈւ կառավարումը տարածաշրջանի շատ երկրներում բազմաթիվ մարտահրավերների առջև է կանգնած:

Կախված այն հանգամանքից, թե ՄՅԿՈւ-ն համարվում է հանրային՞ սեփականություն, մասնավոր՞, թե՞ երկուսն էլ՝ ՄՅԿՈւ մոդելը կլինի հանրային ծառայության մոդել,

շուկայական մոդել կամ այդ երկուսի համակցումը: Այսպիսով, ՄՅԿՈՒ-ում պետության ընդհանրական դերը տարածաշրջանում ընդգրկում է հետյալ սպեկտորը՝ հանրային սեփականություն համարվող ՄՅԿՈՒ-ի առաջխաղացման գործում պետության կողմից ներգրավման բարձր մակարդակից մինչև ներգրավման նվազագույն մակարդակ, երբ ՄՅԿՈՒ-ն այս կամ այն չափով իրականացվում է շուկայական ուժերի կողմից: Պետության դիրքորոշումը այդ սպեկտորի վերաբերյալ կարող է պայմանավորված լինել գաղափարախոսությամբ, ավանդույթներով, ռեսուրսներով կամ այս երեքով էլ: **Շվեդիայում**, որտեղ պետության սահմանված դերը տարածն ուսումնառության համար հնարավորություններ ստեղծելն է, կրթության բոլոր տեսակների նպատակներն ու կանոնակարգերը, բացի մեծահասակների լիբերալ կրթությունից, սահմանվում են պետության կողմից: Գործում է ֆորմալ եռակողմ համակարգ, որը վերահսկում է ՄՅԿՈՒ-ն աշխատուժի մակարդակում: **Լեհաստանում** կրթական ծառայությունների շուկան սկսեց ընդլայնվել 1990-ականներին: Ինչպես նշել է Կրթության նախարարության պատվերով աշխատող արտաքին գնահատման թիմը, «կրթության քաղաքականության ընդունված ընդհանուր կանոնը սահմանում է, որ աշխատաշուկայի կարիքները լավագույնս բավարարվում են կրթական ծառայությունների՝ լիովին ազատ շուկայի կողմից: Պետությունը, հնարավորություն ստեղծելով մեծահասակների համար լրացնելու իրենց կրթությունը դպրոցատիպ ուսուցման դասընթացների միջոցով, չի միջամտում ոչ-դպրոցատիպ առաջարկի գործողության շրջանակին: Գործազուրկների համար իրականացվող դասընթացների որակն ու արդյունավետությունը բարելավելու նպատակով զբաղվածության գործակալությունները ստիպված եղան 2007թ. դիտարկել/ուշադրություն դարձնել կրթություն իրականացնող կազմակերպության ունեցած որակի հավաստագիրը և վերլուծել առաջարկվող ուսուցման դասընթացները՝ պարզելու, թե դրանք որքանով են համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին: Պետության կողմից ֆինանսավորվող դասընթացներ իրականացնողներին մրցութային հիմունքներով ընտրելը ևս համարվում է կատարելագործված որակի և համապատասխանության հասնելու մի միջոց: **Գերմանիայում** պետության գործողությունները ՄՅԿՈՒ ոլորտում ընդհանուր առմամբ սահմանափակվում է սկզբունքների և հիմնական պարամետրերի սահմանմամբ և կանոնների ներդրմամբ, որոնք երաշխավորում են ՄՅԿՈՒ-ի պատշաճ կազմակերպումն ու աջակցությունը: Այդ կանոններն այնուհետև ձևակերպում են

ստանում Դաշնության օրենքներում և Լեհդեռում, որը սահմանում է այն հիմնական պայմանները, որոնցով առաջնորդվում է շարունակական կրթությանը տրամադրվող պետական աջակցությունը: Ըստ **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում** ցկյանս ուսումնառության համապարփակ համակարգ ստեղծելու, կառավարելու և դրա համար վճարելու փոխարեն կառավարության դերն է վերաբաշխել ռեսուրսներն այնպես, որ առկա հնարավորությունները լինեն համարժեք, կանոնավոր և արդյունավետ: **Սերբիայում** նկատում են, որ չնայած ընդունվել էր մեծահասակների կրթության զարգացման ռազմավարություն, սակայն ազգային համատեքստը բարդացնում է ՄՅԿՈՒ հարցերի լուծումը: **Հայաստանում** նկատում են, որ մեծահասակների կրթությունը ազգային մակարդակում որևէ կառույցի կողմից չի ղեկավարվում կամ համակարգվում: Այնուամենայնիվ, միտում կա ներգրավելու սոցիալական գործընկերներին Մասնագիտական կրթության և ուսուցման ղեկավարման և Մեծահասակների կրթության ռազմավարության գործողությունների պլանի մշակման գործում: **ԱՄՆ-ում** Կրթության Դաշնային Դեպարտամենտը սահմանում է քաղաքականություններ, իրականացնում է համապատասխան ադմինիստրատիվ/վարչական աշխատանքներ և համակարգում է դաշնային ֆինանսական աջակցությունը, որը տրամադրվում է նահանգներին ՄՅԿՈՒ նպատակով: Անհրաժեշտ են միջազգային, ազգային, տարածաշրջանային, տեղական, համայնքային և ինստիտուցիոնալ կառույցներ և շրջանակներ՝ ցկյանս կրթության հնարավորությունների տրամադրման և մասնակցության ընդլայնման համար, մասնավորապես ՄՅԿՈՒ ոլորտում: Բազմաթիվ երկրներում ՄՅԿՈՒ ոլորտի պատասխանատվությունը բաշխված է տարբեր գերատեսչությունների միջև, որոնք պատասխանատու են ՄՅԿՈՒ-ի որոշակի ասպեկտի/բաղադրիչի համար: Այս իրավիճակը բնորոշ է **Լատվիային**, որտեղ ինը նախարարություն, այլ շահագրգիռ կողմերի հետ մեկտեղ, ներգրավված են ցկյանս ուսումնառության ռազմավարությունների և գործողությունների պլանների մշակման գործում: **Մոլդավիայում** ևս ՄՅԿՈՒ ոլորտում ներգրավված են բազմաթիվ նախարարություններ: Ընդհանուր առմամբ համակարգումն ու համագործակցությունը տարբեր նախախարությունների միջև բացակայում է շատ երկրներում: Ֆորմալ ՄՅԿՈՒ քաղաքականության, իրականացման և ֆինանսավորման պատասխանատվությունը կարող է պատկանել Կրթության նախարարությանը կամ

Կրթության և Աշխատանքի նախարարությանը միաժամանակ: Սոցիալական հարցերի նախարարությունը զբաղվում է առանձին մեծահասակ ուսումնառուների համար եկամտի ապահովմամբ, Ֆինանսների նախարարությունը՝ ֆինանսական խթանիչների ապահովմամբ, իսկ բազմաթիվ այլ նախարարություններ ՄՅԿՈՒ են ապահովում քաղաքացիական ծառայողների և բնակչության տարբեր խավերի/սեկտորների համար: Երբ ՄՅԿՈՒ-ն պետական/հանրային աջակցություն է ստանում, նախարարությունների (ոչ կրթության) ֆինանսավորման դերը շատ ազդեցիկ է լինում այն դեպքերում, երբ հուսալի ֆինանսավորում չկա կրթություն իրականացնողների համար, կամ այդ ֆինանսավորումը շատ քիչ է, ինչպես **Պորտուգալիայում:**

Տարածաշրջանում ՄՅԿՈՒ կանոնակարգման մոդելները տարբեր են: Այդուհանդերձ, որպես հանրային կառավարման սկզբունքների մի մաս աստիճանաբար ավելի է կարևորվում ցածր օղակների կողմից որոշումների կայացումը (սուբսիդիարությունը), և որոշումների կայացման իրավազորությունը տրվում է այն մարմիններին, որոնք որքան հնարավոր է մոտ են կանգնած ՄՅԿՈՒ գործունեությանը: Այն համոզմունքը, որ ներպետական իրավասու մարմինները արդյունավետ և արդյունավոր ծառայություններ են մատուցում, շատ երկրներում հուշող տեղաշարժ է կենտրոնացված կառավարության ուղղակի վարչական վերահսկողությունից դեպի գործառնական վերահսկողության ապակենտրոնացում: Ի լրումն, մի շարք երկրներում այն կարծիքին են, որ ապակենտրոնացում նշանակում է ակնհայտ հրաժարում պատմական «վարչահրամայական» տնտեսությունից: Մի քանի երկրներում այս մոտեցումը զուգահեռվում է կրթություն իրականացնող կազմակերպությունների միջև մրցակցության առաջացմամբ, որն իրականացվում է կամ որոշակի կրթական ծառայությունների մատուցումը մասնավոր հատվածին փոխանցելով, կամ հանրային ոլորտում ներդնելով շուկայականին նմանվող հարաբերություններ: Պատասխանատվության սրվող բևեռացումից և տարածաշրջանային անհավասարության խորացումից խուսափելու համար անհրաժեշտ է ապակենտրոնացմանը զուգահեռ ներդրումներ կատարել՝ զարգացնելու տեղական իշխանությունների և կրթություն իրականացնող կազմակերպությունների՝ ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու հմտությունները և բարելավելու կենտրոնական կառավարության կանոնակարգումը՝

ՄՅԿՈՒ չափորոշիչների, կատարողականության և որակավորումների որակի հետ կապված հաշվետվողականության ապահովման նպատակով:

Որոշ երկրներ ՄՅԿՈՒ պատասխանատվությունը փոխանցել են **տեղական ինքնակառավարման մարմիններին** կամ տեղական մակարդակի այլ իրավասու մարմիններին: **Պանիայում** 2001թ. Մեծահասակների կրթության բարեփոխման արդյունքում մեծահասակների կրթության իրականացման պատասխանատվությունը բաշխվեց պետական, տարածքային և տեղական իշխանությունների միջև: **Ֆինլանդիայում, Նորվեգիայում, Պորտուգալիայում և Շվեդիայում** մեծահասակների կրթության քաղաքականությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների/քաղաքապետարանների կողմից: 2001թ. ի վեր **Հունգարիայում** ՄՅԿՈՒ ոլորտում ընդլայնվել է մարզերի դերը: **Ֆրանսիայում** մարզերն ու համայնքները ներգրավված են ՄՅԿՈՒ ոլորտում կամ ուղղակիորեն՝ իրականացնելով տարբեր գործողություններ, կամ անուղղակիորեն՝ ապահովելով գործող կազմակերպությունների և ասոցիացիաների ֆինանսավորումը: **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՂ-ում և Վրաստանում** ապակենտրոնացումը դեռևս գտնվում է զարգացման վաղ փուլում: 2006թ., **Ռուսաստանում** Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի ապակենտրոնացմանը նախապատրաստվելու փուլում, ԵԿՀ-ն աջակցություն տրամադրեց Մասնագիտական կրթության և ուսուցման գործող կենտրոնների տեղացի վերապատրաստողների և կառավարիչների վերապատրաստման ծրագրի իրականացմանը (Եվրոպական Կրթական Հիմնադրամ, 2006թ):

ՄՅԿՈՒ-ն կառուցվածքով բազմատարր է: Բազմաթիվ գործընկերներ շահագրգռված են ՄՅԿՈՒ ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման գործում, և հաճախ բոլորն էլ առաջնորդվում են տարբեր արժեքներով, վերաբերմունքով, ակնկալիքներով, նպատակներով և մոտեցումներով: Շահագրգիռ կողմ հանդիցանում է կառավարությունն իր բոլոր մակարդակներով, օրենքով սահմանված կարգով գործող գործակալությունները, սոցիալական գործընկերները, կրթություն իրականացնող հանրային կազմակերպությունները, ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ), քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ), կրթություն իրականացնող առևտրային

կազմակերպությունները և, ի վերջո, պոտենցիալ ուսումնառուներն ու նրանց ներկայացուցիչները: Գիշտ ղեկավարման միջոցով հնարավոր է հաստատել արդյունավետ ուսումնական գործընկերություններ: Համակարգային մակարդակում այս համագործակցությունը կհաստատվի պետական մարմինների, սոցիալական գործընկերների քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի միջև և ներսում, իսկ կրթության իրականացման մակարդակում՝ կրթական հաստատությունների և տվյալ տարածքի սոցիալական գործընկերների, քաղաքացիական հասարակության և ուսումնառուների ներկայացուցիչների միջև և այդ կառույցների ներսում:

ԵՄ-27+ երկրներից մի քանիսի փորձը ցույց է տալիս, որ մղում կա համակարգելու և կապակցելու մեծահասակների ուսումնառության կառույցները՝ տարանուն խմբերի միջև կապեր հաստատելու և համակողմանիորեն ընդգրկելու նպատակով: ՄՀԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերներն ու քաղաքացիական հասարակությունն ավելի ու ավելի են ճանաչվում որպես գործընկերներ, և նրանց ներգրավածությունը բազմաշերտ է՝ սկսած խորհրդատվությունից, մինչև մասնակցություն ազգային կամ տարածաշրջանային ֆորմալ կառույցներում: Սոցիալական գործընկերները նաև իրենց ազդեցությունն ունեն ՄՀԿՈՒ քաղաքականության վրա կոլեկտիվ սակարկության գործընթացի միջոցով: Որոշ երկրներում, օրինակ **Ավստրիայում, Կիպրոսում, Դանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Նորվեգիայում և Շվեդիայում**, վաղուց արդեն գործում է սոցիալական գործընկերներին և շահագրգիռ կողմերին ներգրավելու ավանդույթը, իսկ ինստիտուցիոնալ կառույցներում ներգրավված է ազգային, մարզային և տարածքային խորհրդատվական հանձնաժողովների համակողմանի համացանց, որի նպատակն է հաստատել բարձր մակարդակի սոցիալական երկխոսություն, որն ընկած է ցկյանս ուսումնառության հիմքում: Աշխատուժի վերապատրաստման հարցերում **Մեծ Բրիտանիան** շարունակում է հավատարիմ մնալ կամավորության սկզբունքին: Պետության միջամտությունը հիմնականում ուղղված է գործատուների և անհատական պահանջարկի խթանմանը՝ բարելավելով կրթության իրականացման որակն ու համապատասխանությունը պահանջարկին և ձևավորելով աջակցող ծառայություններ, որոնք վերապատրաստումը գրավիչ են դարձնում գործատուների համար (այդ թվում՝ գործատուների մասնակցությամբ Ոլորտային հմտությունների

խորհուրդների ձևավորում, որակավորումների բարեփոխված համակարգ, որը պետք է գործարկվի 2008թ.-ից և «Վերապատրաստում ձեռքբերումների նպատակով» ծառայություն): Այդուհանդերձ, ինչպես նշված է 2006թ. կառավարության պատվերով կազմված հմտությունների վերաբերող հաշվետվության մեջ, որակավորումների ներկայիս վատ բազան այս մոդելի արդյունք է, և կառավարությունը նշել է, որ ապագայում կդիտարկի կանոնակարգման հարցը, եթե գործատուները կանավոր հիմունքներով ավելի մեծ ներդրումներ չկատարեն վերապատրաստումների ոլորտում: Ի լրումն, 2006թ. ի վեր, ընդլայնելով Ուսումնառության Միասնական Հիմնադրամի մոդելը, Յունիոնը՝ **Միացյալ Թագավորությունում** ուսումնառության արհեստակցական միությունների ակադեմիան, մեծ դերակատարում է ունեցել արհեստակցական միությունների դերի և բնույթի վերափոխման գործում, մասնավորապես իրենց անդամների՝ ուսման հնարավորությունների միջնորդավորման գործում:

Գործընկերությունն իր արտահայտությունն է գտնում միջգերատեսչական, միջինստիտուցիոնալ և միջկազմակերպչական համագործակցության տեսքով ազգային, մարզային և տարածքային մակարդակներում: Այն աջակցում է «միացյալ» մտածողությանն ու պատասխաններին և համակարգված ու տարբեր ոլորտներին ուղղված քաղաքականության մշակմանը՝ ի շահ ցկյանս ուսումնառության համընդհանուր համակարգի ստեղծման: Մի շարք երկրներ արդեն ստեղծել են ՄՀԿՈւ-ն համակարգող համազգային/մարզային կառույցներ: Այդ կառույցները իրար են կապում մեծահասակների ուսումնառությամբ հետաքրքրված կողմերին, այդ թվում՝ նախարարություններ, սոցիալական գործընկերներ, օրենքով կրթություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսումնառուներ և ոչ կառավարական շահեր՝ ՄՀԿՈւ որակն ու քանակը բարելավելու նպատակով: Ելնելով իրենց անկախության աստիճանից՝ այդ կառույցներն իրականացնում են տարբեր գործառույթներ՝ քաղաքականության մշակում և իրականացում, քաղաքականության համակարգում և/կամ քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում: 2000թ. ի վեր Մեծահասակների կրթության շվեյցարական ֆորումը հանդես է գալիս որպես խորհրդատվական խորհուրդ՝ կազմված դաշնային գրասենյակների (կրթություն և ուսուցում, զբաղվածություն, մշակույթ), գավառների և **Շվեյցարիայում** ՄՀԿՈւ իրականացնող կազմակերպությունների

ներկայացուցիչներից: 2005թ. ստեղծվեց երկրորդ հանձնաժողովը՝ Մեծահասակների կրթության Շվեյցարիայի համակարգող հանաժողովը՝ ՄՅԿՈՒ-ի հետ կապված հարցերը Համադաշնության և մարզերի միջև համակարգելու նպատակով:

Համակարգերի և իրականացման մակարդակում գործընկերություն հաստատելու մեկ այլ օգտակար մոտեցում է տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ մարզային և տեղական համացանցերի ստեղծումը, որը կաշխատի աշխատաշուկայի քաղաքականության, սոցիալական քաղաքականության, ՄՅԿՈՒ քաղաքականության մշակման վրա և կապահովի տարածքային իրազեկում: **Գերմանիայում**, կրթության և հետազոտության դաշնային նախարարությունը խրախուսում է եվրոպական Սոցիալական Հիմնադրամի (ESF)-ի աջակցությամբ գործող մարզային համացանցերին՝ ժամանակակից և ինտեգրված ցկյանս ուսումնառության ծառայությունների մատուցման նպատակով: **Նիդեռլանդներում** մշանակալի նորարարություն համարվեց ուշադրության կենտրոնացումը տարածաշրջանային համացանցերի վրա: **Ռուսաստանում** «Ուսումնառու համայնք» նախագծի շրջանակներում փորձարկվում են մեծահասակների ուսումնառությունն առաջ տանող նոր մոտեցումներ: **ԱՄՆ-ում** տեղի գործատուները հաճախ ՄՅԿՈՒ իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ մասնակցում են տեղի աշխատուժի համար իրականացվող մասնագիտական ՄՅԿՈՒ-ի բովանդակության վերաբերյալ որոշումների կայացմանը: Իրականացման մակարդակում, մի շարք երկրներում ուսումնառուներն աստիճանաբար ներգրավվում են կրթություն իրականացնող ինստիտուտների ղեկավարման գործում, ինչը հանդիսանում է արդյունավետ կառավարման առանցքային տարր՝ ուղղված անհատի և համայնքի ուսումնառության կարիքների արձագանքմանը:

Այնուամենայնիվ, մի շարք ԵՄ-27+ երկրներում բացակայում են արդյունավետ և անկողմնակալ կրթության և ուսումնառության ապահովման նպատակով նորարար ուսումնական գործընկերությունները (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): Օրինակ, այնպիսի երկրներ, ինչպիսիք են **Կիպրոսը**, **Էստոնիան**, **Հունաստանը**, **Լիտվան**, **Լեհաստանը**, **Սլովենիան** և **Թուրքիան**, դեռևս գտնվում են ինստիտուցիոնալ կառույցների համակարգի ստեղծման նախնական փուլում: **Ռումինիայում** ուսումնառության ուղիների և ուսումնառության արդյունքների ճանաչման վրա

ազդում են փոխկապակցվածության պակասն ու սափմանափակ սոցիալական գործընկերությունը: Այս երկրների պրոբլեմը կայանում է նրանում, որ սոցիալական գործընկերների ներգրավման նախնական փուլում բիզնես շահեր ներկայացնող կազմակերպությունները թույլ են բևեռացված (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): ԵՄ-ին վերջերս անդամակցած երկրներում արհմիությունների ներգրավման արդյունքում զգալիորեն փոփոխվել է թե՛ արհմիությունների և թե՛ գործատուների դերակատարումը: **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում**, որտեղ այս մարտահրավերները սուր բնույթ են կրում, գործընկերության մշակույթը դեռ բավարար չափով ձևավորված չէ, սոցիալական գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավումը ղեկավարման գործում շարունակում է մնալ հռետորության մակարդակում այս երկրներից շատերում:

Մի շարք երկրներում ֆորմալ ՄՀԿՈւ-ում տեսանելի համակարգման և կապակցվածության օրակարգը միշտ չէ որ վերաբերվում է նաև ոչ ֆորալ ՄՀԿՈւ-ին: Ձեկույցներում նշված է, որ երկրների մեծամասնությունում չի ընդունվում քաղաքացիական հասարակության դերը որպես ՄՀԿՈւ ոլորտի առանցքային դերակատար: Այդուհանդերձ, ոչ ֆորմալ ՄՀԿՈւ-ն չի մնում առանց համակարգման մեխանիզմների: Ոչ ֆորմալ ՄՀԿՈւ իրականացնող կազմակերպությունների, իսկ որոշ դեպքերում նաև ուսումնառուների համագալիս/տարածաշրջանային ասոցիացիաների ներկայացուցիչները հաճախ իրենց դերն ունեն ազգային և տարածաշրջանային մակարդակում քաղաքականությունների ձևավորման վրա: Այս ասոցիացիաները կարող են նպաստել մասնակցությանը, խրախուսել որակյալ կրթություն, իրականացնել հետազոտական աշխատանքներ և մասնակցել ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող համագործակցության ծրագրերին: **Հայաստանում**, օրինակ, Մեծահասակների կրթության հայաստանյան ասոցիացիային անդամակցում են 36 հասարակական կազմակերպություններ: Այն դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում հիմնական տեղական գործընկերն է: **Վրաստանում**, Մեծահասակների կրթության վրաստանյան ասոցիացիան նույն դերակատարումն ունի: Երկու ասոցիացիաներն էլ, տարածաշրջանի բազմաթիվ այլ ազգային ասոցիացիաների հետ միասին, հանդիսանում են Մեծահասակների Կրթության Եվրոպական Ասոցիացիայի (ՄԿԵԱ) անդամ :

Օրենսդրական դաշտ

Օրենսդրական դաշտում նկատվում է միտում՝ ապահովելու համակարգում, փոխկապակցվածություն և, որոշ դեպքերում, քաղաքականությունների, կառույցների, ֆինանսավորման, կրթության իրականացման և որակավորումների ինտեգրում:

ՄՅԿՈՒ ոլորտի հատուկ օրենսդրություն առկա է գրեթե բոլոր երկրներում՝ հաճախ հանդիսանալով աշխատանքային օրենսգրքերի մաս, իսկ ՇՄՈՒ-ն ամրագրված է ՄՅԿՈՒ ոլորտի օրենսդրության մեջ: Առնվազն 20 երկրներում գործում է կրթության և ուսուցման ինստիտուտներում իրականացվող ֆորմալ ՄՅԿՈՒ-ին վերաբերող օրենսդրական շրջանակ: Այդ երկրներն են՝ **Հայաստան, Բելգիա, Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայի, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Լիտվա, Չեռնոգորիա, Սիդեռլանդներ, Պորտուգալիա, Նորվեգիա, Սլովակիա, Շվեդիա և ԱՄՆ:**

1998թ. **ԱՄՆ**-ում ՄՅԿՈՒ-ն ընդգրկվեց Աշխատուժի Ներդրումների Ակտում որպես մեծահասակների կրթության և ընտանեկան Գրագիտության Ակտ (ՄԿԸԳԱ): Այս Ակտում սահմանվում են մեծահասակների կրթության և գրագիտության ծառայությունները, որոնք պետք է աջակցեն մեծահասակներին ավարտին հասցնել իրենց հանրակրթությունն ու հմտություններ ստանալ աշխատանք գտնելու համար: **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում**, որտեղ ընդհանուր առմամբ համակարգերն ամուր արմատներ ունեն օրենքներում, օրենսդրական փոփոխությունները համարվում է վճռորոշ քայլ ՄՅԿՈՒ զարգացման համար: Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում կրթության նախարարությանը օրենքով պարտադրված է մշակել ՄՅԿՈՒ ռազմավարություն և ֆինանսական ռեսուրսներ գտնել այդ ռազմավարության իրականացման համար՝ «ըստ երկրի և Եվրոպական Միության կարիքների»:

Այնուամենայնիվ, ՄՅԿՈՒ ոլորտի օրենքների նախագծերի կազմումը միշտ չէ որ իրականացվում կամ զուգորդվում է համապատասխան քաղաքականություններով, ռազմավարություններով և գործողություններով, որոնց մի մասը, օրինակ՝

գործընկերային մոտեցման ձևավորումը, պահանջում է ավելին, քան պարզապես իրավական կառուցվածք:

Տարածաշրջանում ոչ ֆորմալ ՄՅԿՈւ ոլորտին վերաբերող համակողմանի օրենսդրության առկայությունն ավելի շուտ բացառություն է, քան օրինաչափություն: Սակայն ինը երկրներում նման համակողմանի օրենսդրություն կա և գործում է: Այդ երկրներն են՝ **Բելգիա (Ֆր), Դանիա, Ֆինլանդիա, Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Նիդեռլանդներ և Շվեդիա: Հայաստանում** » ոչ ֆորմալ կրթության« իրականացման հիմնական իրավական և կազմակերպական կողմերը սահմանող և կանոնակարգող Հայեցակարգ ընդունվել է 2006թ.: Փոքրաթիվ երկրներում, օրինակ՝ **Դանիա, Ֆինլանդիա, Նիդեռլանդներ, Ռումինիա**, ուժի մեջ է մտել մեծահասակների կրթության բոլոր տարրերը՝ ֆորմալ և ոչ ֆորմալ, պարփակող օրենսդրություն:

Մի շարք երկրներում է ի հայտ է գալիս մեծահասակների կրթության նկատմամբ կանոնադրական իրավունքը: **Շվեդիայում** բոլոր մեծահասակները, ովքեր համապատասխանում են որոշակի չափանիշների, իրավունք ունեն ստանալ հիմնական կրթություն: **Ֆրանսիայում**, 2004թ. ազգային համաձայնագրով սահմանվեց ուսուցում ստանալու անհատական իրավունքը: **Նորվեգիայում** մեծահասակներն իրավունք ունեն անվճար կրթություն ստանալ մինչև և ներառյալ ավագ դպրոցի մակարդակը: 1961թ. **Թուրքիայում**, այն մեծահասակները, ովքեր ինչ – ինչ պատճառներով չեն կարողացել շարունակել իրենց կրթությունը, իրավունք ստացան կրթությունը շարունակել remedial դասընթացների միջոցով՝ ընդլայնելու իրենց ընդհանուր գիտելիքները և աշխատանքի հեռանկարները: Որոշ երկրներ, օրինակ, **Ֆրանսիան, Բելգիան**, երաշխավորում են բոլոր մեծահասակների՝ կրթություն և ուսուցում ստանալու իրավունքը՝ կրթության նպատակով տրվող արձակուրդային գրաֆիկների միջոցով:

ՄՅԿՈւ ֆինանսավորում

Թեմա 9. Մեծահասակների ուսումնառության ֆինանսավորում. ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի պատվիրակները հանձն են առնում բարելավել մեծահասակների կրթության ֆինանսավորումը,

նպաստելով մեծահասակների կրթության ֆինանսավորմանը երկկողմ և բազմակողմ ֆինանսական հաստատությունների միջոցով՝ տարբեր նախարարությունների և այլ կառավարական կազմակերպությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, մասնավոր հատվածի, համայնքի և ուսումնառուի միջև գործընկերության շրջանակներում:

(Ապագայի օրակարգ, Պարբ. 49(ա) էջ 26)

ՄՅԿՈՒ ֆինանսավորումը որքան գաղափարախոսական, նույնքան էլ տեխնիկական հարց է, և այդ հարցով զբաղվող պետական գերատեսչությունները ներակայացնում են տարբեր քաղաքական մշակույթներ, այդ թվում՝ վերաբերմունքը կրթության և ուսուցման դերի և օգտակարության, տարբեր շահագրգիռ կողմերի պատասխանատվության շրջանակի և ՄՅԿՈՒ ոլորտի ղեկավարման կազմակերպման նկատմամբ: Ցանկացած շահագրգիռ կողմի կողմից ՄՅԿՈՒ ոլորտում ներդրում կատարելը կախված է «ավելացված արժեքի» ընկալումից, այսինքն՝ արդյո՞ք ՄՅԿՈՒ-ն դիտվում է որպես հանրային, թե՞ մասնավոր սեփականություն, կամ երկուսն էլ, և արդյո՞ք ՄՅԿՈՒ -ն ֆինանսավորելը համարվում է ներդրում, թե՞ ծախս: Եթե դա առաջինն է, ապա՝ ինչպիսի՞ն է այդ ներդրումը ՄՅԿՈՒ-ում:

Ղեկավարման միջոցով տեղեկատվություն է ստացվում, որն օգտագործվում է ՄՅԿՈՒ ոլորտի ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ կայացնելիս և գործելակերպեր մշակելիս: Սոցիալական գործընկերների գործառույթներն ու պարտականությունները տարածաշրջանում տարբեր են, իսկ ԵՄ-ին վերջերս անդամակցած պետություններում՝ Հարավ-արևելյան Եվրոպա, ԱՊՀ և Վրաստան, սոցիալական գործընկերների դերը դեռևս հաստատված չէ, այլ գտնվում է ձևավորման փուլում: Տարածաշրջանի մյուս երկրներում սոցիալական գործընկերները պաշտոնապես կամ ոչ այնքան պաշտոնապես, այս կամ այն չափով ներգրավված են ՄՅԿՈՒ ֆինանսավորման գործում և ֆինանսավորման այլ կառույցներում: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում կառավարությունները փորձում են ընդլայնել ՄՅԿՈՒ ոլորտի նկատմամբ ֆինանսական պատասխանատվությունը՝ խրախուսելով ծախսերի համաֆինանսավորումը շահագրգիռ կողմերի կողմից, մասամբ ի պատասխան սակավ ռեսուրսների, սակայն շատ երկրներում նաև որպես կրթության և ուսումնառության ոլորտում աճող շուկայամետ տեմդեմ: Այդուհանդերձ,

տարածաշրջանի բոլոր կառավարությունները, իհարկե տարբեր չափով, մի քայլ առաջ են անցնում վերահսկման, կառավարման և համակարգման դերից՝ ընդունելով ՄՅԿՈՒ ոլորտում հանրային ներդրումների կարևորությունը շուկայում անհաջող զարգացումների դեպքում, և ձգտելով հավասարության և համապատասխանեցված օրակարգ գտնել «ռիսկային» խմբերի համար, ինչպիսիք են, օրինակ, գործազուրկները, հմտությունների ցածր մակարդակ ունեցող բանվորները, ներգաղթողները, մեծահասակ բանվորներն ու տարեցները:

ՄՅԿՈՒ ոլորտում ներդրումների վերաբերյալ լիարժեք վիճակագրական տեղեկատվությունը բացակայում է գրեթե բոլոր զեկույցներում, և, փաստորեն, ներկայացված տեղեկատվությունը հնարավոր չէ համեմատել: Դժվար է ընդհանուր պատկեր կազմել որևէ երկրում բոլոր շահագրգիռ կողմերի կամ դրանցից որևէ մեկի կողմից կատարված ընդհանուր ներդրումների վերաբերյալ: ՕԵԿԴ-ն նշում է այն փաստը, որ տարածաշրջանի մի շարք երկրներում ներդրումների ընդհանուր մակարդակը շատ ցածր է (ՕԵԿԴ 2003թ.): Հաշվարկվել է, որ կառավարությունների մեծամասնությունը կրթության ազգային բյուջեի մոտ 1%-ն են ծախսում ՄՅԿՈՒ-ի համար, իսկ շատ հաճախ՝ նույնիսկ այդ 1%-ի չնչին մասը (Արչեր 2007թ.):

Որոշ երկրներում աճում է վերից վար ճնշումը ՄՅԿՈՒ ներդրումների համար: 2002թ. Եվրոպական Հանձնաժողովի զեկույցում նշված է, որ նախորդ տասնամյակում կտրուկ նվազել է ՄՅԿՈՒ ոլորտի հանրային ներդրումները այն երկրներում, որոնք պետք է միանան Միությանը 2004թ. և արտահայտված է այն մտահոգությունը, որ բյուջետային սահմանափակումները և ֆորմալ կրթությանը հատկացվող պետական ծախսերի բարձր մակարդակը կխանգարեն ՄՅԿՈՒ ֆինանսավորման ծավալների հետագա ընդլայնմանը (Եվրոպական Հանձնաժողով 2003ա): **Գերմանիայի** զեկույցում նշված է, որ ՄՅԿՈՒ ոլորտին շահագրգիռ կողմերի տրամադրած ընդհանուր ֆինանսավորումը դանդաղ բայց կայուն կերպով նվազում է՝ 1996թ. 27.8 մլրդ. եվրոյից իջնելով մինչև 24.1 մլրդ. եվրո 2006թ.: Այդ ժամանակահատվածում ՄՅԿՈՒ ոլորտին հատկացվող հանրային ֆինանսավորումը քիչ է նվազել՝ 1.5 –ից 1.4 մլրդ. եվրո, սակայն, զգալի կրճատումներ կատարեց Ջբաղվածության Դաշնային Գործակալությունը՝ 8.0 -1.3 մլրդ. եվրո:

Բոլոր երկրներում ՄՅԿՈՒ ոլորտի ներդրումների հարցը «թեժ թեմա» է: ԵՄ-27+ երկրներում քննարկումների ծավալման խթան հանդիսացավ Լիսաբոնի օրակարգն ու Եվրոպական Հանձնաժողովի կողմից թողարկված մի շարք ուղղորդող հաղորդագրություններ և զեկույցներ (2001,2003ա, 2003բ, 2003գ, 2006բ), որոնք կոչ էին անում Անդամ պետություններին ստեղծել ֆինանսաբյուջետային և կանոնակարգող խթանիչներ՝ ՄՅԿՈՒ ոլորտի հանրային և մասնավոր ներդրումների ծավալն ավելացնելու համար: Այն նաև կոչ էր անում բոլոր շահագրգիռ կողմերին, մասնավորապես ձեռնարկություններին, ավելացնել ներդրումների ծավալը: 2002թ. Հանձնաժողովը հիշեցրեց Անդամ երկրներին, որ կրթության և ուսուցման ոլորտի զարգացմանն ուղղված ներդրումները մեծ ընդունելություն են ստացել: Հաշվարկները ցույց են տալիս, որ կրթության և ուսուցման ոլորտում ներդրումները շահութաբեր են անհատի և հասարակության համար , և այդ շահույթը համեմատելի է նյութական կապիտալի շահութաբերության հետ (Եվրոպական Հանձնաժողով 2003ա): Ի լրումն, OECD-ն ցույց է տվել, որ հմտությունների հավասարաչափ բաշխումը հզոր ազդեցություն ունի տնտեսական գործունեության վրա (OECD 2005):

ՄՅԿՈՒ ներդրումները տարածաշրջանում

Թեև, բոլոր երկրներում ՄՅԿՈՒ-ն, փաստորեն, ֆինանսավորվում է բազմաթիվ տարբեր աղբյուրներից՝ պետական մարմիններ, ձեռնարկություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և անհատներ, այնուամենայնիվ ազգային զեկույցներում միտում կա ավելի մեծ ուշադրություն դարձնելու պետական ներդրումներին, հիմնականում այլ շահագրգիռ կողմերի կատարած ներդրումների վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով: Ավելին, զեկույցներում գրեթե ոչ մի հղում չի արվում ծախսային կառուցվածքում տեղ գտած փոփոխություններին, օրինակ՝ ոչ ֆորմալ ուսումնառության վավերացում և ՏՀՏ-ի կիրառմամբ ուսումնառության ծավալների աճ , ինչը ենթադրվում է ՄՅԿՈՒ ոլորտում ի հայտ եկող զարգացումներում: Մի քանի երկրներ (օրինակ՝ **Ռանիան, Ֆրանսիան, Գերմանիան և Շվեյցարիան**) ստեղծել են ՄՅԿՈՒ շահագրգիռ կողմերից բաղկացած ազգային կառույց՝ ուսումնասիրելու, թե ինչպես կարելի է ֆինանսավորել ՄՅԿՈՒ-ն: Ուսումնասիրության արդյունքում առաջարկվեցին հետևյալ հանձնարարականները՝ ֆինանսավորման տարբեր

աղբյուրներ, ոլորտների միջև» կառավարությունից՝ որպես ամբողջություն« միջգերատեսչական ֆինանսավորում, ֆինանսավորման ապակենտրոնացում դեպի մարզային/տարածքային մակարդակ, պետական սուբսիդիաների վերաթիրախավորում՝ կրթություն իրականացնողներից՝ անհատներին, ինչը հնարավորություն կտա խրախուսել անհատական պատասխանատվությունն ու շուկայական հարաբերությունները ՄՅԿՈՒ ոլորտում, հիմնական և միջնակարգ ՄՅԿՈՒ ստանալու »երկրորդ հնարավորությանը« տրվող պետական աջակցության սահմանափակում և մասնագիտական ՄՅԿՈՒ տրամադրում հմտությունների ցածր մակարդակ ունեցող անհատներին:

Տարբեր երկրներ ՄՅԿՈՒ-ի անմիջապես հանրային իրականացման նկատմամբ տարբեր մոտեցումներ ունեն: Որոշ երկրներում (օրինակ՝ **Գերմանիա** և **Նորվեգիա**) մեծահասակների կրթությունը հիմնականում իրականացվում է մասնավոր հիմունքներով, նաև ներգրավելով որոշակի պետական ֆինանսավորում, իսկ մյուս երկրներում (օրինակ՝ **Դանիա**, **Ֆինլանդիա** և **Շվեդիա**) մեծահասակների կրթությունը հիմնականում ֆինանսավորում են պետական կառույցները: Մի շարք զեկույցներում որպես ֆինանսավորման աղբյուր հիշատակվում են Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը (ESF) և ԵՄ 2007թ. Ցկյանս Ուսումնառության Ծրագիրը:

Շատ երկրներում լայնորեն տարածված է տարածաշրջանային և/կամ տեղական իրավասու մարմինների միջոցով, հազվադեպ՝ նաև ուղղակիորեն, առաջարկը ներկայացնող կողմի դրամաշնորհների տրամադրումը կրթություն իրականացնող կազմակերպություններին: Բացառություն է կազմում **Վրաստանը**. որտեղ անհատները ֆինանսավորում են ստանում իրենց ընտրությամբ միջնակարգ կամ բարձրագույն կրթությունը շարունակելու համար, այժմ այնտեղ նախատեսվում է այս քաղաքականությունը տարածել նաև կրթության և ուսուցման մակարդակում:

Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ երկրներում և **Վրաստանում** ՄՅԿՈՒ ֆինանսավորումը սահմանափակ է, բևեռացված և հիմնականում իրականացվում է տարբեր ծրագրերի միջոցով: Ֆինանսավորման աղբյուրներն են՝ սահմանափակ պետական ֆինանսավորում, բազմաթիվ արտաքին դոնորներ, այդ թվում՝ Համաշխարհային Բանկը, Ներդրումների Եվրոպական Բանկը, Եվրասիա Հիմնադրամը, ԱՄԿ, ԱՄՆ ՄԶԳ-ն, ՅՈՒՆԵՍԿՈՒ-ն և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը,

Եվրոպական երկկողմ օգնությունը: Այդ ֆինանսավորումը հաճախ տրամադրվում է ՀԿ-ների միջոցով, կամ ուղղակիորեն կառավարությունից՝ կառավարություն, իսկ ԵՄ օգնությունը տրամադրվում է IPA կամ ԵՀԾ-ի միջոցով: Ըստ ազգային զեկույցների, գործատուների ընդգրկվածության մակարդակը շատ ցածր է և, գրեթե բոլոր երկրներում, անհատական ներդրումները սահմանափակ են: Պետական մարմինները գրեթե բոլոր երկրներում միջամտում են «վերապատրաստումների շուկայի» գործունեությանը, շուկայում հնարավոր անհաջողությունների և անկողմնակալության նկատառումներով՝ ֆինանսավորելով տարբեր կատեգորիաների մեծահասակների (այդ թվում՝ հմտությունների ցածր մակարդակ ունեցող բանվորներ, գործազուրկ մեծահասակներ, աշխատուժի շրջանակներից դուրս գտնվող անձինք, ներգաղթողներ և կրթական ցածր մակարդակ ունեցող անձինք) կրթությունն ու ուսումնառությունը, եթե իրենք ի վիճակի չեն ինքնաֆինանսավորվել կամ գործատուները չեն ֆինանսավորում իրենց ուսումնառությունը: Փաստորեն, բոլոր երկրները, հաճախ Աշխատանքի նախարարության կամ զբաղվածության գործակալությունների միջոցով, ֆինանսավորում են գործազուրկ մեծահասակների ուսուցումն ու վերապատրաստումը որպես Ակտիվ Աշխատաշուկայի Միջոցառումների (ԱԱՄ) մի մաս:

ԵՄ-27 երկրներում նախատեսվում է կրճատել Եվրոպական Սոցիալական Հիմնադրամի (ԵՄՀ) կողմից տրամադրվող համաֆինանսավորումը: Վերջերս ԵՄ-ին անդամակցած երկրներում և **Հարավ-արևելյան Եվրոպայի** և **ԱՊՀ**-ի երկրներում, ԱԱՄ-ի ոլորտում կատարվող ներդրումները չեն համապատասխանում սահմանված պահանջներին:

Գրեթե բոլոր զեկույցներում նշված է պետականորեն առաջարկվող ֆինանսավորումը կրթությունն ստանալու»երկրորդ հնարավորության համար«, որը, որպես կանոն իրականացվում է հիմնական դպրոցում: Ընդհանուր տառաճանաչությունը ֆինանսավորվում է շատ երկրներում, բացի այն երկրներից, որտեղ տառաճանաչության ազգային մակարդակը արդարացնում նման միջամտությունը: Հաշվի առնելով նմանատիպ ՄՀԿՈ-ի »փոխհատուցող« և վերաբաշխիչ դերը՝ շահառուների համար սովորելը, որպես կանոն, անվճար է: **Շվեյցարիայում**, ցածր որակավորումներ ունեցող կամ ոչ արտոնյալ վիճակում գտնվող մարդկանց համար

ՄՅԿՈւ իրականացնող ՅԿ-ները ավելի մեծ ֆինանսական աջակցության կարիք ունեն։ **Հարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ-ի** երկրները նշում են, որ մեծահասակների տառաճանաչության համար անհրաժեշտ է պետական ֆինանսավորում։ **Հարավսլավիայի Նախկին Հանրապետություն Սակեդոնիան** իր զեկույցում նշում է, որ մեծահասակների կրթության վարձավճարների համար առաջին անգամ գումարներ հատկացվել են 2008թ. բյուջեով։ Բյուջետային այդ հատկացման նպատակն էր վճարել իրենց նախնական կրթությունն անավարտ թողած մեծահասակների և բանտարկված մեծահասակների ուսման դիմաց։ **ԱՄՆ-ում** գրեթե բոլոր շահույթ չհետապնդող կազմակերպությունները մրցութային կարգով կարող են դիմել և դաշնային ֆինանսավորում ստանալ՝ գրագիտության և այլ տիպի ՄՅԿՈւ ապահովելու նպատակով։

Բազմաթիվ երկրներ գումարներ են հատկացնում ներգաղթողների մշակութային և լեզուների ուսուցման համար, և որոշակի բացառությամբ, այդ դասընթացներն իրականացվում են անվճար։ **Իսրայելի** զեկույցում նշված է, որ ՄՅԿՈւ ոլորտին հատկացվող բյուջեում մեծ տեղ է գրավում ներգաղթողներին տրվող երթայերեմի ուսուցման ծախսերը։

Բազմաթիվ երկրներ հատուկ ռազմավարություն են ընդունել, որով խրախուսում են ձեռնարկություններին՝ ՄՅԿՈւ-ն դարձնել իրենց աշխատավայրի և բիզնեսի զարգացման առանցքային բաղադրիչ։ Այդուհանդերձ, զեկույցներում գործատուների ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը լիարժեք չէ։ Ըստ IALS-ի տրամադրած տվյալների, զբաղված մեծահասակների ուսուցումը հիմնականում ֆինանսավորվում է ձեռնարկությունների կամ անհատ ձեռներեցների կողմից, իսկ կառավարության կողմից ֆինանսավորվում է գործազուրկների և աշխատուժի շրջանակներից դուրս գտնվող անձանց ուսուցումը (OECD և Կանադայի վիճակագրություն 2000)։

Տարածաշրջանի ինը երկրների՝ **Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Պորտուգալիս, Շվեդիա, Շվեյցարիա և Միացյալ Թագավորություն (Անգլիա)**, վերաբերյալ առկա համեմատելի տվյալները ցույց են տալիս, որ ուսուցում ստացած անձանց ավելի քան 50%-ը վերապատրաստվել են գործատուի աջակցությամբ (OECD 2003)։ Գրեթե բոլոր երկրներում հանրային/պետական գործատուները ֆինանսավորում են պետական աշխատողների ուսուցումն աշխատավայրում։ **Հարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ-ի** երկրներում այս գործունեությանն աջակցում

են ԵՄ-ն և այլ դոնորները, որպես պետական հաստատությունների կայացման և հզորացման մի մաս: Աշխատողների հմտությունների կատարելագործումը հաճախ սոցիալական գործընկերների միջև աշխատավարձի/աշխատանքային պայմանագրի մաս է կազմում,

Բոլոր երկրներում, Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) ամենացածր հավանականությունն ունեն ներդրումներ կատարելու իրենց աշխատակիցների հմտությունների կատարելագործման համար:

Դանիայում 2007թ. սոցիալական գործընկերներն ու կառավարությունը ստորագրեցին ցկյանս ուսումնառության ֆինանսավորման շրջանակային պայմանագիր, իսկ գործընկերները պարտավորվեցին 2009թ. վերանայել ցկյանս ուսումնառության բարեփոխումները: **Ֆրանսիայում** և **Յունգարիայում** գործատուները օրենքով սահմանված կարգով պարտավորված են որոշակի գումար հատկացնել ուսուցման ազգային հիմնադրամին կամ սահմանված գումարը ծախսել իրենց աշխատակիցների ուսուցման վրա: Սակայն ԵՄ-27+ երկրներում ընթացակարգերը խիստ տարբեր են:

Միացյալ Թագավորությունում, կրթության և ուսուցման «շուկայի» արդյունավետության բարելավման նպատակով, կազմավորվում են երկու նոր կառույցներ, որոնք կբարելավեն գործատուների և անհատների միջև տեղեկատվական կապը: Վերջերս ստեղծվել է միջնորդ ծառայություն՝ «Ուսուցում ձեռքբերման նպատակով», որի նպատակն է աջակցել գործատուներին պարզելու և կազմելու ուսուցման այնպիսի դասընթաց, որը համապատասխանում է տվյալ բիզնեսի կարիքներին (և սուբսիդավորել տվյալ ուսուցման դասընթացը, եթե այն պետական գերակայություն է): Սրան զուգահեռ նախատեսված է առավել ընդլայնված Մեծահասակների Առաջընթացի և Կարիերայի Ծառայության հիմնում, որը տեղեկատվություն, խորհուրդ և աջակցություն կտրամադրի այն անհատներին, ովքեր ձգտում են ստանալ աշխատավայրում և կյանքում իրենց կարիքներին համապատասխան կրթություն և ուսուցում:

Շոտլանդիայում միևնույն նպատակով հիմնվել է մի նոր մարմին՝ Հմտությունների Ջարգացում-Շոտլանդիան: **Ռումինիայի** զեկույցում նշված է, որ 2006թ. իրականացված մի հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ Ռումինիայի և մնացած ԵՄ-27 երկրների միջև անհամապատասխանությունը շարունակում է

մնալ նույն մակարդակի վրա, ինչ 1999թ. էր, այսինքն՝ Ռուսիայի ձեռնարկությունների կողմից մեկ գործատուի համար կատարվող ներդրումը կազմում էր ԵՄ միջին ցուցանիշի ընդամենը մեկ երրորդը:

Բազմաթիվ իրավիճակներում ուսուցման պատասխանատվությունը »փոխանցվում է« ձեռնարկությունից՝ աշխատողին:

Չարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ-ի շատ երկրներում գործատուները հաճախ շատ քիչ հետաքրքրվածություն կամ ընդհանրապես ոչ մի հետաքրքրվածություն չեն ցուցաբերում իրենց աշխատակիցների հմտությունների կատարելագործման հարցում, կամ, եթե տեղյակ են հմտությունների կատարելագործման նշանակությունից, ի վիճակի չեն կամ ցանկություն չունեն ֆինանսավորում հատկացնել այդ նպատակով: Ըստ **Սերբիայի** զեկույցի,

փոքրաթիվ գործատուներ իրոք վճարում են հմտությունների կատարելագործման համար, սակայն մեծամասնությունը չի ընկալում ՄՅԿՈՒ-ի անհրաժեշտությունը:

Գրեթե բոլոր ազգային զեկույցները շատ քիչ տեղեկատվություն են պարունակում (կամ գրեթե չեն պարունակում) ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի ֆինանսավորման վերաբերյալ՝ պետական, թե կրթություն իրականացնող կազմակերպությունների կամ մասնակիցների ինքնաֆինանսավորման միջոցով: Կրթություն իրականացնող կազմակերպությունները տարբեր են՝ սկսած բացառապես կրթական հաստատություններից մինչև այնպիսի կազմակերպություններ, որոնք կրթական գործունեություն են իրականացնում առավել լայն սոցիալական գործունեության և/կամ ընտրարշավների կազմակերպման շրջանակներում: Այս շարքում կան կրթություն իրականացնող այնպիսի կազմակերպություններ, որոնք հիմնվում են բացառապես պետական/հանրային ֆինանսավորման վրա, կան այնպիսիները, որոնք ֆինանսավորվում են խառը աղբյուրներից և այնպիսիները, որոնք ամբողջովին ինքնաֆինանսավորվող են:

Ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի նկատմամբ կառավարության մոտեցումները շատ տարբեր են, և այդ մոտեցումներն իրենց արտահայտությունն են գտնում ներդրումային քաղաքականություններում և ներդրումների մակարդակում: Համապատկերի ծայրում կառավարությունը բացառապես ճանաչում է ֆորմալ ՄՅԿՈՒ-ին ներհատուկ արժեքը որպես «հանրային», ինչպես նաև «մասնավոր» սեփականություն, «կոլեկտիվ», ինչպես նաև անհատական օգտակարությամբ՝

նպաստելով փոխհամաձայնության կայացմանն ու սոցիալական համախմբմանը: Այն հիմնարար դեր է կատարում ակտիվ քաղաքացիական հասարակության կայացման և ժողովրդավարական ինստիտուտների պահպանման գործում, ինչպես նաև այն անհատներին ներգրավելու գործում, ովքեր, շատ քիչ հավանական է, որ կներգրավվեն ՄՀԿՈՒ-ում: Այսպիսով, ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ն ավելի շատ պայմանավորված է առաջարկով, հանրային և ոչ կառավարական հաստատությունների կայացած ենթակառուցվածքների ներքո: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները(ՔՀԿ) պետական ֆինանսավորում են ստանում՝ միևնույն ժամանակ պահպանելով իրենց անկախությունը կրթության բովանդակության և կազմակերպման հարցում, որի վերաբերյալ նրանք պետք է հաշվետու լինեն՝ պետական ֆինանսավորում ստանալու համար: Այսպիսին է իրավիճակը հիմնականում մի շարք **Սկանդինավյան** երկրներում, որտեղ մեծահասակների լիբերալ կրթությանը պետական աջակցության երկարամյա ավանդույթը պահպանվում է 2008թ.: Համապատկերի մյուս ծայրում, պետության կողմից ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ի նկատմամբ բացահայտ սահմանափակ պատասխանատվության ստանձնումն է ժողովրդավարական ինստիտուտների և սոցիալական համախմբման պահպանման և/ կամ ստեղծման գործում, այս երևույթը գերակշռում է բազմաթիվ երկրներում: Այս երկրներում ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ն ֆինանսավորվում է բազմաթիվ օրենքով չնախատեսված, մասնավոր, բարեգործական և պահանջարկի կողմ հանդիսացող աղբյուրներից, սահմանափակ պետական ֆինանսավորմամբ կամ, իրականում, դրա իսպառ բացակայությամբ, այս երկրներին բնորոշ է ՄՀԿՈՒ իրականացման սահմանափակ կարողություններով, բևեռացված քաղաքացիական հասարակություն և, այսպես կոչված, «բոլոր հանգամանքներում՝ հերոսական» մոտեցումը՝ առավել համակարգված և պրոֆեսիոնալ մոտեցման փոխարեն (Յուրդիս 2007):

Ֆինլանդիայում , որտեղ մեծահասակների լիբերալ կրթությունը մոտավորապես կիսով չափ ֆինանսավորվում է պետության կողմից, ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ի վերաբերյալ կազմված զեկուլյցի հիման վրա մշակվեց օրենսդրություն (2006), որի միջոցով ամրապնդվեցին ժողովրդական ավագ դպրոցները և կրթական ասոցիացիաների գործունեության մեջ առաջնությունը տրվեց քաղաքացիների կրթությանը: **Շվեդիայում**, մեծահասակների լիբերալ կրթությունը հիմնականում ֆինանսավորվում

է պետական դրամաշնորհների միջոցով, որոնց լրացնում են մասնակիցների վճարները: **Էստոնիայում**, մոտավորապես 45 ոչ ֆորմալ կրթության կենտրոններին տրամադրվող պետական գումարները հատկացվում են մրցութային կարգով: Մնացած գրեթե բոլոր ԵՄ-27+ երկրներում լիբերալ կամ հանրամատչելի կրթությունը վճարովի է: **Հարավ-արևելյան Եվրոպայի** և **ԱՊՅ**-ի երկրներում ոչ ֆորմալ կրթությունը իրականացնող ԲՀԿ-ները աջակցություն են ստանում արտասահմանյան դոնորներից: **Խորվաթիայում**, ԲՀԿ-ի կողմից իրականացվող ՄՀԿՈՒ ծրագրերը ֆինանսավորվում են հիմնականում միջազգային նվիրատվությունների շնորհիվ, իսկ պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորումը կազմում է ծախսերի մոտավորապես 30%: 2004-2007թթ. ընթացքում Խորվաթիայի ԲՀԿ-ները տարբեր ծրագրերի և նախագծերի, ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման, մարզերի զարգացման և ապակենտրոնացման ծրագրերի համար ստացել են ընդհանուր թվով 878 դրամաշնորհ: Ըստ **Հայաստանի** զեկույցի, մոտավորապես 300 ՈԿԿ-ներ, որոնք ՄՀԿՈՒ են իրականացնում քաղաքացիական, մշակութային և համայնքային զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության թեմաներով, ընդհանուր առմամբ, ֆինանսավորվում են միջազգային դոնորների, իսկ որոշ չափով նաև պետական և եկեղեցական կառույցների կողմից: Բազմաթիվ երկրներ (օրինակ՝ **Կիպրոս** և **Սլովակիա**) նշում են, որ չկա հավաստի վիճակագրական տեղեկատվություն անհատների կամ ընտանիքների կողմից իրենց ուսումնառությանը հատկացվող գումարների վերաբերյալ: Այդուհանդերձ, բացի գերակա հատուկ թիրախ խմբերից, պարզվում է, որ ուսումնառության ծախսերը գնալով ավելի ու ավելի են փոխանցվում անհատներին: **Գերմանիայում**, 1996-2006թթ. ընթացքում անհատների ՄՀԿՈՒ ուղղակի ծախսերը, որպես ուղղակի ծախսերի ընդհանուր ֆինանսավորման մաս, աճել են 31.2%-ից 47.7%: **Սլովենիայում**, ազգային հետազոտության արդյունքում պարզվեց, որ ֆորմալ ՄՀԿՈՒ ծրագրերի մասնակիցների մոտավորապես երկու երրորդը իրենք են վճարում իրենց ծախսերի դիմաց: **Լեհաստանում**, որտեղ հիմնականում բոլոր ՄՀԿՈՒ դասընթացներն առաջարկվում են առևտրային ուսուցման ծառայությունների ազատ շուկայի կողմից, հետազոտությունները ցույց են տալիս, որ գնահատված հաստատություններում դասընթացների արժեքի 33.4% վճարում են ուսանողները: **Հայաստանում**, իրենց ՏՀՏ, լեզուների ուսուցման կամ հաշվապահության դասընթացների համար վճարող

մեծահասակները «ամենաակտիվ (ՄՅԿՈՒ) դերակատարների շարքում են»: Անհատների՝ իրենց ուսումնառության համար վճարելու աճող ճնշման համատեքստում, նշանակալի է CEDEFOP-ի (2003) հետազոտությունը, մասնավորապես պետական մարմինների համար: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ ԵՄ-15 երկրներում մեծահասակների 39-47% չեն փոխհատուցի ՄՅԿՈՒ-ում իրենց մասնակցության արժեքը: Կարևոր է նշել, որ իրենց ՄՅԿՈՒ ուսումնառության համար վճարել պատրաստ անձանց առավելագույն քանակը կազմում է 51%, սակայն նրանք ակնկալում են, որ ՄՅԿՈՒ-ի արդյունքում «կբարելավվի իրենց անձնական կյանքը»:

ՄՅԿՈՒ ոլորտում ներդրումների խթանում

ՄՅԿՈՒ ոլորտում առաջընթացը զսպող հանգամանքները բազմաթիվ են: Առաջին, այն տեսակետը, որ ՄՅԿՈՒ-ն հիմնականում «մասնավոր սեփականություն» է, չի խրախուսում պետական մարմիններին ներդրումներ կատարել ՄՅԿՈՒ ոլորտում: Երկրորդ, չլուծված վեճերը այն մասին, թե ՄՅԿՈՒ-ն ֆինանսավորելը ներդրում է, թե՞ ծախս, կարող է խոչընդոտ հանդիսանալ ՄՅԿՈՒ ֆինանսավորման համար: Երրորդ, OECD (2005)-ի տեսակետները, թե ՄՅԿՈՒ-ին հատկացվող պետական ֆինանսավորումը պետք է սահմանափակվի, հիմնավորում և/կամ հաստատում են պետության կողմից ծախսվող գումարների կրճատումը և/կամ հավելման պակասը: Չորրորդ, ՄՅԿՈՒ-ի վերաբերյալ առկա ոչ լիարժեք տեղեկատվությունը և դրա՝ սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական և անձնական օգուտների տեսանելիության պակասը չեն շահագրգռում բոլոր շահագրգիռ կողմերին: Հինգերորդ, ռեսուրսների սակավությունը խոչընդոտ է կառավարությունների, ձեռնարկությունների և անհատների համար: Եվ ի վերջո, ՄՅԿՈՒ ոլորտում փողի, ժամանակի, էներգիայի, ակնկալիքների ներդրումը, անկախ այն հանգամանքից՝ դա իրականացնում է կառավարությունը, գործատուն, քաղաքացիական հասարակությունը, թե անհատը, վատ համբավ ունի որպես ռիսկային բիզնես՝ ծախսերի վերադարձելիության առումով (OECD 2005): Վերջերս ավելի ու ավելի է շեշտադրվում ՄՅԿՈՒ-ի նկատմամբ պահանջարկի խթանումը, սակայն շատ երկրներում չկա զուգահեռ մոտեցում ՄՅԿՈՒ-ի նկատմամբ պետական առաջարկն

ավելացնելու վերաբերյալ: Սա պայմանավորված է տնտեսական ճնշումներով և ՄՅԿՈՒ-ում աճող շուկայամետ կողմնորոշման: Այսպիսով, պետական մարմինները ձգտում են խթանիչներ ստեղծել, որպեսզի այլ շահագրգիռ կողմեր ևս ներդրումներ կատարեն ՄՅԿՈՒ-ում, հաճախ ծախսերի համաֆինանսավորման սկզբունքով: Այս նպատակով պետական մարմինները ստեղծում են համապատասխան կանոնակարգման և ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ ուղղված կառավարության առավել ցածր մակարդակների, ձեռնարկությունների և անհատների կողմից ներդրումների ծավալների ընդլայնմանը:

ԱՄՆ-ում, նահանգները ՄՅԿՈՒ ոլորտի ֆինանսավորումն իրականացնում են երկու բաղադրիչների համադրության միջոցով, ի լրումն իրենց սեփական բյուջեների: Առաջինը՝ դաշնային կառավարության փոխանցումներն են ըստ բնակչության կարիքների, վերադարձման փոխհամաձայնությամբ: Երկրորդը՝ վերևից եկող ֆինանսավորումն է, որի հիմքում ընկած է Հաշվետվությունների Ազգային Համակարգի (ՀԱՀ)՝ կրթական առաջընթացի և ծրագրի ավարտից հետո մասնակիցների՝ աշխատաշուկայում տեղավորվելու կատարողական չափումները:

Գործատուներին ուղղված քաղաքականություններն են՝ հարկային արտոնությունները, սուբսիդիաներն ու ուսուցման վարկերը (հատկապես ՓՄՁ-ների համար), կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերը, որոնք հանգեցնում են ուսուցման հիմնադրամների ստեղծման և պարտադիր համաձայնագրերը՝ հարկերից զանձված գումարների վրա հիմնված սխեմաներով: Մի քանի ուսուցման հիմնադրամներ ֆինանսական աջակցություն են ստացել ESF-ից: Աշխատողների հմտությունների կատարելագործումը և/կամ նոր հմտությունների ուսուցումը հաճախ կազմում են սոցիալական գործընկերների միջև կնքված պայմանագրերի մաս (Եվրոպական Հանձնաժողով 2007դ):

Իրենց ուսումնառության համար ներդրումներ կատարելու նպատակով անհատների համար խթանիչներ ստեղծվում են անհատներին ուղղված, պահանջարկով պայմանավորված ավելի շատ սխեմաների միջոցով: Այդ սխեմաները ֆինանսավորվում են պետականորեն, պետական երաշխավորման մեխանիզմի, սոցիալական գործընկերների կամ խառը ֆինանսավորման միջոցով, որը գումարը, հիմնականում աշխատաշուկայի նպատակներից ելնելով, ուղղակիորեն տրամադրում է ուսումնառուին, այլ ոչ թե կրթություն իրականացնող հաստատությանը:

Պահանջարկի կողմից ֆինանսավորումը կառուցվում է այն համոզմունքի հիման վրա, որ անհատի համար լավագույն տարբերակը սեփական ուսումնառությունն ընտրելն է և այն ակնկալիքը, որ շուկայական հարաբերությունների նմանվող հարաբերությունների ձևավորումը կրթության և ուսուցման ոլորտում կբարձրացնի որակը՝ կրթություն իրականացնող հաստատությունների միջև մրցակցությունը մեծացնելով: »Ռիսկային խմբում գտնվող« մեծահասակների ուսումնառության հարցում արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ է խստապահանջ լինել խթանիչների թիրախավորման հարցում և աջակցել այնպիսի միջոցներով, ինչպիսիք են ուղղորդումը, ուսումնառության անհատական պլանները, աջակցություն ուսումնառությանը, անվճար նյութեր/քննություններ և երեխաների խնամք:

Պահանջարկը ներկայացնող կողմին կարող են առաջարկվել ֆինանսական կամ ոչ ֆինանսական խթանիչներ: Օրինակ, հարկային արտոնությունները, որոնք կիրառվում են **Կիպրոսում, Էստոնիայում, Ֆինլանդիայում, Լիտվայում, Լեհաստանում և Սլովենիայում**, պասսիվ միջոցառումներ են, որոնց միջոցով ճանաչվում է արդեն կատարված ներդրումը: Մյուս միջոցառումներն ակտիվ են, քանի որ դրանք ուղղված են պահանջարկի խթանմանը և ընդգրկում են բազմաթիվ սոցիալական բնույթի միջոցառումներ (օրինակ, եկամտի պահպանում, երեխայի/ընտանեկան նպաստ, բնակարանային նպաստ, կրթաթոշակներ/ուսման դիմաց վճարելու համար տրվող գումար՝ նպաստ և տրանսպորտային ծախսեր), կոնկրետ ֆինանսական օգնություն՝ հնարավոր ծախսերի փոխհատուցման, վարկերի դրամաշնորհների, ուսուցման բոնուսների, կրթաթոշակների, ուսուցման վաուչերների, անհատական կրթական հաշիվների, հետվճարման պայմանների և կրթության նպատակով տրվող վճարվող արձակուրդների տեսքով:

Ավստրիայում, 2002-2006թթ. ընթացքում թողարկվել է մոտավորապես 290000 ուսուցման վաուչեր: 2007թ. ի վեր **Շվեդիայում**, ուսուցման վաուչերների համակարգը հնարավորություն է տալիս լիբերալ կրթություն իրականացնողներին նվազեցնել ամենից քիչ ներկայացված խմբերի անհատների կողմից վճարվող վարձերը: **Գերմանիայում**, 2006թ. ի վեր Հյուսիսային Ռայն Վեստֆալիայում վերաթողարկվել են ավելի քան 100000 »կրթական չեքեր«:

Անհատական կրթական հաշիվեր կան մի շարք երկրներում, այդ թվում՝ **Նիդեռլանդներում: Սոնտենեգրոյում** տարրական տառաճանաչության ծրագրերի

մասնակիցները, որպես մասնակցության խթանիչ, ստանուն են նվազագույն աշխատավարձին համարժեք գումար:

Բազմաթիվ երկրներում կրթության նպատակով տրվող վճարվող արձակուրդի իրավունքը, հիմնականում բացառապես մասնագիտական ՄՅԿՈՒ-ի նպատակով, ամրագրվում է օրենքում, կոլեկտիվ համաձայնագրերում կամ երկուսում էլ:

Մասնակցություն Մեծահասակների Կրթությանը և Ուսումնառությանը

Թեմա 2. Մեծահասակների ուսումնառության պայմանների և որակի բարելավում, ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի պատվիրակները պարտավորվում են

լուծել մեծահասակների ուսումնառության հնարավորություն ունեցող և չունեցող մարդկանց միջև աճող անհավասարության խնդիրը և պայմաններ ստեղծել մարդկանց՝ ուսումնառության նկատմամբ պահանջարկը՝ քաղաքականության, օրենսդրության և մուտքի միջոցառումների (այդ թվում ուղղորդում և խորհրդատվություն, ընդլայնված համապատասխանություն, գործակալությունների միջև ընդլայնված համագործակցություն) մշակման միջոցով արտահայտելու համար: (Ապագայի Օրակարգ, Պարբ.՝ 16-21, էջ՝ 13-15)

Տարածաշրջանում մեծահասակների կրթական նվաճումները

Ուսումնառությունը մի գործընթաց է, որն ընդգրկում է կյանքի ողջ պարբերաշրջանը, և, հետևաբար, մի մակարդակի նվաճումները հիմք են հանդիսանում հաջորդ մակարդակում նոր հմտությունների և կարողությունների ձեռքբերման համար: Նախնական կրթության ընթացքում ձեռքբերված մակարդակները, հետևաբար, նշանակալիորեն ազդում են անհատի՝ մեծահասակների կրթությանն ու ուսումնառությանը մասնակցելու վրա. կրթական ցածր ձեռքբերում ունեցողները քիչ հավանական է, որ կմասնակցեն ՄՅԿՈՒ-ում: Սա »երկսայր սրի« ազդեցությունն է, որի միջոցով ցկյանս ուսումնառությունը կարող է անհավասարությունների խորացման ազդեցություն ունենալ բնակչության կրթական և հմտությունների մակարդակում ընդհանրապես (Յուրիդիս 2007):

Բոլոր ԵՄ-27+ երկրներն իրենց զեկույցներում նշում են, որ 2000-2006թթ.ընթացքում բնակչության շրջանում գրանցվել է կրթության միջինից՝ բարձր մակարդակներ անցման աճ: Այդուհանդերձ, 2008թ.դեռևս 108 միլիոն մարդ (ԵՄ աշխատուժի գրեթե մեկ երրորդը) ունի ընդամենը միջնակարգ կրթության ցածր մակարդակներին համարժեք կրթություն (Եվրոպական Հանձնաժողով 2007գ):

Մեծահասակների կրթական ձեռքբերումների մակարդակներում տարբեր երկրների միջև առկա են խորը տարբերություններ: 10 երկրներում՝ **Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Գերմանիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Սլովենիա, Սլովակիա և Շվեդիա**, բնակչության մինչև 20%-ն ունի ցածր կրթական ցենզ (տարրական/կրտսեր միջնակարգ), իսկ 4 երկրներում՝ **Իտալիա, Մալթա, Պորտուգալիա և Իսպանիա**, նույնպիսի կրթական ցենզ ունի բնակչության ավելի քան 40%-ը: 2000թ. ի վեր ԵՄ-ում մի փոքր ավելացավ միջնակարգ դպրոցի ավագ դասարաններում կրթություն ստացածների թիվը՝ 20-24 տարեկանների 76.6% ցուցանիշն աճեց՝ հասնելով 78.1%-ի 2007թ (Եվրոպական Հանձնաժողով 2008ա): 10 երկրներում՝ **Բելգիա, Կիպրոս, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Իռլանդիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա և Միացյալ Թագավորություն**, մեծահասակների ավելի քան 30%-ն ունի բարձրագույն կրթություն: Ըստ ԱՄՆ-ի զեկույցի, 2000թ. 191 միլիոն 16+ մեծահասակների 21%-ը չի ստացել ավագ դպրոցի դիպլոմ/կամ համարժեք և չեն ընդունվել դպրոց: Ի լրումն, հետազոտությունները ցույց են տալիս, որ 25-64 տարեկան մեծահասակների 25%-ը չի տիրապետում անգլերենին:

ԵՄ-27 երկրներում դպրոցը չավարտողների (18-24) թիվը նվազել է 2000թ. 17.6%-ից մինչև 14.8% (կանայք՝ 12.7%, թղամարդիկ՝ 16.9%) 2007թ. (Եվրոպական Հանձնաժողով 2008ա): Սկանդինավյան երկրները և վերջերս ԵՄ անդամ դարձած շատ երկրներում այդ ցուցանիշը կազմում է 10%, իսկ **Բուլղարիայում և Ռումինիայում**, համապատասխանաբար 18 և 19%: **Հարավ-արևելյան Եվրոպայում** ժամանակից շուտ դպրոցից հեռանալը/դպրոցը չավարտելը մտահոգիչ խնդիր է բոլոր երկրներում (Եվրոպական Կրթական Հիմնադրամ 2005): **Սերբիայում**, մեծահասակ բնակչության ավելի քան 22 տոկոսը չեն ավարտել տարրական դպրոցը:

Տարածաշրջանում մեծահասակների փաստացի կարողությունների վերաբերյալ տվյալների պակաս կա: Մեծահասակների Տառաճանաչության և Կյանքի Հմտությունների Ուսումնասիրությունը (ՄԳՀ) (OECD և Վիճակագրություն Կանադա

2005) ցույց է տալիս, թե երկրներն ինչպես են հաջողության հասել բազմաթիվ բնագավառներում հմտությունների բարձր մակարդակ ձևավորելու գործում, որոշ երկրներ կարողացել են բարելավել ողջ բնակչության հմտությունները, իսկ մյուսները առավել մոտ են կանգնած բոլորի համար ցկյանս ուսումնառության իրականացմանը: Յոթ երկրների/տարածաշրջանների, որոնցից հինգը գտնվում են ՅՈՒՆԵՍԿՈ-ի տարածաշրջանում և ներկայացված են սույն զեկույցում, հետազոտության արդյունքում պրոբլեմների վերլուծությունը, հաշվել իմանալ կարողանալը և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) հմտությունները ավելացել են IALS-ի հմտությունների ցանկում:

Բոլոր մեծահասակների շրջանում հմտությունների զգալի պակաս կա, սակայն վերջին տասնամյակի ընթացքում քաղաքականությունների շնորհիվ որոշակի առաջընթաց է գրանցվել: **Կանադան** հասել է ՏՀՏ հմտությունների համաչափ բաշխման, ինչի շնորհիվ բարձրացել է արտադրողականությունը, **Իտալիան** հասել է ողջ բնակչության շրջանում հմտությունների բարելավման ամենաարագ ցուցանիշի, **Նորվեգիան** հասել է հմտությունների միատեսակ բարձր մակարդակների և ամենամոտն է կանգնած ողջ բնակչության շրջանում ցկյանս ուսումնառությունը իրականություն դարձնելուն, **Շվեյցարիան** ամենից շատ բարձրացրել է հմտությունների ամենացածր մակարդակ ունեցողների կատարողականը: **Միացյալ Նահանգները**, իրենց բնակչության թվի համամասնությամբ, աշխարհում առաջին տեղն է գրավում հմտությունների բարձր մակարդակ ունեցող մեծահասակների թվով: Տարածաշրջանում մեծահասակների շրջանում ՏՀՏ կարողությունների բաշխման մակարդակի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ մեծահասակները «թվային բաժանման» երկու կողմում են բաշխված՝ ՏՀՏ մատչելիության և ՏՀՏ հմտությունների առումով:

2005թ., այն ժամանակ՝ ԵՄ-25 երկրներում, 16-74 տարեկան մեծահասակների մոտավորապես 40 տոկոսը ոչ մի համակարգչային հմտությունների չէին տիրապետում, իսկ 34 տոկոսն ընդհանրապես համակարգչից չէին օգտվել: Դանիայում գրեթե նույնքան մարդ, 10 տոկոս տարբերությամբ, չի օգտվոլ համակարգչից **Դանիայում**, իսկ **Հունաստանում** այդ ցուցանիշը կազմում է 65 տոկոս: Գրեթե բոլոր երկրներում սեռը նշանակություն չունի ՏՀՏ հմտություններում, իսկ

տարիքն՝ ունի. 55+ տարիքի մարդկանց 61 տոկոսը երբեք համակարգչից չի օգտվել (Եվրոպական Հանձնաժողով 2007գ):

Մասնակցությունը ՄՀԿՈՒ-ում

2003թ. ԵՄ-ն թիրախ սահմանեց մինչև 2010թ. 25-64 տարեկան մեծահասակների՝ ցկայնս ուսումնառությանը մասնակցության 12.5% աճ՝ մի հեռանիշ, որն արդեն իսկ Եվրոպական Ջբաղվածության Ռազմավարության մաս է կազմում: Տարբեր երկրներում ՄՀԿՈՒ *ընդգրկման ոլորտն ու ծավալը* տարբեր է, սակայն ՄՀԿՈՒ-ի *բաշխվածության* առումով երկրները զգալի նմանություններ ունեն: Կրթվածության բարձր մակարդակ ունեցող մեծահասակների կողմից ցկայնս ուսումնառության մասնակցության հավանականությունը վեց անգամ ավելի մեծ է, քան ցածր կրթություն ունեցող անձանց մասնակցության հավանականությունը: 25-64 տարեկան մեծահասակները, երբեք անգամ ավելի հավանական է, որ կմասնակցեն ցկայնս ուսումնառությանը, եթե նրանք ավարտել են միջնակարգ դպրոցի առնվազն ավագ դասարանները (Եվրոպական Հանձնաժողով 2007գ): զբաղվածություն ունեցող երիտասարդ մեծահասակները, որոնք բարձրագույն կրթություն են ստացել և հմտությունների բարձր մակարդակ պահանջող պաշտոն են զբավում մեծ ձեռնարկություններում, ՄՀԿՈՒ ամենահավանական մասնակիցներն են: ԵՄ-27 երկրներում ՄՀԿՈՒ ամենաքիչ հավանական մասնակիցներն են ցածր որակավորում կամ ընդհանրապես ոչ մի որակավորում չունեցող մեծահասակները, երկար ժամանակ անգործ մնացած մարդիկ, ովքեր կատարել են հմտություններ չպահանջող աշխատանք, տարեց մեծահասակները, հեռավոր գյուղական վայրերի բնակիչները, հաշմանդամները և ներգաղթողները: Բազմաթիվ մեծահասակներ տարաբնույթ դժվարությունների են հանդիպում: Այս համատեքստում ԵՄ-27 երկրներում կրթական ցածր մակարդակ ունեցող 108 միլիոն մեծահասակներ ազդարարում են ԵՄ-ում առկա մարտահրավերների մասին:

Տարածաշրջանում հիմնական մարտահրավեր շարունակում է հանդիսանալ մեծահասակների կրթության ոլորտում մասնակցության աճը: ԵՄ-27 երկրներում հահձման չորսշաբաթյա ժամանակահատվածում մասնացությունը 2000թ. 7.1%-ից 2007թ. հասել է 9.7% (կանայք՝ 10.6%, տղամարդիկ՝ 8.8%) (Եվրոպական

Հանձնաժողով 2008ա): 2006թ. ԵՄ-ում լավագույն ցուցանիշն ունեցավ **Շվեդիան** (32.1%), երկրորդ տեղում էր **Ղանիան** (29.2%) և **Միացյալ Թագավորությունը** (26.6%): Ամենացածր ցուցանիշներն ունեին **Բուլղարիան** և **Ռումինիան** (յուրաքանչյուրը 1.3%): Միայն յոթ երկրներ են ձեռք բերել 2010թ.՝ 12.5% մասնակցության թիրախը (Եվրոպական Հանձնաժողով 2007բ): 2006թ. ԵՄ-ում 25-64 տարեկան մեծահասակների մոտավորապես 2.3% մասնակցել է ֆորմալ ՄՅԿՈՒ-ին, իսկ 6.4% մասնակցել է ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ին: 25-64 տարեկանների 1%-ից էլ քիչն է մասնակցել թե՛ ֆորմալ և թե՛ ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ին: 12.5% թիրախին հասնելու համար անհրաժեշտ է, որ ևս չորս միլիոն մեծահասակներ մասնակցեն մեծահասակների կրթությանը և ուսումնառությանը (Եվրոպական Հանձնաժողով 2006ա):

Շվեյցարիան իր զեկույցում նշում է, որ «նկատվում է նվազման միտում» այլ տեսակետներից համեմատաբար կայուն մասնակցության ցուցանիշներում, իսկ մասնակցությունը «զգալի չափերի է հասել համեմատած մյուս OECD երկրների հետ»: **Իսրայելում** ՄՅԿՈՒ մասնակցությունը համարվում է «ժամանակակից կյանքի անբաժան մաս», սակայն, այնուամենայնիվ, մեծահասակների մեծամասնությունը չի մասնակցում ՄՅԿՈՒ-ին: **Վրաստանի** մեծահասակ բնակչությունը ավելի քիչ է ներգրավված ՄՅԿՈՒ-ում, «քան Եվրոպական գրեթե բոլոր երկրների մեծահասակ բնակչությունը»: Ոչ մի լուրջ պատճառ չկա, որը թույլ կտար ենթադրել, որ ՄՅԿՈՒ մասնակցությունը **Հարավ-արևելյան Եվրոպայի** և **ԱՊՀ**-ի երկրներում ավելին է, քան 1.3% մասնակցության ցուցանիշը, որը գրանցվել է 2007թ. **Ռումինիայում** և **Բուլղարիայում** չորսշաբաթյա հարցման ժամանակահատվածում 25-64 տարեկանների շրջանում անցկացված հետազոտության արդյունքում: **Ռուսաստանում** բնակչության մոտավորապես 30% մասնակցում է բոլոր տիպի ՄՅԿՈՒ-ին, սակայն հաիձման ժամանակահատված չի նշվում: 2001թ. **ԱՄՆ**-ում 16 և բարձր տարիքի մեծահասակների գրեթե 50% մասնակցել է ցկյանս ուսումնառության որոշ ձևերի: Այնուամենայնիվ, 2006-2007թթ. դաշնության կողմից ֆինանսավորվող ՄՅԿՈՒ ծրագրերին մասնակցել է հնարավոր մասնակիցների միայն 6% (մոտավորապես 2.4 միլիոն մարդ), մեծահասակների հիմնական կրթությանը (ՄՅԿ)՝ 38%, իսկ մեծահասակների միջնակարգ կրթությանը (ՄՄԿ)՝ 16%: Անգլերեն սովորող մեծահասակները կազմել են 2004-2005թթ. պետության կողմից կազմակերպված դասընթացների մասնակիցների 44%: Այս ցուցանիշը չի ներառում ՄՅԿ, ՄՄԿ կամ այլ

ծրագրերով Անգլերեն լեզու սովորողներին: **Կանադայում**, 2003թ. Մեծահասակների Տառաճանաչության և Հմտությունների Միջազգային Հետազոտությունը ցույց տվեց, որ մեծահասակ բնակչության 49% ներգրավված է մեծահասակների կրթության և ուսուցման կազմակերպված ծրագրերում, այդ թվում, դասընթացներ, սեմինարներ, ծրագրեր և այլ տիպի կազմակերպված կրթական առաջարկներ ուսումնական տարվա ընթացքում: ԵՄ-27 երկրներում ավելի շատ կանայք են մասնակցում ՄՀԿՈՒ-ում: Ջբաղվածություն ունեցող կանանց մասնակցության մակարդակը շարունակական ուսուցմանը տարբեր է՝ 55% **Ղանիայում**, **Ֆինլանդիայում** և **Շվեդիայում**, 10%-ից էլ քիչ **Հունաստանում**, **Իտալիայում** և **Հունգարիայում** և մոտավորապես 1%՝ **Ռումինիայում**: Տղամարդկանց մասնակցության մակարդակը ևս տարբեր է՝ ամենաբարձր ցուցանիշը՝ 50%, Ղանիայում է, իսկ ամենացածրը՝ 1%, Ռումինիայում (Բեկ-Դոմգասկա 2007): Որոշ երկրներում գերակշռում է կանանց մասնակցությունը մեծահասակների կրթության որոշակի տիպի գործունեությանը, օրինակ, **Լեհաստանում**՝ Երրորդ Սերնդի Համալսարաններում, **Թուրքիայում**՝ ընդհանրական տառաճանաչության և հատուկ տառաճանաչության ծրագրերում, **Իսրայելում**՝ հանրամատչելի համալսարաններում: Բոլոր ԵՄ-27+ երկրներում **տարիքի** հետ մասնակցության չափը զգալիորեն նվազել է: 55-64 տարեկան մեծահասակների մասնակցությունը երեք անգամ զիջում է 25-34 տարեկանների մասնակցությանը (25-34 տարեկանների մասնակցությունը կազմում է 15.5%, իսկ 55-64 տարեկաններինը՝ 4.6%) (Եվրոպական Հանձնաժողով 2007գ): **ԱՄՆ**-ում, 2004-2005թթ. ՄՀԿՈՒ մասնակիցների ընդամենը 4% են կազմել 60 տարեկան և ավելի մեծ տարիք ունեցող անձինք:

ՄՀԿՈՒ առաջնային փրախ խմբեր

Միջոցառումները հատուկ խմբերին փրախավորելը առաջնային է համարվում լավ չներկայացված մեծահասակների՝ ՄՀԿՈՒ-ում մասնակցության մակարդակը բարձրացնելու համար: Աշխատանքային տարիքի մեծահասակները և գործազուրկ մեծահասակները տարածաշրջանի բոլոր երկրներում համարվում են առաջնային փրախ խմբեր: Որպես գերակա քաղաքականություն ԵՄ-27+ շատ երկրներ նաև փրախավորել են 50+ տարիքի մեծահասակներին, այդ թվում՝ տարիքավոր

բանվորներին: **Գերմանիայում**, 50+նախաձեռնության առանցքը տարեց աշխատողների զբաղվածության մակարդակի բարձրացումն է, իսկ **Սլովենիայում** հատուկ միջոցառումներ են ձեռնարկվել բարելավելու հետ-պարտադիր կրթություն չունեցող, չափահաս աշխատողների և քաղաքացիների, ինչպես նաև տարեց և թռչակառու անձանց մուտքը ՄՀԿՈՒ: **Լեհաստանում**, «Միջսերնդային Չամերաշխություն 50+» ծրագիրը ներգրավում է գործատուներին, կրթություն իրականացնող կազմակերպություններին և զբաղվածության ծառայություններին՝ պահելու ավելի տարիքով մեծահասակներին աշխատուժի շրջանակներում: Չեխիայի Չանրապետությունը նպաստում է Երրորդ Սերնդի Չամալսարանների առաջխաղացմանը: Այդուհանդերձ, վերջերս ԵՄ-ին անդամակցած շատ երկրներում մարտահրավերը կապված է անցումային ժամանակաշրջանում գործազուրկ դարձած տարիքով աշխատողների հետ, որոնք լավ կրթություն են ստացել: **Ռուսաստանի Դաշնությունում**, ժողովրդական ավագ դպրոցները գրավում են ավագ ուսումնառուներին, իսկ **Իսրայելում** ուշադրության կենտրոնում են այն տարիքով ուսումնառուները, որոնք բնակվում են հանրամատչելի համալսարանների տարածքներում, որոնք կամ մատչելի չեն, կամ շատ թանկ արժեն: **Կանադայում** Տարիքով Աշխատողների Թիրախ Նախաձեռնությունը դաշնային-մարզային/տարածքային հիմունքներով համաֆինանսավորվող նախաձեռնություն է, որն աջակցում է տարեց գործազուրկներին այն համայնքներում, որտեղ զգալի կրճատումներ են լինում կամ ձեռնարկություններ են փակվում: **Ավստրիայում**, **Չունաստանում** և **Լիտվայում** ձեռնարկվել են գործազուրկ կանանց վերապատրաստումներ: Այնուամենայնիվ, **Շվեյցարիայում**, տղամարդիկ ավելի լավ ծառայություն են ստանում ընկերությունների աջակցությամբ իրականացվող կրթություն և ուսուցում ստանալիս, ինչպես նաև պետության աջակցությամբ իրականացվող մեծահասակների ուսումնառության գործընթացներում (ուր ՄԿՈՒ օրենքով աջակցություն ստացող ՄՀԿՈՒ մասնակիցների մոտավորապես 80%-ը տղամարդիկ են), քան կանայք: **Շվեյցարիայում**, հատուկ թիրախ խմբերում ընդգրկված են հմտությունների ցածր մակարդակ ունեցող անձինք և կրկին աշխատաշուկա մուտք կատարող կանայք: **Դանիայում** թիրախ է սահմանվել ընթերցանության, գրավորի և մաթեմատիկայի դասընթացների մասնակիցների թիվը հասցնել տարեկան 40000-ի: **Միացյալ Թագավորությունում** կառավարության

հիմնական առանցքը բնակչության որակավորումների կատարելագործումն է և բարձր մակարդակի որակավորումներ ունեցողների ու այսպես կոչված «26-ից ցածր նվաճումների երկար շարանի» միջև ճեղքվածքը/անամապատասխանատվությունը նվազեցնելը: Ի սկզբանե, գործատուները և անհատները ներդրումներ չեն կատարել որակավորումների 2-րդ մակարդակում, քանի որ արդյունավետության բարձրացման, վճարման կամ աշխատանքի ապահովության հետ կապված ուղղակիորեն չափելի օգուտներ չկան: Այնուամենայնիվ, այս մակարդակի որակավորումները համարվում են առանցքային պլատֆորմ հետագա հմտությունների զարգացման համար: Այսպիսով, շուկայական տնտեսության ձախողման հարցերին անդրադառնալու և բարձր-հմտություններով տնտեսություն ստեղծելու նպատակով կառավարությունը որոշում է կայացրել հանրային կրթությանը հատկացող գումարներն ուղղել՝ օգնելու մարդկանց ձեռք բերել ապրելու համար անհրաժեշտ հմտություններ, որակավորումների ամբողջ 2-րդ մակարդակը կամ որակավորումների 3-րդ մակարդակը:

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկներում մտահոգիչ խնդիր է միգրանտների լեզվի և մշակույթի ուսուցումը և նրանց՝ աշխատաշուկայի հմտություններով ապահովումը: **Իսպանիայում**, ներգաղթողների սոցիալական ինտեգրման ազգային ծրագրի շրջանակներում լեզվի ուսուցման դասընթացներ են կազմակերպվում մեծահասակ ներգաղթողների համար, կազմակերպվում են իրազեկման բարձրացման արշավներ և մշակութային հանդուրժողականության բարձրացում, միջմշակութային միջնորդների և ֆասիլիտատորների վերապատրաստում մարզային և տարածքային մակարդակներում: **Հարավ-արևելյան Եվրոպայում**, ուր բնակչության էթնիկ կազմը բազմատարր է, երկրները արձագանքում են տեղահանված տեղաբնակ խմբերի և ազգային փոքրամասնությունների կարիքներին, մասնավորապես Հռոմի մեծահասակների կարիքներին, որոնց կրթական մակարդակը որպես կանոն ցածր է: 2005թ. յոթ (այժմ՝ ինը) երկրներ (**Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Հունգարիա, Հարավսլավիայի Նախկին Մակեդոնիայի Հանրապետություն, Սոնտենեգրո, Ռումինիա, Սերբիա և Սլովակիա**) հայտարարեցին, որ միասին աշխատելու են Հռոմի ընդգրկման տասնամյակների վրա -2005-2015թթ.: **Ռուսաստանի Դաշնությունում** մեծ թվով միգրանտների հոսքի արդյունքում օրակարգային հարց է դարձել լեզվի դասընթացների և մշակութային ուսուցման

Ֆինանսավորման հարցը: **Իսրայելում**, որտեղ մինչև 2006թ. ընկած տասնամյա ժամանակահատվածում ավելի քան 500.000 հրեաների հոսք գրանցվեց, եբրայերենի ուսուցումը առաջնային գերակայություն է: Վերջին տարիներին **ԱՄՆ**-ում ևս զգալիորեն աճել է ներգաղթը, ինչի արդյունքում աճել է անգլերեն լեզվի ուսուցում ստանալու պահանջարկը:

Առանձին երկրներ նշում են կոնկրետ թիրախ խմբեր. հաշմանդամները՝ **Սլովենիայում** և **Սերբիայում**, բանտարկյալները՝ **Բելգիայում** (Ֆր), **Էստոնիայում**, **Լատվիայում**, **Նորվեգիայում**, **Շվեդիայում** և **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում**, տուրիզմի ոլորտը՝ **Բուլղարիայում**, երիտասարդ զորացրված զինվորները, համայնքային ակտիվիստները և ոչ-հրեական խմբերը՝ **Իսրայելում**, գյուղատնտեսական ոլորտի աշխատողները՝ **Սերբիայում** և **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում**, դատական, առողջապահական, տնտեսական զարգացման, զբաղվածության և գյուղական վայրերի զարգացման մասնագետները՝ **Հայաստանում**, պետական ծառայողներն ընդհանրապես՝ **Հարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ-ի** երկրներում: **ԱՄՆ**-ում ՄՀԿՈՒ «բնակչության հատուկ խավը» 40 տարի շարունակ ընդգրկում է հաշմանդամներին, տնտեսապես անհաջողակ անհատներին, միայնակ ծնողներին և անգլերենին վատ տիրապետող անձնանց:

ՄՀԿՈՒ մասնակցության խոչընդոտների հաղթահարում

ՄՀԿՈՒ մասնակցության խոչընդոտները բազմատարածական է՝ պայմանավորված. թե առաջարկի և թե պահանջարկի կողմերի գործոնների համադրությամբ: Առաջինի գործոններն են մեծահասակների կյանքի տարբեր իրավիճակները և նրանց մոտեցումներն ուսումնառությանը, իսկ վերջինիս գործոնները կապված են քաղաքականության, տեղեկատվության և կրթություն իրականացնողի հետ:

Առաջարկի-կողմի խոչընդոտների հասցեագրումը կարող է խորացնել պահանջարկի մասի խոչընդոտները: Պահանջարկի կողմում, մասնակցությանը խանգարող կյանքի տարբեր իրավիճակներն են՝ կրթության ցածր մակարդակը և հիմնական հմտությունների պակասը, գործազրկությունը, տեղական աշխատաշուկաները, որոնք ցածր հմտություններ ունեցող աշխատողների կարիք ունեն, սահմանափակ

ֆինանսական ռեսուրսները, հեռավոր գյուղական վայրերում տրանսպորտի բացակայությունը, ֆիզիկական, զգայական և/կամ սովորելու սահմանափակ կարողությունները (հաշմանդամություն), ազգային պատակնելիությունը, տարիքը և ընտանեկան պարտականությունները: Բազմաթիվ ցածր հմտություններ ունեցող անձինք չունեն ՄՅԿՈՒ մասնակցության համար անհրաժեշտ տարրական հմտություններ, օրինակ, **Լիտվայում, Լեհաստանում և Թուրքիայում: Սերբիայի** զեկուլյցում նշված է, որ Հռոմի բնակչության կրթական ցածր մակարդակը (ավելի քան 60 տոկոսն անգրագետ է և չունի տարրական կրթություն): Բազմաթիվ մեծահասակներ չեն զգում մասնակցության և աշխատավարձի բարձրացման համապատասխանություն, իսկ ՄՅԿՈՒ-ում ժամանակի և փողի ներդրման արդյունքները անմիջականորեն տեսանելի չեն, ինչպես նկատել են **Գերմանիայում, Լատվիայում, Լիտվայում, Նորվեգիայում, Սերբիայում և Սլովենիայում:** Ի լրումն, ցածր հմտություններ ունեցող մեծահասակները տհաճ փորձառություն են ունեցել կապված իրենց նախնական կրթության հետ և հնարավոր է, որ բավական ինքնավստահություն չունենան՝ ՄՅԿՈՒ մասնակցության համար: Բացի այդ, Կենտրոնական, Արևելյան և Հարավ-արևելյան Եվրոպայում շատ մեծահասակների հիշողության մեջ վառ է այն ժամանակաշրջանը, երբ կրթությունը շարունակելն «ավելի շուտ տանջանք էր, քան հնարավորություն/առավելություն» և, հենց այդ պատճառով էլ ցանկություն չունեն մասնակցել մեծահասակների կրթությանը և ուսումնառությանը (Սթիվ 2007):

2006թ. ԵՄ Հաղորդագրությունը (Եվրոպական Հանձնաժողով 2006ա) պնդում է, որ պետական իշխանությունները պետք է նախաձեռնեն և առաջատար դեր կատարեն արգելքների հաղթահարման և ՄՅԿՈՒ-ի պահանջարկի առաջխաղացման նպատակով: Թե առաջարկի և թե պահանջարկի կողմում առաջ եկող արգելքները հաղթահարելու համար համատեղ գործողություններ պետք է իրականացվեն քաղաքականության բոլոր ֆրոնտերում՝ ստեղծելու համապատասխան իրավական, ղեկավարման, ֆինանսական, մուտքի, ուսումնառության, որակավորումների և որակի շրջանակներ և նպատակային փոխկապակցված միջոցառումներ: **Սլովենիայում** իրականացվել է ազգային հետազոտություն, որի արդյունքում պարզվել է, որ մասնակցության աճը պայմանավորված է հետևյալով՝ կոնկրետ տարիքային խմբերին հարմարեցված խթանիչներ, դերային մոդելների որոշարկում, ուղղորդման

հնարավորություն, աջակցություն ծախսերին, նախկին ուսումնառության ճանաչում, ուսումնառության անհատական պլաններ, ՏՀՏ տարբերակներ, որակավորումներ ստանալու հնարավորություն և մասնակցության արդյունքում պաշտոնի և աշխատավարձի բարձրացում:

Համակարգերի մակարդակում մասնակցության խրախուսման և աջակցության համատեղ միջոցառումներն են՝ տարածքային գործընկերությունների հիմնում՝ անձնական/ընտանեկան օգնություն ստացող անձնանց ուղղված ֆինանսական խթանիչներ ստեղծելու նպատակով, աշխատավայրերում համապատասխան պայմանների ստեղծում, տեղերում ուսումնառության առաջարկների առկայություն, թափանցիկ ազգային և մարզային համակարգեր, որոնք կճանաչեն և տեսանելի կդարձնեն ուսումնառության արդյունքները և ողջ ՄՀԿՈՒ փորձառության որակի ապահովում: Այդ ջանքերն իրականացնելու և վերահսկելու համար որոշ երկրներ սահմանել են մասնակցության քանակական ազգային թիրախներ, այդ երկրներից են **Բելգիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Լատվիան, Նիդեռլանդները, Պորտուգալիան և Միացյալ Թագավորությունը:**

Կրթության իրականացման մակարդակում՝ ինստիտուտ, աշխատավայր կամ ՔՀԿ, դժկամ, զբաղված և/կամ սկեպտիկ/անհավատ մեծահասակներին ընդգրկելու համակարգված մոտեցումը պահանջում է պոտենցիալ ուսումնառուին դնել ուսումնառության կենտրոնում՝ աութրիչի, կարիքների վերլուծության, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման, ուսումնառության մատչելի և տեղին առաջարկների, ուսումնական և պրակտիկ աջակցության, ճկուն գրաֆիկների և կրթության հաջորդականության, համաձայնեցված դասապլանների, մեծահասակներին հարմար դասավանդման/ուսումնական մեթոդների, այդ թվում՝ ՏՀՏ-ների, ուսումնառուին գնահատելու ընկերական մոտեցումների, ազգային և միջազգային արժույթով որակավորումներ ստանալու հնարավորության, անցումային արդյունավետ կետերի և ուսումնառուի հետ հետադարձ կապի ապահովման շարունակական հնարավորություններով որակի ապահովման համընդհանուր մեխանիզմների միջոցով:

Շատ երկրներում ՄՀԿՈՒ իրականացման ենթակառուցվածքները բավարար չեն: **Սերբիան** իր զեկույցում նշել է, որ չմասնակցելու հիմնական պատճառը ենթակառուցվածքների պակասն է: Մյուս երկրներում դժվար է վերահսկել/ղեկավարել

բազմաթիվ կրթություն իրականացնող հաստատությունները և դասընթացները: Գործատուների՝ աշխատակիցների ՄՀԿՈՒ-ն ֆինանսավորելու ցանկության բացակայությունը մասնակցության սուր արգելք է վերջերս ԵՄ-ին անդամակցած երկրներում, Հարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ-ի երկրներում:

Այս համատեքստում անհրաժեշտ է նայել ավանդական ինստիտուտներից մի փոքր ավելի հեռու՝ դիտարկելու ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության դերը համայնքում, աշխատավայրում և տանը: Ապացուցված է, որ ՔՀԿ-ների կողմից առաջակվող ոչ ֆորմալ ուսումնառության հնարավորությունները լավ են համակարգված, նույնիսկ կարելի է ասել, որ հիանալի են գործում, և ընդգրկում են այնպիսի անհատների, որոնք, գրեթե անհնար էր, որ ցանկություն հայտնեին մասնակցել (OECD 1997թ): Ընդհանուր համայնքային մոտեցումները կարող են կաևոր սոցիալական աջակցություն դառնալ մեծահասակների համար:

Սկանդինավյան և մյուս երկրներում կրթության պարբերաշրջանները ցույց են տալիս/նկարագրում են, թե հարևանություններում սոցիալական կապիտալն ինչպես կարող է նպաստել մեծահասակների՝ համատեղ ուսումնառությանը (Հելի 2001):

Շատ ԵՄ-27+ երկրներ ջանքեր են գործադրում լուծելու մեծահասակների ուղղորդման համապարփակ համակարգի բացակայության հարցը: **Ֆինլանդիայում**, Կրթության և Աշխատանքի նախարարությունները համատեղ նախաձեռնել են մեծահասակների՝ ինտերնետով ուղղորդման ծրագիր: **Սլովենիայում** գործում են 14 տարածքային ուղղորդման կենտրոններ, որոնք տեղակայված են ժողովրդական ավագ դպրոցներում: **Ավստրիայում**, խորհրդատուները ուղղորդում են մարդկանց տառաճանաչության և մաթեմատիկական հաշվարկների հետ կապված հարցերում Ալֆա-Տելեֆոնի միջոցով: **Պորտուգալիայում**, որպես ՄՀԿՈՒ իրազեկման արշավի մի մաս, ստեղծվել է հատուկ հեռախոսային կանչերի ընդունման կենտրոն: Նաև, որպես չմասնակցող մեծահասակներին ընդգրկելու նախաձեռնությունների մի մաս, ի հայտ են գալիս ուսումնառության «միջնորդներ» և «դեսպաններ»: 2007թ. ստեղծվեց Եվրոպական Ցկյանս Ուղղորդման Քաղաքականության Համացանցը, որին անդամակցում են ԵՄ-27+ երկրներից 26-ը, առաջ տանելու Ցկյանս Ուսումնառության ԵՄ Բանաձևում(2004) որոշարկված գերակա ուղղությունների իրականացումը: **Մոնտենեգրոյում** ստեղծվել են Մասնագիտական ուղղորդման ծառայություններ: Ըստ

Վրաստանի զեկույցի, ուղղորդման 15 մասնագետ սկսել է աշխատել ուսուցման կենտրոններում 2007թ.:

Շահառուների գործընկերությունների կողմից կազմակերպված ուսումնական փառատոները/միջոցառումները առանցքային դեր են կատարում բազմաթիվ երկրներում ՄՀԿՈՒ առաջընթացում. **Գերմանիայում** մոտավորապես 100.000 մարդ մասնակցել է մոտավորապես 500 միջոցառումների ավելի քան 250 վայրերում 2007թ.-ի առաջին Շարունակական կրթության օրվա շրջանակներում: 1996թ. ի վեր Սլովենիայում Ցկյանս ուսումնառության շաբաթն ուղեկցվում է բազմաթիվ պրոմո-միջոցառումներով:

2002թ. միջազգային դոնոր կազմակերպություններն աջակցեցին Ցկյանս ուսումնառության առաջին փառատոնին **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Սակեդոնիայում և Սոնտենեգոյում:**

Ճկունությունը ՄՀԿՈՒ մասնակցության հիմնական սկզբունքն է: Անհատական նախասիրությունների հիման վրա կազմված դասընթացները, որոնց շրջանակում ուսումնառուն ստանում է առկա ուսումնառություն, կրթություն՝ նամակագրության միջոցով կամ առցանց կրթություն, ճկունության վառ օրինակներ են Ֆրանսիայում: Ուսուցման անձնավորված սեմինարները ուսումնառությունը համապատասխանեցնում են մեծահասակների անհատականությանն ու նախասիրություններին: Ուսումնառության անհատական պլանների առկայության մասին հայտնում են նաև **Հունգարիան, Պորտուգալիան և Շվեդիան:** E-ուսումնառությունը և խառը ուսումնառությունը, որոնք դյուրացնում են աշխատանքի, ընտանիքի և կրթական գործունեության համաձայնեցումը, գրանցվել են **Ավստրիայում, Կիպրոսում, Ֆինլանդիայում, Հունաստանում, Լեհաստանում և Շվեդիայում:** **Լեհաստանում** մոտ 1,150 հեռակա կրթության կենտրոններ են հիմնվում, որոնք տրամադրում են Ինտերնետի օգտագործման, կրթական համակարգչային ծրագրերի հնարավորություն և դեմ առ դեմ/ստացիոնար, ինչպես նաև հեռակա աջակցություն: Հեռակա ուսումնառությունը տարեց տարի լայն ծավալներ է ստանում: 2007թ. **Բելգիայում (Նի)** Մեծահասակների կրթության վերաբերյալ նոր որոշում ընդունվեց, որը հեռակա ուսուցման կազմակերպման իրավասությունը հանձնարարեց Մեծահասակների կրթության կենտրոններին: **Գերմանիայում** 1990-ականների վերջին ավելի քան 100,000 մարդ ներգրավված էր հեռակա ուսուցման

մեջ. մինչև 2006թ. այդ թիվը հասավ 228,205 –ի: ԱՄՆ-ում, Հյուսիսային Կառոլինայում հեռակա ուսուցումը դարձել է գերակա ուղղություն տեղի համայնքային հետմիջնակարգ ՄԿՈՒ քոլեջներում, որտեղ ավելի քան 12,500 ուսանողներ սովորում են ինտերնետի, հեռավար կոնֆերանսների և արբանյակային հեռարձակման միջոցով: **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում** ՏՀՏ ենթակառուցվածքն ու մեծահասակ բնակչության տարրական ՏՀՏ հմտությունները դեռ զարգացման կարիք ունեն, եթե մատչելի առցանց ուսումնառությունը պետք է իրագործելի դառնա:

Մեծահասակների Կրթության և Ուսումնառության Տրամադրում

Թեմա 5. Մեծահասակների ուսումնառություն և աշխատանքի փոփոխվող աշխարհը. Ապագայի Օրակարգում ամրագրված է, որ

աշխատանքի իրավունքը, աշխատանքի տեղավորվելու հնարավորությունը և կյանքի ցանկացած տարիքում հասարակության զարգացմանն ու բարեկեցությանը նպաստելու պատասխանատվությունը այնպիսի հարցեր են, որոնք պետք է լուծվեն մեծահասակների ուսումնառության միջոցով:

(Ապագայի օրակարգ, պար. 30, էջ 20)

Մեծահասակների ուսումնառությունը գաղափարապես նկարագրվում է այսպես՝ այն սկսվում է ինֆորմալ ուսումնառությունից, անցնում է ոչ ֆորմալի և այնուհետև՝ ֆորմալի, կախված նպատակից, դիտավորությունից, վայրից, ժամանակի պլանավորումից, կառույցից, ուսուցիչ-ուսումնառու հարաբերություններից և արգասիքներից:

Մեծահասակների ֆորմալ ուսումնառությունը որպես կանոն կազմակերպում են ինստիտուտները: Ֆորմալ ուսումնառությունը նպատակային է, համակարգված (ուսումնառության նպատակների, ծրագրի, ժամանակի և/կամ աջակցության առումով), որի արդյունքը ճանաչված վկայականներն ու դիպլոմներն են: Ոչ ֆորմալ ուսումնառությունը համակարգված և նպատակային է ուսումնառուի տեսանկյունից, սակայն, ընդհանուր առմամբ, այն իրականացնում են ֆորմալ կրթության կամ ուսուցման արմիները և, որպես կանոն, այն ուղղակիորեն չի հանգեցնում

վկայագրման: Ինֆորմալ ուսումնառությունը, որը ամենօրյա աշխատանքի, ընտանեկան գործունեության կամ ազատ ժամանակի զբաղմունքի արդյունք է, համակարգված չէ և, որպես կանոն ուղղակիորեն չի հանգեցնում վկայագրման: Այն կարող է լինել նպատակային, սակայն գրեթե բոլոր դեպքերում այն ոչ նպատակային է կամ կամայական (Եվրոպական Հանձնաժողով 2001): Այս երեք մոդելների հարաբերությունը չափազանց բարդ է, իսկ դրանց սահմանները հստակ չեն՝ աստիճանաբար աճում է »բովանդակության միգրացիան« (Քնոլ 2005) ֆորմալ և ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի միջև, ինչպես օրինակ, երբ համայնքի որևէ կազմակերպիչ մասնագիտական կողմնորոշում է իրականացնում՝ պետական ֆինանսավորում ստանալու համար կամ երբ անհատը հմտություններ է ձեռք բերում թե՛ ֆորմալ կերպով, և թե՛ «աշխատավայրում»:

Բոլոր զեկույցներում նկարագրվում է ֆորմալ ուսումնառությունը և գրեթե բոլոր զեկույցներում հիշատակվում է ոչ ֆորմալ ուսումնառությունը: Ուսումնառության երկու եղանակների միջև կապերը հիմնականում հիշատակվում են որակավորումների որևէ համակարգի շրջանակներում ոչ ֆորմալ ուսումնառության վավերացման համատեքստում: Ձեկույցներում ինֆորմալ ուշադրությունը գրեթե չի արժանացել հիշատակման, բացի առողջապահության և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում հանրային արշավներին կատարած հղումներից, քանի որ ինֆորմալ ուսումնառությունը չի կանոնակարգվում է համարյա բոլոր երկրներում պետական իշխանությունները չեն տիրապետում վիճակագրական տվյալների:

Ի սկզբանե, կազմակերպված ՄՅԿՈՒ միշտ իրականացվել է մի շարք կազմակերպությունների և ինստիտուտների կողմից: Այդուհանդերձ, համարյա բոլոր երկրներում իրականացնող հաստատությունների ենթակառուցվածքների վերաբերյալ տվյալները մասնատված են և ոչ լիարժեք: Ձեկույցներում հիմնականում նկարագրվում են ՄՅԿՈՒ իրականացնող ֆորմալ պետական հաստատությունները և զարմանալիորեն սահմանափակ հղում է արվում բարձրագույն կրթական հաստատություններին որպես կրթություն իրականացնողներ:

Երկրներից շատերն իրենց զեկույցներում հղում են կատարում ՄՅԿՈՒ իրականացնող հաստատություններին, ինչպես օրինակ՝ գործատուներ, արհմիություններ, արհեստակցական ասոցիացիաներ, քաղաքացիական հասարակության

կազմակերպություններ, սոցիալական և մշակութային մարմիններ և կրթություն իրականացնող առևտրային կազմակերպություններ: **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում**, ընդհանուր կրթական համակարգի »նյութական բազան« շատ աղքատ է, և 1997թ. ի վեր ուշադրության կենտրոնում եղել է միայն նախնական կրթության և ուսուցման տրամադրումը:

2006թ. պետական ֆինանսավորմամբ աշխատող ֆորմալ և ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ իրականացնող հաստատությունների ուսումնասիրությունը ԵՄ-27+ երկրներում ցույց տվեց, որ ՄՀԿՈՒ իրականացնող կազմակերպությունների թիվը նվազել է Նիդեռլանդներում, իսկ Ֆրանսիայում, Հունաստանում, Լեհաստանում, Սլովենիայում, Իսպանիայում և Թուրքիայում նկատվել է համընդհանուր աճ, այդ թվում, պետական ֆինանսավորմամբ աշխատող կրթություն իրականացնող հաստատությունների թվի աճ **Ֆրանսիայում, Հունաստանում, Իռլանդիայում, Իտալիայում, Լեհաստանում, Իսպանիայում և Թուրքիայում: Բելգիայում, Դանիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Սլովենիայում և Միացյալ Թագավորությունում (Անգլիա և Ուելս)** գրանցվել է պետական ֆինանսավորմամբ աշխատող կրթություն իրականացնող հաստատությունների թվի նվազում: Շատ քիչ տվյալներ կան կրթություն իրականացնող մասնավոր կազմակերպությունների թվի վերաբերյալ, սակայն որոշակի տվյալների առկայության դեպքում տեսնում ենք թվի աճ: Կրթություն իրականացնող ՀԿ-ների թիվը **Բելգիայում և Ֆրանսիայում** նվազել է, սակայն մյուս բոլոր երկրներում աճել է: Ամենամեծ աճը գրանցվել է Լեհաստանում, որտեղ մեկ տասնամյակում կրթություն իրականացնող մասնավոր կազմակերպությունների թիվը տասնապատկվել է (NIACE 2006):

Բազմաթիվ երկրներ կարևորում են բազմապիսի կազմակերպությունների բազմաքանակության և կապակցվածության միջև հավասարակշռություն հաստատելու ջանքերը: Օգնության են գալիս ազգային և տարածաշրջանային խորհրդատվական/կանոնակարգող մարմինները, քանի որ դրանք կազմակերպում են կրթություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրում: Որոշ երկրներում սկսել են կարևորել առավել միավորված միջոցառումները, որպես ուսումնառու համայնքներին, ուսումնառության վայրերին և ուսումնառության տարածաշրջաններին ուղղված տարածաշրջանային միտում՝ նպատակ ունենալով նպաստել տնտեսական զարգացմանն ու սոցիալական ընդգրկմանը: **Գերմանիան** իր

զեկույցուն նկարագրում է «Ուսումնառության տարածաշրջաններ՝ աջակցություն համացանցերին» ծրագիրը, որը ստեղծում է կայուն կառույցներ, որոնք միմյանց են կապում կրթության տարբեր հատվածները և կրթություն իրականացնող տարբեր կազմակերպություններին: Նաև գնալով ավելի է շեշտադրվում «մեկ կանգառի խանութներ» հասկացությունը, օրինակ, Մեծահասակների կրթության կենտրոններ (Կիպրոս և Հունաստան), տարածքային կենտրոններ (Իտալիա), Տարածաշրջանային կրթական կենտրոններ (Նիդեռլանդներ) և ցկյանս ուսումնառության կենտրոններ (Սլովենիա):

Ի՞նչ է մեծահասակների ուսումնառությունը

ՄՅԿՈՒ-ի ուսումնական բովանդակությունը ընդգրկում է կյանքը և վերաբերում է կյանքին, ողջ կյանքի ընթացքում իրականացվող ուսումնառության շրջանակներում: Գործնականում ՄՅԿՈՒ-ն աստիճանաբար առավել համակարգված կերպով, այդ տերմինի նշանակության սահմաններում, իրականացվում է չորս ոլորտներում՝

- «Երկրորդ հնարավորությունը ընձեռող» ՄՅԿՈՒ-ն, որպես կանոն, իրականացվում է ֆորմալ կրթական հաստատություններում կամ դրանց միջոցով այն մեծահասակների համար, որոնք կիսատ են թողել իրենց նախնական կրթությունը առանց ավարտելու հիմնական դպրոցը կամ առանց որևէ որակավորման և հիմն ցանկանում են ձեռք բերել տարրական տառաճանաչության հմտություններ, տարրական կրթություն, միջին դասարանների և/կամ ավագ դասարանների միջնակարգ (ընդհանուր և, ինչն ավելի ընդունված է՝ մասնագիտական) կրթություն: Այն մեծահասակների համար, որոնք նախկինում հաճախել են դպրոց, սա, փաստորեն, կարող է լիել «առաջին հնարավորություն»: «Երկրորդ հնարավորությունը ընձեռող» ՄՅԿՈՒ-ն սովորաբար համարվում է ֆորմալ ուսումնառություն, սակայն տառաճանաչություն սովորելը կարող է լինել ոչ ֆորմալ:

- Մեծահասակների մասնագիտական կրթությունը և ուսուցումը (ՄԿՈՒ), այդ թվում՝ նախնական մասնագիտական ուսուցումը (ՆՄՈՒ) և շարունակական մասնագիտական ուսուցումը (ՇՄՈՒ), ուղղված են աշխատաշուկայի նպատակների իրականացման համար հմտությունների ձեռքբերմանը, կատարելագործմանը և լրացուցիչ

հմտություններ ստանալուն: Այն կարող է լինել ֆորմալ և իրականացվել վերապատրաստման կենտրոններում կամ աշխատավայրում կամ տնային պայմաններում, ինչպես նաև՝ ոչ ֆորմալ և իրականացվել աշխատանքի ընթացքում, կապված հենց տվյալ աշխատանքի հետ: Այն ներառում է գործազուրկ մեծահասակների, աշխատուժից դուրս մնացած մեծահասակների /աշխատանքի ընթացքում աշխատողների վերապատրաստմանը բոլոր ոլորտներում՝ հանրային, մասնավոր կամ կամավոր:

- Լիբերալ, հանրամատչելի կամ ընդհանուր ՄՀԿՈՒ-ն կարող է լինել սոցիալական և մշակութային քաղաքականություն և/կամ սոցիալական շարժում: Այն բաղկացած է մեծահասակների ոչ ֆորմալ ուսումնառությունից, որն ուղղակի կապ չունի աշխատաշուկայի հետ և, որպես կանոն, մուտքի համար հատուկ որակավորումներ չի պահանջում և ուսումնառում ինքն է այն նախաձեռնում՝ ելնելով անձնական, սոցիալական, քաղաքացիական և մշակութային նպատակներից: Այն կարող է իրականացվել կրթություն և վերապատրաստում իրականացնող հաստատություններում, սակայն, հիմնականում, իրականացվում է հիմնական համակարգից դուրս, մի շարք հանրային, մասնավոր և համայնքային միջավայրերում և, որպես կանոն, արդյունքում պաշտոնականացված վկայական չի տրվում:

- Մեծահասակների բարձրագույն կրթությունը հանդիսանում է ՄՀԿՈՒ-ի շարունակությունը ավարտական կուրսերում, հետբուհական մակարդակում և կարճատև մասնագիտական և/կամ հատուկ հետաքրքրության դասընթացներում:

«Երկրորդ հնարավորություն ընձեռող» ՄՀԿՈՒ

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում իրականացվում են պետության կողմից ֆինանսավորվող միջոցառումներ, որոնք երաշխավորում են նախնական կրթության և ուսուցման ցածրագույն մակարդակ ունեցող մեծահասակների՝ պարտադիր և ավագ միջնակարգ դպրոցի կրթության և ուսուցման որակավորում ստանալու *մեկ այլ, ավելի լավ և շարունակական* հնարավորություն: »Երկրորդ հնարավորություն ընձեռող« կրթությունը հասցեագրված է տարբեր խմբերի լայն շրջանակի՝ գիտելիքի բաժանում, հմտությունների բաժանում, թվայնացված միջոցներ, սեռային բաժանում (օրինակ, ազգային փոքրամասնությունների շրջանում), տարիքային խմբերի

բաժանում և ընդհանրապես բնակչության շրջանում տեղ գտած անհամաչափությունները տնտեսական, սոցիալական և անձնական բնագավառներում: »Երկրորդ հնարավորության ընձեռումը« թե հասարակության բևեռացման հաղթահարման և թե հավասարության ապահովման գործիք է և շատ երկրներում ծառայում է բազմաթիվ նպատակների, այսինքն, փոխհատուցման (դեռ չիրականացված ուսումնառության փոխհատուցում), կրթական (անհատներին նախապատրաստում է հաջորդ մակարդակին), տնտեսական (բարձրացնում է հմտությունների մակարդակը), վերաբաշխիչ (նպաստում է ուսումնառության և որակավորումների մատչելիությանը), խթանում է հավասարություն (հասարակության տարբեր հատվածների միջև) և սերնդամիջյան ազդեցություն (կարող է դրական ազդեցություն ունենալ հաջորդ սերնդի ուսումնառության արդյունքների վրա) (Յուրիդիս 2007):

Ստորին և վերին միջնակարգ կրթությանը համարժեք որակավորումներ

Ֆորմալ հիմնական միջնակարգ, ավագ միջնակարգ և հետմիջնակարգ որակավորումների հանգեցնող և իրենից պարզև ներկայացնող «երկրորդ հնարավորություն ընձեռող» կրթությունն իրականացվում է այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են՝ երիտասարդների հանրային/պետական դպրոցները, երկրորդ հնարավորության դպրոցները, մեծահասակների հատուկ պետական դպրոցները, մասնագիտական ուսուցման հանրային կենտրոնները, ծնողների դպրոցները և, ավելի հազվադեպ, ոչ կառավարական կազմակերպություններն ու առևտրային կազմակերպությունները: Առկա ուսուցումն իրականացվում է օրվա ընթացքում, լրիվ կամ կես դրույքով, իսկ երեկոյան և/կամ հանգստյան օրերին աճում է ինտերնետի միջոցով ուսումնառություն ստանալու հնարավորությունը:

Շվեդիայում, Մեծահասակների կրթության նախաձեռնությունը (1997–2002) հնարավորություն տվեց ավելի քան 800.000 մեծահասակների (աշխատուժի գրեթե 20 տոկոսը) վերադառնալ մեծահասակների համակարգված ֆորմալ կրթության՝ բարձրացնելով իրենց կրթական մակարդակը: **Ֆինլանդիայում** պետության ֆինանսավորմամբ իրականացվող Noste ծրագիրը (2003-2009) նպատակ ունի զգալի

սոցիալական նորարարություններ իրականացնել միջնակարգ դպրոցի վերին դասարանների որակավորումից ցածր որակավորում ունեցող, 25-59 տարեկան զբաղված մեծահասակների հմտություններն աստիճանաբար կատարելագործելու նպատակով: Ձևավորվում է նախնական գիտելիք, հմտություններ և փորձառություն, ծրագիրը հանգեցնում է մասնագիտական կամ ճկուն կարողություններով պայմանավորված որակավորման:

Կարող են անցնել լրացուցիչ առարկաներ, օրինակ՝ լեզուներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ կամ մաթեմատիկա, աջակցություն է տրվում ընթերցանության և գրավոր հմտությունների հետ կապված դժվարությունների դեպքում: Noste ծրագիրը նաև կարող է օգտագործվել որպես աջակցության միջոց, որն օգնում է մարդկանց ավարտին հասցնել հիմնական կրթությունը: Noste-ին բնորոշ կարևոր հատկանիշներն են՝ միջգերատեսչական համագործակցությունը, սոցիալական գործընկերների լայն ընդգրկումը, կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունների ուսուցման տարածաշրջանային միությունները, աուրիչ ուղղորդման ծառայությունները, աշխատանքին զուգահեռ ուսուցումը և լրացուցիչ հետազոտական ծրագիրը: Մինչև 2007թ. հունվար ամիսը ծրագիրն ուներ 16.700 մասնակից՝ կանխատեսվող մասնակցության 58%-ը: **Հունաստանում**, 48 երկրորդ հնարավորություն ընձեռող դպրոցներ գործում են 18-40 տարեկան այն մեծահասակների համար, ովքեր չեն ավարտել պարտադիր կրթությունը և գործազուրկ են, կամ չունեն որևէ հմտություն, կամ ունեն ժամանակավոր կամ սեզոնային զբաղվածություն: Երկամյա ծրագրի ավարտից հետո մասնակիցները ստանում են վկայականներ, որոնք համարժեք են տարրական դպրոցի որակավորմանը (1-ին մակարդակ) կամ ավագ դպրոցի որակավորմանը (2-րդ մակարդակ): Մարզային և տարածքային իշխանությունները հաճախ պատասխանատու են «երկրորդ հնարավորություն ընձեռող» կրթության իրականացման համար, և որոշ երկրներում, օրինակ՝ **Պորտուգալիայում** և **Նորվեգիայում**, մեծահասակները օրենքով սահմանված իրավունք ունեն ստանալու/ձեռք բերելու միջնակարգ կրթության որակավորում:

Հարավ-արևելյան Եվրոպայում, **ԱՊՀ-ում** և **Վրաստանում**, որտեղ նախկինում պետության սեփականություն հանդիսացող բազմագործառության ՄՀԿՈՒ շենքերը քանդվել են, իսկ աշխատակիցները՝ կրճատվել, «երկրորդ հնարավորություն

ընձեռող» տարրական և ստորին միջնակարգ կրթությունն իրականացվում է դպրոցների և հատուկ թիրախ խմբերի համար իրականացվող ծրագրերի միջոցով: **Իսրայելի** զեկուլցումն նշված է, որ 2007թ. 3000 ուսանողներ մասնակցել են 150 տարրական և ավագ դպրոցի դասընթացների համարժեք կրթության և որակավորումների ձեռքբերման նպատակով, որոնք պահանջվում են աշխատանքի տեղավորվելու համար: **ԱՄՆ**-ում տարածքի դպրոցները (իրականացնում են կրթության 54%), համայնքային կազմակերպությունները (իրականացնում են կրթության 24%) և համայնքի քոլեջները (իրականացնում են կրթության 17%) առաջարկում են ՄՀԿՈՒ այնպիսի դասընթացներ, որոնք համարժեք են հիմնական կրթությանն ու ավագ դպրոցի դիպլոմին:

Տառաճանաչության ուսուցանում

Մեծահասակների տառաճանաչության միջազգային հետազոտության (OECD 1995, 1997ա և Վիճակագրություն Կանադա 2000) արդյունքում պարզվեց, որ տարածաշրջանի մի շարք երկրներում մեծահասակների 25-50%-ը չունեն աշխատանքի և կյանքի համար պահանջվող տառաճանաչության նվազագույն մակարդակ: Հետազոտության մեջ նշված էր, որ սա միայն փոքրամասնությունների և ներգաղթողների խնդիրը չէ: Այդ իսկ պատճառով կառավարությունները մոբիլիզացրեցին իրենց ուժերը՝ լուծելու մեծահասակների տառաճանաչության հարցերը:

Ձեկույցները՝ տարածաշրջանում տառաճանաչության մակարդակի վերաբերյալ հաղորդում են խառը տեղեկություններ, ինչպես նաև տալիս են տառաճանաչության տարբեր սահմանումներ: **ԵՄ-27+** երկրները հմտությունների ձևավորմանը միտված մոտեցումից անցել են կարողությունների զարգացմանն ուղղված տառաճանաչության՝ տեղեկատվության վերլուծության և գիտելիքի ձևավորման նպատակով: Հղումների Եվրոպական Շրջանակում մայրենի լեզվով հաղորդակցվելու հմտությունը համարվում է ցկյանս ուսումնառության առաջին առանցքային կարողությունը (Եվրոպական Հանձնաժողով 2005): 2007թ. **Բելգիայում** (Ֆր.) շահագրգիռ կողմերը համաձայնության եկան մի անվանակարգության շուրջ, որը տարբերակում է «ֆրանսերենի տառաճանաչության» և «ֆրանսերեն, որպես օտար

լեզվի տառաճանաչության» մակարդակների միջև: Շվեյցարիայում սահմանումը դեռևս քննարկվում է 2007թ. ստեղծված աշխատանքային խմբի կողմից:

Տարբեր երկրներում տառաճանաչության գերակա խնդիրները, կառավարության՝ տառաճանաչության ուսուցման ֆինանսավորման պարտականությունը, թիրախ խմբերը, բացահայտ տառաճանաչության ծրագրերը, կրթություն իրականացնող կազմակերպությունները, ՏՀՏ-ների դերը և տառաճանաչություն դասավանդողների հմտություններն ու կարգավիճակը տարբեր են:

«Տառաճանաչություն բոլորի համար» կարգախոսը գերակա կրթական և քաղաքական ուղղություն է **Կանադայի** բոլոր 13 մարզային և տարածքային ենթակայության տերիտորիաներում: Կանադացիների՝ տառաճանաչության կարիքները հասցեագրվում են տարբեր համատեղ միջոցառումների միջոցով, որոնք իրականացվում են կրթության ոլորտի մարզային և տարածքային իրավասու մարմինների, դաշնային կառավարության և ահռելի թվով ոչ կառավարական կազմակերպությունների կողմից:

Տառաճանաչության քաղաքականությունը մշակվել և փորձարկվել է համագործակցության արդյունքում և հաճախ ձևակերպվել է տնտեսական և սոցիալական զարգացման առավել լայն նախաձեռնությունների շրջանակում: **ԵՄ-27+** երկրներից շատերը և **ԱՄՆ**-ն իրենց զեկույցներում նկարագրում են տառաճանաչության մակարդակի բարձրացմանն ուղղված պետական և ոչ կառավարական նախաձեռնությունները, իսկ **Սերբիան** և **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիան** իրենց զեկույցներում նշում են, որ իրենց երկրներում մեծ է այն մարդկանց թիվը, ովքեր չեն ավարտել իրենց տարրական կրթությունը, մի շարք երկրներ էլ նշում են, որ իրենց երկրներում տառաճանաչության հետ կապված մարտահրավերներ կան առհասարակ չկան, կան էլ շատ քիչ են: Այդ երկրներից են, օրինակ, **Հայաստանը**, **Կիպրոսը**, **Էստոնիան**, **Վրաստանը**, **Հունգարիան**, **Լատվիան** և **Սլովակիան**: Այնուամենայնիվ, **Ռումինիան** իր զեկույցում նշում է՝ «չնայած այն հանգամանքին, որ «Արևելյան Եվրոպայի՝ «ամեն-ոք-կարող-է-գրել-և-կարդալ-որովհետև-բոլորը-դպրոց-են հաճախել» սինդրոմի» պատճառով տառաճանաչության խնդիրը քաղաքական օրակարգում առաջնային տեղում չի

գտնվում և չի դառնում հանրային հետաքրքրության առարկա», այնուամենայնիվ, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակությունը ճնշում են գործադրում՝ տառաճանաչության ուսուցումը դնել հանրային օրակարգում:

Տառաճանաչության ուսուցումը հաճախ համարվում է ոչ ֆորմալ ուսումնառություն, սակայն կարող է նաև իրականացվել որպես աջակցություն ֆորմալ կրթությանը և իրականացվում է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության վայրերում, օրինակ՝ ֆորմալ ՄՀԿՈՒ հաստատություններում, աշխատավայրում, տանը, համայնքային միջավայրում: Հետաքրքիր է այն, որ ԵՄ-27+ երկրներում ի հայտ եկող որակավորումների շրջանակների ամենաստորին մակարդակները կազմվում են այնպես, որ տառաճանաչության և հիմնական կրթության ուսումնառության արդյունքները հավատարմագրվեն (օրինակ, **Իռլանդիայում և Միացյալ Թագավորությունում**), այսպիսով տառաճանաչությունը դնելով որակավորման հանգեցնող ուսումնառության շրջանակում և, հետևաբար, ըստ սահմանման, ֆորմալ ուսումնառության շրջանակներում: Մի շարք դժվարություններ են առաջանում կապված տառաճանաչության դասավանդման հետ, հատկապես այն հանգամանքը, որ տառաճանաչության հետ կապված խնդիրներ ունեցող մեծահասակները միշտ չէ, որ ընդունում և/կամ գիտակցում են իրենց ունեցած խնդիրները և/կամ հաճախ դժկամորեն են աջակցության դիմում: Այսպիսով, անհրաժեշտ են բազմապիսի մոտեցումներ՝ անհատներին շահագրգռելու համար:

Մի քանի երկրներ արդեն ունեն տառաճանաչության ուսուցման իրավական դաշտ: **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում** Մեծահասակների կրթության մասին օրենքը ձգտում է կրճատել անգրագետ մարդկանց թիվը և տղամարդկանց/կանանց գրագիտության մակարդակների միջև եղած տարբերությունը: **ԱՄՆ**-ում, 1998թ. ընդունված Մեծահասակների կրթության և Ընտանեկան տառաճանաչության մասին Ակտը ապահովում է տառաճանաչության ծառայություններ, որոնց շնորհիվ մեծահասակները հնարավորություն են ստանում ավարտել միջնակարգ կրթությունը, ձեռք բերել զբաղվածության համար անհրաժեշտ հմտություններ և/կամ աջակցել իրենց երեխաների կրթությանը: Վերջին տարիներին մի շարք երկրներ, օրինակ՝ **Ֆրանսիան, Գերմանիան, Նիդեռլանդները, Նորվեգիան և Սլովենիան**, իրենց ջանքերն ուղղել են տառաճանաչության ուսուցման քաղաքական շրջանակի մշակման գործին:

Ֆրանսիայում 2000թ. ստեղծված Անգրագիտության դեմ պայքարի ազգային գործակալությունը առավելագույնի է հասցնում կենտրոնական կառավարության, տեղական իշխանությունների և բիզնեսի ու արդյունաբերության ներկայացուցիչների կողմից ռեսուրսների մոբիլիզացումը: Տարածաշրջանային համագործակցության հիմունքով իրականացվող «Ինտեգրում, վերաինտեգրում և անգրագիտության հաղթահարում» ծրագիրը աջակցություն է տրամադրում մի շարք գործողությունների իրականացմանը, այդ թվում՝ վերապատրաստողների ուսուցում/վերապատրաստում, ռեսուրս կենտրոնների ֆինանսավորում, ուսուցման ուղիների և դասավանդման մեթոդների մշակում՝ ըստ մեծահասակների կարիքների: **Սլովենիայում**, մեծահասակների տառաճանաչության մակարդակի բարձրացումը հանդիսանում է Սլովենիայի՝ 2007-2013թթ. Մեծահասակների կրթության ազգային պլանի և Ջարգացման ռազմավարության բաղկացուցիչ մաս: 2005թ., **Բելգիայի (Նի)** կառավարությունը հաստատեց Տառաճանաչության ռազմավարական պլանը, որը բաղկացած է 35 գործողություններից՝ գործընկերների լայն շրջանակի ներգրավմամբ, այդ թվում՝ ուսուցում իրականացնող հաստատություններ և գործատուների, գործառուների և բանվորների կենսապայմանների համար պայքարող կազմակերպություններ: **Խորվաթիայում**, 2003թ. սկսվեց մեծահասակների տառաճանաչության ազգային ծրագիրը՝ *Հանուն տառաճանաչ Խորվաթիայի. Ցանկալի ապագայի հասնելու եղանակը, Տառաճանաչության տասնամյակ Խորվաթիայում – 2003-2012թթ.*, որի նպատակն է բարձրացնել ընդհանուր գրագիտության մակարդակը և կրճատել գործազրկությունը՝ 15+ անհատներին հնարավորություն տալով ավարտել նախնական կրթությունը և վերապատրաստման ծրագիրը:

Առնվազն 25 երկրներ՝ **Հայաստան, Ավստրիա, Բելիզա (Ֆր.), Բելգիա (Նի), Բուլղարիա, Կանադա, Կիպրոս, Դանիա, Ֆինլանդիա, Հունաստան, Իռլանդիա, Լիտվա, Մոնտենեգրո, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա, Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիա, Թուրքիա, Միացյալ Թագավորություն և ԱՄՆ**, նշում են տառաճանաչության հատուկ նախաձեռնությունների իրականացման մասին: 2007թ. **Կանադայում** ստեղծվեց Տառաճանաչության և Հիմնական հմտությունների

գրասենյակ (ԳՀՀԳ), որի հիմնական նպատակն է դառնալ ճանաչված «փորձագիտական կենտրոն», որը կբարելավի մեծահասակ կանադացիների տառաճանաչության և հիմնական հմտությունների մակարդակը: ԳՀՀԳ-ին իրավասություն է տրված անուղղակի դեր կատարել այլ կազմակերպությունների քաղաքականությունների և գործունեության վրա ազդելու գործում: ԳՀՀԳ-ն ունի ֆինանսավորման լծակներ՝ մեծահասակներին տրվող հնարավորությունների բարելավման համար: ԳՀՀԳ-ի գործողությունների առանցքը աշխատավայրում, համայնքներում և ընտանիքներում տառաճանաչության և հիմնական հմտությունների բարելավումն է: Իր իրավասություններն իրականացնելու նպատակով ԳՀՀԳ-ն աշխատում է համագործակցելով այլ դաշնային վարչությունների, մարզերի և տարածքների, համազգային կազմակերպությունների, մարզային/տարածքային կոալիցիաների, արտադրական և համայնքային խմբերի հետ:

Ավստրիայում «Ցանցային գրագիտություն և հիմնական կրթություն» ծրագիրը բարելավում է կրթություն իրականացնող տարբեր կազմակերպությունների միջև համագործակցությունը և աջակցում է որակի չափորոշիչների իրականացմանը: Ծրագրի առանցքային բաղադրիչներ են կարողությունների որոշարկումը, փաթեթների/պորտֆելների օգտագործումը, Ալֆա թեժ հեռախոսագիծը և վեբ ծառայությունը:

Ֆինլանդիայում NOSTE ծրագիրը մեծահասակներին առաջարկում է ընթերցանություն և գրագրություն: Սլովենիայում «Կրթության կամուրջ» ծրագիրը հնարավորություն է տալիս անհատներին գրանցվել ֆորմալ մասնագիտական ուսուցման դասընթացներում և թարմացնել իրենց հիմնական հմտությունները կամ ձեռք բերել հիմնական հմտություններ:

Բելգիայում (Ֆր.), Նիդեռլանդներում, Սլովենիայում, Ռումինիայում և ԱՄՆ-ում ծնողներն ու երեխաները մասնակցում են ընտանեկան տառաճանաչության ծրագրերը, որը լուծում է ուսումնառության հետ կապված սերնդամիջյան թերությունները: Ձևավորվում են չափորոշիչներ:

Նորվեգիայում, Մեծահասակների Հիմնական Հմտությունների Շրջանակը ամրագրում է պետական/ազգային չափորոշիչներ՝ ընթերցանության, գրելու, բանավոր խոսքի, մաթեմատիկայի և ՏՀՏ հմտությունների համար: Տառաճանաչությունը աշխատավայրում երաշխավորում է ճշգրտություն, հարմարավետություն և

համապատասխանություն **Բելգիայում (Ֆր.)**, **Իռլանդիայում**, **Սլովենիայում** **և Միացյալ Թագավորությունում**: **Ֆինլանդիայում**, 2006թ. ի վեր Յիմնական Կարողությունների Ծրագիրը հնարավորություն է տալիս ձեռնարկությունների/հիմնարկների դիմումներ ներկայացնել՝ աջակցություն ստանալու գրելու, թվաբանության և ՏՀՏ կիրառման վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներ իրականացնելու համար: Նմանատիպ ծրագիր է գործում **Նորվեգիայում**, իսկ **Սլովենիայում** պետական ֆինանսավորմամբ իրականացվող նախապատրաստական ՄՀԿՈՒ բազմաթիվ գործողություններ իրականացվում են աշխատավայրերում: Սլովենիայում իրականացվում է հատուկ կարիքներ ուեցող մեծահասակների, ինչպես նաև տարեցների տառաճանաչության ուսուցում: **Հայաստանում** բանտարկյալների տառաճանաչությունը սահմանվել է գերակայություն: **Ռուսաստանի Դաշնությունում**, որտեղ սոցիալապես խոցելի խմբերի տառաճանաչության մակարդակը «հայտարարված 99.8 % ցուցանիշից ցածր է», մեծահասակներն իրավունք ունեն բարձրացնել իրենց տառաճանաչության մակարդակը ընդհանուր հանրակրթության պետական երեկոյան դպրոցներում:

Գենդերային հարցերը որպես խնդիր ներկայացված են այն երկրների զեկուլյցներում, որտեղ կանայք տառաճանաչության հետ կապված ավելի շատ դժվարություններ ունեն, քան տղամարդիկ: **Թուրքիայում**, որտեղ մեծահասակ կանանց 16 տոկոսը տառաճանաչ չէ, պետական ֆինանսավորմամբ իրականացվող ՄՀԿՈՒ-ի ուշադրության կենտրոնում հիմնականում կանանց տառաճանաչության ուսուցանումն է: 2008թ. սկզբին նախաձեռնվեց մի այսպես կոչված «Թուրքիան կարդում է» արշավ, «Մենք՝ մայր ու աղջիկ, դպրոց ենք գնում տառաճանաչ դառնալու համար» նախաձեռնության հետ մեկտեղ, որոնց թիրախը 4 տարում 3 միլիոն տառաճանաչ մեծահասակ ունենալն էր:

«Աջակցություն համազգային կրթությանը» արշավի շրջանակներում (2001-2007) մոտ 1.5 միլիոն մեծահասակ ստացավ տառաճանաչության ուսուցում (ի լրումն մասնագիտական հմտությունների ուսուցման, որն իրականացվեց 4 միլիոն մարդու, և սոցիալական և մշակութային հմտությունների ուսուցման, որն իրականացվեց 3.3 միլիոն մարդու համար): **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում**, որտեղ մասնակցությունը նախնական կրթությանը պարտադիր է այն

մեծահասակների համար, ովքեր դեռ չեն ձեռք բերել այդ մակարդակը, Մակեդոնիայի և Հռոմի մայրերի համար երեխայի զարգացման վերաբերյալ նյութեր են մշակվել այդ տառաճանաչության ծրագրերի միջոցով: **Սերբիայում** կանանց տառաճանաչության հարցերով հիմնականում զբաղում են ՀԿ-ները, նրանց իրականացրած գործողությունները կանոնավոր կամ համակարգված չեն, ինչպես նաև չեն ֆինանսավորվում պետության կողմից: Բացակայում են ռազմավարական կամ օրենսդրական շրջանակները, որոնց շրջանակներում հնարավոր է գնահատել այդ ծրագրերի արդյունքները: **Հայաստանում** տնային հոգսերը դժվարացնում են կանանց ներգրավումը տառաճանաչության դասերին: Մեծամասնությունների՝ ՄՀԿՈՒ, մասնավորապես տառաճանաչության ծրագրերում, մասնակցությունը հատուկ խթանիչների միջոցով խրախուսելու անհրաժեշտության մասին աճող իրազեկության համատեքստում, **Խորվաթիայի, Հունգարիայի, Սոնտենեգրոյի, Սերբիայի, Սլովակիայի և Սլովենիայի** կողմից ամենից հաճախ հիշատակվում է Հռոմը: **Սերբիայում** 137 000 անհատներ 2009թ. առաջին եռամսյակում արդեն մասնակցել էին դասընթացների:

2007թ. ընթացքում Հռոմում իրականություն դարձավ մեծահասակների հիմնական կրթության մի մեծ ծրագիր, որի արդյունքում կազմվեցին օրենսդրական և ֆինանսավորման հետ կապված փոփոխությունների առաջարկներ: Խիստ անհրաժեշտ են տառաճանաչության համապատասխան ռեսուրսներ, խթաններ և հետազոտություն:

Գերմանիայում ուսումնառուները ներգրավվել են «Ալֆա - ժամանակից մոտեցումներ հիմնական կրթությանը մեղիա միջոցներով» ծրագրում (2001-2004), որի շրջանակներում մշակվել են հարմարեցված, մուլտիմեդիա համակարգչային ծրագրեր: Գերմանիայի զեկույցում հիշատակվում է Տառաճանաչության Դաշնային Ասոցիացիան և Տառաճանաչության և Տարրական Կրթության Դաշինքը, որոնք հատուկ արշավներ են կազմակերպում տառաճանաչության հնարավորությունների բարելավման համար: Ի լրումն, **Գերմանիան, Սերբիան, Սլովենիան, Կանադան և ԱՄՆ-ն** հղում են կատարում տառաճանաչության հետազոտական աշխատանքներին: **Կանադան** ունի տառաճանաչության և մեծահասակների կրթության հետ կապված այլ ռեսուրսների մի քանի ընդգրկում տվյալների բազաներ: Մեծահասակների Տառաճանաչության Ազգային Բազան (ՄԳԱԲ) տեղեկատվական ցանց է, որը

հնարավորություն է տալիս օգտվել տառաճանաչության տարբեր ռեսուրսներից, թերթերից, մուտք ունենալ տարբեր կազմակերպություններ և ընկերակցություններ, ստանալ ինտերնետ ռեսուրսներ, լիարժեք փաստաթղթեր ֆրանսերենով և անգլերենով, փորձագետների հետ շփվելու հնարավորություն: 2006–07թթ, ընթացքում ՄԳԱԲ-ի ինտերնետ կայքում գրանցվել են ավելի քան 9 միլիոն օգտվող, որոնք օգտվել են ավելի քան 28 միլիոն էջից:

Կան երկու նշանակալի առցանց տեղեկատուներ, որտեղ ներկայացվում են Կանադայում իրականացվող հետազոտությունները կապված տառաճանաչության հետ, այդ թվում՝ նաև առաջընթացի ուսումնասիրություն: Այդ տեղեկատուներն են՝ *Կանադացի մեծահասակների տառաճանաչության հետազոտությունների տեղեկատու անգլերեն լեզվով* և *Le Répertoire canadien des recherches en alphabétisation des adultes (R/CRAF) ֆրանսերենով*, որը 2008թ. ապրիլին դարձավ *COMPAS*, ուղղված մեծահասակների կրթության և ուսուցման վերաբերյալ հետազոտություններին ընդհանրապես:

Մասնագիտական ՄՀԿՈՒ

ԵՄ-27+ երկրներում համարում են, որ ՄՀԿՈՒ-ն, կամ շարունակական մասնագիտական ուսուցումը (ՇՄՈւ), առանցքային դերակատարում ունի ավելի քան 13 միլիոն լրացուցիչ աշխատատեղերի համար պահանջվող հմտությունների առավել բարձր մակարդակ ապահովելու գործում: Այդ աշխատատեղերի համար հաճախ պահանջվում է որակավորումների բարձրագույն մակարդակ, որոնք ԵՄ-ում կատեղծվեն 2006-2015թթ, ընթացքում (Եվրոպական Հանձնաժողով 2007դ): ՇՄՈւ-ն չափազանց կարևոր է դարձել թե՛ ձեռնարկությունների և թե՛ բանվորների համար: Այն կարող է ֆինանսավորվել ձեռնարկությունների, անհատների և/կամ պետական իշխանությունների կողմից և կազմակերպվել հենց ձեռնարկությունների, կամ մի խումբ ձեռնարկությունների, սոցիալական գործընկեր հանդիսացող կազմակերպությունների և/կամ, տեղական, տարածաշրջանային և պետական մարմինների կողմից: Մի քանի Եվրոպական երկրներում, որտեղ աշխատուժի որակավորումների շարունակական բարձրացումը ավանդաբար համարվել է գործատուի կամ գործառուների կազմակերպությունների պարտականությունը,

կառավարության խիստ սահմանափակ անմիջական ներգրավմամբ, ցկյանս ուսումնառության շրջանակներում ՇՄՌ-ի նշանակության աճող կարևորումը վիճաբանությունների տեղիք է տվել սովորաբար մասնավոր հատվածին վերաբերող ոլորտներում կառավարության միջամտության շուրջ: Մյուս երկրներում երկար ժամանակ է արդեն, ինչ ստեղծված են կառավարություն-սոցիալական գործընկեր համագործակության եռակողմ համակարգեր որոնք զբաղվում են աշխատուժի հմտությունների կատարելագործմամբ: Սոցիալական գործընկերության ֆորմալ մոդելում հիմնականում գործատուներն են ապահովում իրենց աշխատողների ուսուցումը՝ սոցիալական գործընկերների և ազգային/տարածաշրջանային իրավասու մարմինների միջև կնքված պայմանագրերի համաձայն:

Բոլոր երկրներն էլ իրենց զեկույցներում նշում են, որ իրականացնում են գործազուրկների ուսուցման որոշակի միջոցառումներ, որոնք ակտիվ աշխատաշուկայի ծրագրերի մաս են կազմում: Այնուամենայնիվ, վերջերս **ԵՄ անդամակցություն ձեռք բերած երկրներում, Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում** ակտիվ աշխատաշուկայի ծրագրերին հատկացվող ռեսուրսները չափազանց սուղ են և, շատ վայրերում հիմնականում հատկացվում են պետական զբաղվածության ապահովմանը: **Կիպրոսում և Լիտվայում**, ԵՄ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ (EU EQUAL) ծրագրի կողմից ֆինանսավորվող միջոցառումների շրջանակում աջակցություն է տրամադրվել կանանց ինտեգրմանը ակտիվ տնտեսական կյանքին: Գրեթե բոլոր ԵՄ-27+ երկրներում գործում են պետական ֆինանսավորմամբ գործող ուսուցման կենտրոնների փոքր կամ մեծ համացանցեր, որոնք տրամադրում են աշխատուժի հմտությունների ուսուցում, կատարելագործում և նոր հմտություններ: Շատ երկրներում սոցիալական գործընկերները ակտիվորեն համագործակցում են չափորոշիչների, դասապլանների, մեթոդների, տևողության և որակավորումների վերաբերյալ որոշումների կայացման գործում: Վերջերս ԵՄ անդամ դարձած որոշ երկրներում, իսկ ավելի շատ Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում հանրությունը ՄՀԿՌ-ն ընկալում է հիմնականում որպես ֆորմալ մասնագիտական ուսուցում, հիմնական ՆՄՌ, որն իրականացվում է դպրոցական համակարգում: Թեև այս երկրների մեծամասնությունը նախկին համակարգի ժամանակ, բացի աշխատողների համալսարաններից, լայնորեն իրականացրել է ուսուցում աշխատավայրերում, այնուամենայնիվ, հիմա դա բավականին թուլացել է:

Ուսուցումները ավելի շատ իրականացվում են դպրոցներում և կենտրոններում, որոնք չունեն բավարար ռեսուրսներ, սոցիալական գործընկերների ներգրավվածության մակարդակը ցածր է, դասապլաններն աշխատաշուկային համապատասխանեցնելու կարիք կա, իսկ ուսուցիչներն իրենք հմտությունների կատարելագործման կարիք ունեն։ Այս վիճակում գտնվող ՄԿՈՒ համակարգերը ավելի շատ միտում ունեն ֆինանսավորվելու ԵԿՅ-ի կամ դոնորների աջակցությամբ գործող ՋԿ-ների կողմից։

Ի լրումն, աշխատաշուկայում պահանջարկի անկումը նշանակում է, որ մեծահասակները չեն հավատում մասնագիտական ուսուցման արժեքին։ **Վրաստանում**, օրինակ, մինչև վերջերս ՄՅԿՈՒ-ն լրիվ մեկուսացած էր աշխատաշուկայից, ձեռնարկատերերն ու մյուս սոցիալական գործընկերները ամբողջովին չէին ընկալում մասնագիտական կրթության նշանակությունը իրենց մրցունակության բարելավման գործում։

Այդուհանդերձ, ակնկալվում է, որ վերջերս ստեղծված մասնագիտական ուսուցման կենտրոնների և գործող 10 կենտրոնների վերակառուցման շնորհիվ իրավիճակը կփոխվի դեպի լավը։ **Իսրայելն** ունի պետական ՇՄՈՒ համակարգ, որը գտնվում է նախկին «արդյունաբերական տնտեսության մոդելի» կապանքների մեջ՝ չնայած այն հանգամանքին, որ արտադրության շատ ճյուղեր արդեն ուղղություն են վերցրել դեպի «տեղեկատվական տնտեսության մոդելը»։ Ավելին, ՇՄՈՒ ուսուցման լեզուն գրեթե չի փոխվել։

ԱՄՆ-ում, մեծահասակների (որոնց մեծամասնությունը զբաղված է) հետմիջնակարգ մասնագիտական կրթությունը կազմված է բազմապիսի կրեդիտային և ոչ կրեդիտային, առկա և առցանց ուսուցում առաջարկող բազմաթիվ հաստատությունների ազգային համակարգից, որը ներառում է 1,157 համայնքային և տեխնիկական քոլեջներ, բիզնես և արտադրական ընկերակցություններ, միություններ և շահույթ հետապնդող կրթական հաստատություններ։

Տարածաշրջանի շատ երկրներում ՄՅԿՈՒ հիմնական իրականացնողները գործատուներն են (OECD 2003)։ Ձեռնարկություններն իրենց աշխատողների համար ՇՄՈՒ իրականացնում են արտաքին, ինչպես նաև ներքին դասընթացների միջոցով։ Աշխատողները նաև կարող են սովորել «աշխատանքին զուգահեռ», միևնույն ժամանակ կատարելով իրենց գործը։ Ինչպես արդեն նշվել է, 2006թ. գրեթե **երեք**

անգամ ավելի շատ ՄՅԿՈՒ իրականացվեց դրսում, սակայն բացարձակ հաշվով, ՄՅԿՈՒ-ն գրեթե ամբողջովին իրականացվում է աշխատավայրում (Եվրոպական Հանձնաժողով 2007դ):

ԵՄ-27 երկրներում ուսուցման մակարդակն ավելի բարձր է ծառայությունների ոլորտում՝ հանրային ղեկավարում, ֆինանսներ և ապահովագրություն, կրթություն և առողջապահություն, քան արդյունաբերական ոլորտում: Ուսուցման համար հիմնականում վճարում է գործատուն:

Ուսուցման մակարդակը ԵՄ Անդամ պետությունների միջև խիստ տարբեր է: 2005թ. **Ֆինլանդիան** և **Շվեդիան** առաջին տեղում էին աշխատատեղերում աշխատողների ստացած ուսուցման քանակով (50-60%): Իսկ սանդղակի մյուս ծայրում **Հարավային, Կենտրոնական և Արևելյան ԵՄ անդամ պետություններն** են, աշխատողների ընդամենը 20% ներգրավմամբ: **Բուլղարիայում, Պորտուգալիայում և Ռումինիայում** այդ ցուցանիշը 20%-ից ցածր է (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): Դանիայում, համընդհանուր ՄՅԿՈՒ-ի և կարողությունների զարգացման մեծ մասը կապված է աշխատանքի հետ (մասնագիտական է): Գործում է կոլեկտիվ բանակցային կայացած գործընթաց, որը կարգավորում է ձեռնարկություններում աշխատողների կարողությունների զարգացումը և մարդկային ռեսուրսների պլանավորումը: **Գերմանիայում** ավելի մեծ ձեռնարկություններն ունեն իրենց ներքին վարչությունները, որոնք զբաղվում են ՄՅԿՈՒ կազմակերպմամբ: **Նորվեգիայում** 2007թ. 28 մարդ նշանակվել է որպես, այսպես կոչված, «շահագրգռող գործակալ»՝ խրախուսելու տեղական ձեռնարկություններին, որպեսզի վերջիններս դիմեն ֆինանսավորման՝ աշխատավայրերում ուսուցում կազմակերպելու համար: Իսկ **Սլովենիայի** զեկուցում նշված է, որ «գործատուները բավարար շահագրգռվածություն չեն ցուցաբերում իրենց աշխատողների կրթության նկատմամբ»: Վերջերս **ԵՄ անդամակցություն ձեռք բերած երկրներում, Հարավ-արևելյան Եվրոպայի, ԱՊՀ-ի երկրներում և Վրաստանում** ձեռնարկությունները հիմնականում միկրո-ձեռնարկություններ են, շատերը՝ սպասարկման ոլորտի:

Աշխատավայրերում աշխատողների որակավորման բարձացման համար հատկացվող գումարները չափազանց սահմանափակ են: Ի լրումն, բազմաթիվ ավելի խոշոր ձեռնարկություններ չեն ցանկանում գումարներ ծախսել ՇՄՈՒ-ի վրա, այնպես որ պետությունն է շարունակում գերիշխող դիրք գրավել այդ ոլորտում:

Հիմնական ուղղվածությունը դպրոցներում իրականացվող նախնական ուսուցումն է: Վերջերս կազմված մի զեկույցում (Վիրտել և Գանի 2007) կարևորվում է ավելի շատ աշխատավայրերում կրթության իրականացման անհրաժեշտությունը, և գրեթե բոլոր զեկույցները արձագանքում են այդ գաղափարին: ԱՄՆ-ում, բիզնեսի կամ արդյունաբերության ճյուղերն են հանդիսանում առանց կրեդիտների, աշխատանքին առնչվող դասընթացների, սեմինարների և ուսուցման ծրագրերի ամենակարևոր կրթություն իրականացնողներն ազգային մակարդակում:

Բոլոր երկրները հղում են կատարում կրթություն իրականացնող առևտրային կազմակերպություններին, որոնք իրականացնում են աշխատանքին առնչվող ՄՅԿՈՒ, մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ՏՀՏ-ները, օտար լեզուները, բիզնեսը և կառավարումը: Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, առավել շարժունակության և նոր հնարավորությունների նպատակով ՄՅԿՈՒ-ի մեծ մասն իրականացվում է շուկայի կողմից, իսկ մասնակիցները վճարում են ծախսերի մինչև 80%-ի դիմաց: Սակայն կրթության իրականացման այս ձևը մի շարք մտահոգությունների տեղիք է տվել կապված ուսուցում իրականացնող բազմապիսի գործակալությունների կողմից տրվող վկայականների և դիպլոմների ճանաչման հետ:

Հանրամատչելի/լիբերալ ՄՅԿՈՒ

Հղումների Եվրոպական Շրջանակի կողմից ցկյանս ուսումնառության առանցքային կարողություններից վեցերորդը համարվել են «միջանձնային, միջմշակութային և սոցիալական կարողությունները, քաղաքացիական կարողությունը»: Սա սահմանվում է որպես «վարվելակերպի բոլոր ձևեր, որոնք անհատին զինում են սոցիալական և աշխատանքային կյանքին արդյունավետ և կառուցողական կերպով մասնակցելու կարողություններով, մասնավորապես հասարակությունների աճող տարբերությունների պայմաններում»: Ութերորդ առանցքային կարողությունը «մշակութային արտահայտությունն» է, սահմանված հետևյալ կերպ՝ «մի շարք իրավիճակներում մտքերի, փորձի և էմոցիաների ստեղծագործական արտահայտման կարևորության գնահատում» (Եվրոպական Հանձնաժողով 2005ա):

Սովորաբար, այս կարողությունների զարգացումը պատկանում է ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի բնագավառին, տեղական համայնքների և սոցիալական շարժումների շրջանակում:

Պետք է նշել, որ չնայած տարիների շարունակ տարածաշրջանում տեղ գտած քննարկումներին և շահերի պաշտպանությանը (լոբբինգ), այնուամենայնիվ, տարածաշրջանի շատ երկրներում ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ն դեռ իր տեղը չի գտել պետական քաղաքականության, կամ առաջնահերթ գործողությունների, կամ էլ ֆինանսավորման մեջ:

ՄՀԿՈՒ-ի թեման բոլոր տեսակի սոցիալական հարցերն են (օրինակ, ծերանալը, հանցագործությունը, շրջակա միջավայրը, առողջապահությունը, ժառանգությունը, ծնող դառնալը և աղքատությունը), ինչպես նաև մշակութային հարցերը (արվեստներ, արհեստներ, խոհանոց, պար, լեզուներ, գրականություն, լրատվություն, երաժշտություն, թատրոն) և քաղաքական հարցեր (համայնքային զարգացում, ընթացիկ հարցեր, մասնակցություն ժողովրդավարական կերպով, պատմություն, միջազգային հարաբերություններ, օրենքներ):

Ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ն գործառույթ է թե՛ որպես սոցիալական քաղաքականություն և թե՛ որպես սոցիալական շարժում և ունի մի շարք խնդիրներ, ենթադրյալ կամ բացահայտ, սկսած ակտիվ քաղաքացիական մասնակցության խթանումից, խտրականության մասին տեղյակ լինելուց, մարդու իրավունքներից և ժողովրդավարությունից մինչև անձնական, սոցիալական և մշակութային զարգացում:

Ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ն իրականացվում է բազմաթիվ միջավայրերում, ողջ տարածաշրջանով մեկ, այդ թվում՝ ֆորմալ կրթության ինստիտուտներում, սակայն, ավելի հաճախ, մի շարք այլ վայրերում, ներառյալ քաղաքային ցերեկային ավագ դպրոցները, կրթական ընկերակցությունները, հանրամատչելի համալսարանները, երրորդ սերնդի համալսարանները, եկեղեցիներին և պալատներին կից կենտրոնները, արհմիությունները, քաղաքական կուսակցությունները, մասնագիտական ընկերակցությունները, գործատուների միությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, պետական և մասնավոր թանգարաններն ու գրադարանները, համայնքը, մշակութային և ժամանցային կենտրոնները, լրատվամիջոցները և այս ցուցակը կարելի է շարունակել:

Լայնորեն ընդունված է, որ ներկայացուցչական դեր ունեցող կամ քարոզարշավներ իրականացնող ՔՀԿ-ները կարողանում են հեշտորեն ներգրավել նույնիսկ կրթությունից հեռու գտնվող մարդկանց և ,այդ իսկ պատճառով, շատ երկրներում

նրանք կարողանում են պետական ֆինանսավորում ստանալ և ՄՅԿՈՒ իրականացնել սոցիալական ոլորտից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող խմբերի համար:

Կրթություն իրականացնող կազմակերպությունների տարածվածության առանձնահատկությունները պատշաճ կերպով չեն քարտեզագրվել տարածաշրջանի երկրների մեծամասնությունում, հատկապես, օրինակ, ԵՄ-27+ երկրներում ՄՅԿՈՒ մասնակցության եղանակների տարանջատման լույսի ներքո:

Սկանդինավյան երկրներն ու Գերմանիան բացահայտորեն ընդունում են ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի դերը ակտիվ քաղաքացիական մասնակցություն և սոցիալական կապիտալ ձևավորելու, ինչպես նաև սոցիալական ներգրավումը և սոցիալական միասնականությունն ամրապնդելու գործում: Այդ իսկ պատճառով ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի պետական ֆինանսավորումը գերակա սոցիալական խնդիր է մի շարք Սկանդինավյան երկրներում: **Ֆինլանդիայում**, շահառու կողմերի հետ համատեղ կազմվել է մեծահասակների լիբերալ կրթության զարգացման պլան 2008-2012թթ. համար:

Սկանդինավյան երկրներում և Սլովենիայում երկարամյա ավանդույթ կա ժողովրդավարական ուսումնառություն և հանրամատչելի լուսավորություն տարածել խոշոր քաղաքային/գյուղական և ցերեկային ավագ դպրոցների, կրթական ընկերակցությունների և/կամ խմբակների միջոցով: Ժողովրդական ավագ դպրոցները (սրանք ավագ դպրոցներ են, որոնք իրականացնում են մեծահասակների կրթություն, առանց վկայագրման) նաև ուսումնառության ակտիվ միջավայր են **Ավստրայում, Գերմանիայում, Զուլնգարիայում և Նիդեռլանդներում: Կիպրոսում** գործում է մեծահասակների կրթության 300 քաղաքային և գյուղական կենտրոնների համապարփակ համակարգ, որը ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ է իրականացնում մասնակից բնակչության համար, որի 75% կանայք են: Լեհաստանում Երրորդ սերնդի մոտ 110 համալսարաններ, ավելի քան 25000 մասնակիցներով, տեղակայված են/գործում են բարձրագույն կրթական հաստատություններում, ասոցիացիաներում, մշակութային կենտրոններում, սոցիալական բարեկեցության ապահովման գրասենյակներում և խնամքի կենտրոններում, հիմնականում խոշոր քաղաքներում: Դասընթացները հիմնականում անցկացվում են մասնակից կամավորների կողմից և/կամ սերնդամիջյան փոխգործակցության միջոցով: **Սլովենիան** ևս ունի Երրորդ սերնդի համալսարանների ծրագիր: **Չունաստանում** արտակարգ իրավիճակներում կամավոր

արձագանքման հմտությունները ձևավորվում են ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի միջոցով: Միացյալ Թագավորությունը, ավանդաբար, ունեցել է լայնամասշտաբ, կես դրույքով «ոչ մասնագիտական», որակավորումներ չշնորհող մեծահասակների կրթություն, որն իրականացվել է պետական կամ կամավոր հիմունքներով գործող գործակալությունների կողմից: Այս գործունեությունը ընդլայնվեց 1990-ականների վերջերին, ինչը պայմանավորված էր ընդհանրապես կրթության ոլորտում մասնակցության ընդլայնման նպատակով այս ծրագրերի կիրառման քաղաքականությամբ:

